

Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

Ֆիլ. գիտ. թեկնածու

ՀԱՅ-ԽՈՒՍԱԿԱՆ ԹԱՌԱՐԱՆՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԸ
ՀԱՅ ԿՈՒԼՏՈՒՐԻ ՄԵջ

Մինչև այսօր ոչ ոք չի զբաղվել հայ բառարանագրության ուսումնասիրությամբ, որը մի առանձնահատուկ տեղ է գրավում հայ կուլտուրայի և առանձնապես հայերեն լեզվի դարձացման պատմության մեջ:

Այսօր մենք ամեն կերպ աշխատում ենք պարզել այս կամ այն, թեկուզ ավելի պակաս ուժիքավոր զբովի, նկարչի, երաժշտի, զերասանի և զբականության ու արվեստի այլ աշխատողների կյանքը, վերհանելով նրանց իսկական արժեքը, նշելով այն գերը, որ տվյալ ստեղծագործողը կատարել է իր ժամանակին. սակայն այս նույն որպատումները չեն կատարվում բառանագիրների նկատմամբ: Այս վիճակը բխում է նրանից, որ անտեսվելի է բառարանագրական աշխատանքների կուլտուրական արժեքը, ստեղծագործական կողմը: Բառարանագրությունն զիտվել է որպես տեխնիկական աշխատանք: Ցավոք պետք է նշենք, որ այսօր մենք գրեթե աննշան տեղեկություններ ունենք կ. Սարաֆյանի, Գևորգ Դպիրի, Մ. Բելոյանի և ուրիշ շատ բառարանագիրների մասին, անձնավորություններ, որոնք երկար տարիներ իրենց ուժեղը նվիրել են բառարանագրական գործին և ստեղծել արժեքավոր գրական կոթողներ:

Հայաստանում երկար տարիներ իշխել են պարսիկները, արարները, տաճիկները, հարեւն ենք եղել մի շարք ազգությունների, կամ գանազան ճնշումների հետեւանքով գաղթել մուսաստան, Լեհաստան, Եվրոպայի զանազան մասերը, Ամերիկա և այլուր ու հարաբերություն հաստատել աշխարհի գրեթե բոլոր ժողովուրդների հետ:

Մի կողմից մայրենի լեզվի ուսումնասիրման, մյուս կող-

մից՝ հարեան ժաղովուրդների հետ ունեցած սերտ կապը մեր գրականության մեջ ծնունդ է տվել արժեքավար բառարանների:

Մինիթար Աքրայի բառարանի տառջարտնում թվարկվում է այն «բազումք» պատճառները, որ թիւազրել են իրեն բառարան կազմելու աշխատանքները ձևանարկելուն:

Հեղինակը բերում է օրինակներ, ինչպես Շիկակարծ (կասկածանքով) շփոթել են «յեղակարծ» (հանկարծ, կարծիքով) բառի հետ և այլն: Թուանքեն լեզվի մեջ նույնպես երկար ժամանակ շփոթվել է օբունակությունը (օխալվել) բառը օպօնակությունը (կողմուրշվել) բառի հետ, օբյեկտիվ բառը օբխօնակ բառի հետ:

Հայ գրականությունը հարուստ է բառարանագրական աշխատանքներով՝ բառարաններով: Մայրենի լեզվի ու բարբառների և առնչված հարեան ժողովուրդների լեզվի հետ միայն առաջարկված բառարանների թիվը անցնում է 200 անունից, որոնց մեջ հանդիպում ենք այսպիսի բառարանների, որոնք իրենց էությամբ և գրարժեքով գուրս են զալիս հայ բառարանագրության սահմաններից ու գասկում ընդհանուր գրականության ամենաարժեքավոր բառարանների շարքը: Հայ բառարանների արժեքի մասին պրոֆ. Հ. Աճառյանը գրում է՝

«Բառարանական գրականությունը աղքատ չէ մեր մեջը Մասամբ հայոց ուսումնասիրությունը, մասամբ էլ մեր վաճառականական ընդարձակ հարաբերությունները եվրոպայի և Ասիայի զանազան ժողովուրդների հետ, ստիպել են մեզ սովորել բազմաթիվ լեզուներ, և այդ պետքը լրացնելու համար հրատարակվել են հուոց ի վեր բազմատեսակ մեծ ու փոքր քերականություններ ու բառարաններ՝ զանազան լեզուներից: Թիչ ազգ կա՝ որ մեր Հայկազյան բառարանի նման հոյակապ գործ ունենա և դեռ պետք է հիշ շեւ, որ սա բուն ձեռագրի համառոտությունն է, բուն ձեռագիրը վեց անգամ ավելի ընդարձակ է եղել և ծախսի մեծության պատճառով միայն համառոտն և վերածել են երկու հատորի:

Հայկազյանից դուրս ունենք նաև այլ բառարաններ՝ իստալերեն, ֆրանսերեն, անգլերեն, գերմաներեն, ուռւերեն, հունարեն, լատիներեն, թուրքերեն լեզուներով: Այսպիս է Զախշախյանի հայ-իստալերեն բառարանը, որ մի պատվական գործ է և նույնիսի իրը հայերեն բառարան շատ անգամ Հայկազյանից ավելի կարեռը է: Նորայրի ֆրանս-

հայերեն բառարանը ոչ միայն մի գանձարան է հայ լեզվի, այլև Գրանսերենի համար կատարյալ մի գործ Արժեքավոր գործեր են նաև Ազգերյանի անզլերեն բառարանը, Կոյլավի գերմաներեն բառարանը և այլն։¹

Մեղ մնում է պրոֆ. Աճառյանի այս արդարացի գնահատականից հետո արժեքավոր աշխատությունների թվին ավելացնել հենց իլին՝ պրոֆ. Աճառյանի «Արմատական բառարանի» տնօւնը, բառարան, որը ոչ միայն ընդդրկում է հայ լեզուն՝ սկզբից մինչև մեր օրերը, հայերեն բարբառներն ու ենթաբարբառները իրենց բոլոր նրբություններով, բացատրում է բոլոր բառերի ծագումն ու առումները, կրած ու թողած ազգեցությունները, այլև հոյակապ աղբյուր է նաև հարկան ժողովուրդների լեզվի ուսումնասիրման համար։

Բառարանային հսկայական գործ է նույնպես դոկտոր Սա. Մալխասյանցի, Ստալինյան մրցանակի արժանացած, քառահատուր «Հայերեն բացատրական բառարան»-ը, որը հանրագումարի ֆիբրում հայերեն բառարանների մեջ ամփոփված բառապաշտիք, պարունակելով հինգիբորդ դարից մինչև մեր օրերը (1936 թ.) ընկած ժամանակաշրջանի հայերեն լեզվի ավելի քան 110.000 բառ իրենց բոլոր առումներով, պահպանելով պատմական հաջորդականությունը, բառիմաստի զարգացման էվոլուցիան։²

Մինչ հայուսական բառարանագրությանն ու առանձին բառարանների և նրանց առումների կուրորեն գրանցումը չի, այլ նույնպիսի իդեոլոգիական վերնաշենք, ինչպես բառարանագրությունը և բոլոր մյուս գիտական դիսցիպլինները։

Բառարանագրությունը (Lexicographie) լեզվի մեջ եղու բառերի ու նրանց առումների կուրորեն գրանցումը չի, այլ նույնպիսի իդեոլոգիական վերնաշենք, ինչպես բառարանագրությունը և բոլոր մյուս գիտական դիսցիպլինները։

Բառարանագրությունը, այսինքն լեզվական նյութերի մշակումը և բառարան կազմելը, սերտորեն կապված է տվյալ ժամանակի գրականության և լեզվաբանության զարգացման

1 Հ. Կիրակոսյան, «Բառարան պարսկերեն-հայերեն», Նոր Զուղա, 1933 թ.
2. Աճառյանի 1919 թ. գրած տառչաբանից, էջ VII.

2 Սա. Մալխասյանցի և Հ. Աճառյանի բառարանների մտան անս իմ «Ըստ վիտահայ բառարանագրությունը» հոդվածը, հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադ. Լեզվի Խնամակութիւն գիտական աշխատությունների ժողովածու № 2:

հետ: Գրական արտադրանքների բաղմապիսությունն ու հարցաւությունը պահանջ են առաջացնում առանձին բացարողմեկնարանող բառարաններ ունենալու:

Յուրաքանչյուր հասարակարգ ու խմբավորում ունի իր հասուկ բառապաշտը: Այսօր մեզ համար մեռած են համարվում հազարավոր բաներ, որոնք զործ են ածել մեր նոտինիները: Փոքքի համար եթե թերթենք զրաբարի հարստությունն ամփոփող Հայկացյան բառարանը և համեմտահնք մեր այսօրվա բառապաշտը հետ, իսկույն ակնհայտ կդառնա, որ իր ժամանակից երբեմ ընտիր զրաբար, Մեսրոպյան շրջանի բառը կամ մռացության է տրվել և կամ վերտիպիվել է ու ստացել նոր անուն՝ նույն բանը պետք է տակ միջնադարյան հայերենի մտսին, որի լիակատար բառարանը այսօր չունենք մեր զրականության մեջ, իսկ միջնադարյան լեզուն իր բառապարարով ու ոմերով նույնութեարուած է եղել Նորայր Բյուզանդացին առուծ է:

«Զափաղանցություն չերեա ըսելս, որ երկհատոր Հայկացյան բառարանի ստվարությամբն Ստորին հայերենի աը (միջնադարյան—Գ. Գ.) բառարան մը կրնա կազմվել, այս չափ ճոխ է այս լեզուն բառերու, ոմերու, ձեերու և ստացվածոց ժամանմբ»¹

Նորայր Բյուզանդացին իր Գաղղիերեն-հայերեն բառարանում Ա. (Ստորին հայերեն) նիշի տակ երեան է բերում միջնադարյան լեզվի հարստությունների մի մասը և գրում: «Օրինակ մը տալու համար թնչ պետք է ըսենք գաղղիերեն սե սաբետ (ձիուն երկու ոտքի վրա ելնելը, աճ. շախ դալդըմաք) և թերետ սի cheval (ձիուն ոտքը երկաթ գածել աճ. նալ ուրժագ) բայերուն. մեզի ծանոթ զրաբարը չունի ոչ միույն և ոչ մյուսուն հավասարազորները, բայց Ստորին հայերենը երկու զեղեցիկ բայ կընծայե մեզի, սե սաբետի կամ ծառանալ, ferrere-ի կամ լուսնելը², և բերում է վկայություններ սատենագրությունից:

Ոչ միայն տարբեր հասարակացներ ու դասակարգեր ունենում են իրենց հատուկ բառույթը, այլև այդ բանը երևում է միենույն ժամանակաշրջանում ապրող տարբեր պրոֆեսիայից մարդկանց խոսվածքում, որի մասին խոսք կլինի հետագայում՝ մասնագիտական բառարանները քննելիս:

¹ «Փարձ», 1879, № 7—8, էջ 247.

² Նույն տեղ, էջ 248.

«Մեծ բառարաններ կազմելու պատմությունը ցույց է տուշիս, որ նրանցից յուրաքանչյուրը հանդիսանում է իր դարսաշրջանի դասակարգային ձգտութեարի արտացոլումը»¹ Այսպես օրինակ՝ «Ճարալեղու կոլեկտիվների (պետական, ցեղային, ժողովուրդների և այլն) մեջ եղած յուրաքանչյուրը շփում արտացոլվում է նրանց լեզվի մեջ, այսպես կոչված, փոխառությունների ձանապարհով։ Ժողովուրդների պատմության մեջ ռենուցիոն շրջադարձների ժամանակ նրանց լեզվի բառապաշարը հարստանում է շատ նորաբանություններով։ Եթե դրա հետ, գրական լեզվի մի տիպը փոխարինվում է մի ուրիշով, ապա բացի գրանից, բառական կազմից դուրս են ընկնում շատ այնպիսի տարրեր, որոնք ամենից ցայտուն արտահայտում էին մեռնող գառակարգի իդեոլոգիան»² և ճշմարիտ, այսօր արգեն մեր լեզվից դուրս են ընկել բոլոր «բաշխառած-ներն ու «կամելավկառ-ները, և նրանց տեղը գրավել են նորագույն բառերը»

Եվրոպական գրականության մեջ բառարանագրական տռաջին, առանձին աշխատությունների մենք հանդիպում ենք վերածննդի շրջանում։ «Դասական լեզուների բառարանագրությունը հատկապես զարգացման աստիճանի հասավ վերածննդի էպոխայում հումանիստների աշխատանքներում։ Հրատարակվեցին մեծ նկարագրական բառարան-գանձարաններ (thesaurus): Բառարանագրական աշխատանքը նոր եվրոպական լեզուներով գարդանում է ավելի ուշ»³

Մինչ առանձին լուրջ բառարանների հանդես գալը, գետնում, հույնների մոտ ընդունված է եղել գրքերի մեջ, լուսանցքներում ու տողանցքներում բացատրել խրթին բառերը (ցլոսա): Ֆիլոլոգիայի հատկապես այս ճյուղը ծաղկել է Ալեքսանդրյան էպոխայում։ Հետագայում ցլոսա-ի տակ սկսեցին հասկանալ ոչ միայն բացատրվող-մեկնաբանվող բառերը, այլ հենց մեկնությունը, բացատրությունը։

Նույն վիճակն է տիրում նաև հայ գրականության մեջ։ Հին ձեռագրերի լուսանցքներում ու տողանցքներում հանդիպում ենք մեկ կամ մի քանի խրթին բառերի բացատրության,

¹ Д. Ушаков, „Толковый словарь русского языка“, т. I, пред.

² БСЭ, том 36, стр. 284.

³ Նույն տեղ, էջ 285.

թոկ Շատագայում, 17-րդ դարից սկսած կաղմազում են հայերեն լեզվի տապագիր լավագույն բառարանները:

Բառարան կազմելու գործը, ինչպես վերևում տասցինք, տեխնիկական գործ չէ և միևնույն ժամանակ կապված է զըմագրությունների հետ Բառարանադրությունը լեզվաբանության այն ճյուղին է, որ գժվարությամբ ստեղծագործվում է և ոյությունյամբ քննադատվում: Անտ թե ինչ են առում բառարանագիրները՝ այդ մասին. «Եթե որևէ զատավոր խօստ պատիժ կատանա մեկին, թող զատազարտի բառարան հորինելում»¹ «Թէ զինչ է կազմել զբաղկիրք՝ ոչ ոք գիտէ, բայց միայն նա՝ որ յօրինեալ իցէ երբէք զնոյն»² Կամ «Բոլոր ընազավանների հեղինակները կարող են զովասանքների սպասել, մինչդեռ բառարան հորինողները բավականանում են, որ զերծ մնան պարագանքներից»:

Այս գժվարություններով հանգերձ 1621 թ. Միլանում լույս է անմնաւմ Rivola-ի հայ-լատիներեն բառարանը,³ որի մասին կենս գրում է,

«Միլոլայի բառարանը բազմաթիվ պակասություններ ունի, բայց և այդպես, պիտի համարվի երախտագիտառության արժանի մի զործ: Կազմել հայերեն լեզվի բառարան այն ժամանակներում, երբ չկար այդպիսի փորձ հայերի մեջ, անկառած մի մեծագործություն էր մանավանդ մի օտար մարդու նկատմամբ»:

Միլոլայի բառարանին հաջորդում են Վիլլոդի՝ լատին-հայերեն, Երեմիա վարդապետի՝ հայերեն, Ներսեսովիչի՝ լատին-հայերեն բառարանները, իսկ 1749 թ. լույս է անմնաւմ Միլո-

¹ Հայկական ՍՍԾ Մատենադարանի № 5925 ձեռագրի (13-14-րդ դար) ըբառք հոմերականից մեջ զրված է. — տոհալաշչեայ կամ ոննոն, իսկ վերևում ավելացրած գրաւակոն (էջ 25), կամ զերախարեիկ կամ ամենակալ-բաւանցքում՝ վերահսկանիկ (էջ 23). Նմանցուցանկը՝ լուսանցքում՝ մոլոեցուցանել (էջ 71) և այլն.

² Հ. Սքալիկեր, նշանավոր լեզվաբան (1540—1609).

³ Միլոլայի Արքա, «Բառպիրք Հայկական լեզուի», 1749 թ., առաջաբան, էջ 4:

⁴ Այս աշխատության մեջ մենք միայն կանգ ենք առնում ապագիր բառարանների վրա, իսկ ձեռագիր բառարաններն ավելի բազմապիսի են և ավելի մեծ հնություն ունեն: Բառարանային պատառիկներ են պահպանվել վեր 9-րդ դարից, իսկ ավելի կատարյալ բառարանային աշխատությունների հանդիպում ենք 11—13-րդ դարերին պատկանող ձեռագրերում:

⁵ Այս, «Հայկական մապագրություն», I հատոր, էջ 105:

թար Աբբայի Հայկաղյան բառարանը, որը քննադատական վերաբերմունքով է մոտենում իր աշխատանքին: «... Այլ յաղագս զրոց, յոցոց քաղեալ է մեր դրասո, ծանիր, զի ոչ հարեանցի խորհուրդով յարձակեցաք ի գրեանս, ժաղովել զբառո ի նոցանէ. զասն զի ոչ էին մեզ կամք՝ զբառդիրքս զայս խուլ անխտիր ամենայն բառիւք, զչարս և զբարիս ուռկանակերպ ամփոփելով. քանզի յայնժամ ոչ լինէր մատեանս այս բառդիրք, այլ՝ չարդիրք. և մեք իրը անազորոյն աղճատիչ լինէաք լեզուիս, քան պաշտպանիչ է¹».

Տպագիր այս տռաջին բառարանները հայ բառարանագրության հիմնաբարը հանդիսացան և հետազուում, մենք կտեսնենք, առաջացան հարյուրավոր մեծ և փոքր բառարաններ:

Այեքսանդր Սուխոտինը Դալի բառարանը իրավացիորեն համարում է «Թուսական բառարանագրության նշանագոր հուշարձանը»: Այս նույն միտքը անվերապահորեն կարելի է տալ Միհիթար Աբբայի բառարանին, որովհետեւ ինչպես ասկած է բառապերում»:

«Ուզի է նա բանասէրին,
Կանոն ուզղիչ հազներգողին,
Լոյս նշուլից՝ պուետիկոսին.
Ցուալ ապաստան՝ Հեգ համբակին»:²

Բառարանագրական պահանջները բավարարելու համար բառարանագիրը պետք է հմուտ լինի լեզվի (ու լեզուների) մեջ, որ կարողանա որոշել բառերի ճշտությունը, ուղղագրությունը, տարբերի հիմնական առումները երկրորդականներից և ի վիճակի լինի բացառքելու, պարզաբանելու բառի իմաստի փոփոխման ընթացքը: Բացի լեզվագիտությանն ու բառարանագրությանը ծանօթ լինելուց, յուրաքանչյուր բառարանագրից պահանջվում է վերին աստիճանի բարեխիղճ և հոգատար աշխատանք, որովհետեւ 200.000 բառ ունեցող բառարանի 200 լյազմումները արժեքագուրկ են անում ամբողջ աշխատությունը»:

Խոշոր արժեք ներկայացնող բառարանները ստեղծագործվել են երկար տարիների քարեխիղճ և քրտնաթոր աշխատանքի միջոցով: Վաղիմիր Դալը իր „Տոլковый словарь живого ве-

¹ Միհիթար Աբբայ, «Թասպիրք Հայկաղեան լեզուի», 1749 թ., I հատուք, առաջաբան, էջ 91.
² Նույն մեզ, էջ 22:

ликорусского языка" аշխаштиթյան վրա տքնել է 53 տարի Բառարանի առաջին բառը նա գրանցել է 1819թ. Պատերքուրդից Նիկոլաև գնալիս Ճանապարհին կառապանից լսել է „Замоложивать (пасмурность, заволакиваться тучами նշանակությամբ) և հենց ճանապարհի ցրառմն էլ գրանցել է իր ծոցաներում Նույնիսկ՝ երբ բառարանի բոլոր հասորներն արդին հրատարակված էին, նա լրացնում էր նորանոր բառերով՝ «Մանվանից մի շարաթ տռաջ, կաթվածի մի քանի հարվածներ ստացած, նա հանձնարարում էր ազգիան բառարանի մեջ մըտցնելու վերջին օրերը ծառայից լսած ևս չորս բառ»¹

Դալի աշխատանքը հսկայական գործ է. «Դա բանիմաց հեղինակի աշխատանք է, որն իրեն նվիրել է զործնականորեն ուսումնասիրելու ուսուց լեզուն մի որոշ հայեցակետով. զամի ամբողջ կյանքի բարեխիղճ աշխատանքի պառող է»². Դյուրին չէ հավաքնել ու բացատրել 200.000 բառ և 30.000 առակերքը՝ Դալը գիտակցում է այդ և առում՝ „Разве помру, а то кончу словарь свой».³

Երեք ուսումնական վարդապետներ հիսուն տարի են աշխատել Նոր Հայկապյան բառարանի վրա (1784—1836). Նորայր Բյուլանդացին իր զաղղիերեն՝ հայերեն բառարանի առաջարանում զրուժ է՝ «Այսպէս ուր ուրեմն հասեալ յամրոկ թշուառքիրան վաստակոյս, յոր ծախեցի զամս չորեքտասան (1866—1879) զերիտասարդութեան կենացած։ Պրոֆ. Աճառյանը իր Արմատական բառարանը ձեռնարկել է աշակերտական նստարանից։

Բառարանները ըստ բովանդակության կարող են լինել հանրագիտական, կենսագրական-պատմական և լեզվաբանական (словарь языка), ըստ տեսակի լինում են ընդհանուր, մասնագիտական, գվորոցական, ուղղագրական, աերմինաբանական և այլն։

Հանրագիտական բառարաններն ընդգրկում են ընդհանուր և մասնագիտական այն բառապաշարը, որոնք տվյալ լեզվի մեջ դրցածական են և ստանում են լայն մեկնաբանում։ Կենսագրական բառարանները լինում են ընդհանուր, տալով բիոգրա-

¹ А. Сухотин, „В. И. Даляр и его толковый словарь“, 1935 г., стр. 5.

² Я. Гродт, „Филологические разыскания“ 1876 г., том I, стр. 57.

³ В. И. Даляр, „Толковый словарь“, изд. IV. 1912 г., том III, стр. 1489.

Ֆիական տեղեկություններ բոլոր գործիչների մասին, և կամ մասնագիտական՝ նվիրված մարդկանց որոշ խմբի: Այս տեսակի մեջ հատուկ տեղ է գրավում գրողների բառարանը, պատմական բառարանը (անձնանունների), որ պատկերավոր կոչում են՝ համառոտ զրադարան: Լեզվաբանական բառարանները նվիրված են՝ համառոտ զրադարան: Լեզվաբանական բառարանները նվիրված են լինում կամ մի լեզվի բառերի ծագման ու նրանց արմատների, քերականական առանձնահատկությունների բացառությանը և այլն, կամ մի քանի լեզուներով, մի լեզվից մի ուրիշ լեզու թարգմանելու համար, ինչպես ուռւս-հայերեն, հայերեն-ուռւսերեն, ֆրանսերեն-հայերեն և այլն:

Հայերեն բառարանների շարքում ունենք հանրագիտական (Հ. Առաքելյան), ինստադրական (Հայկապյան, Տեր-Աստվածատրոյան) բառարաններ և հատկապես հայուստ ենք լեզվաբանական բնույթի բառարաններով:

Կարևոր ենք համարում նշել, որ մեր բազմատեսակ բառացանների շարքում ունենք նաև 1794 թ. Նոր Նախիջևանում հրատարակած Պողոս Թորոսյանի «Տաճկերենից-հայերեն համառոտ բառարանը» (պարունակում է շուրջ՝ 1800 բառ), որը գըրված է չափածո: Բերում ենք մի երկու քառյակ այդ բառարանից: —

«Ասլան առիւծ՝ գաղան զթոտ,
Այը է արջ՝ խիստ վավաշոտ,
Արապաճին է կառաւար,
Աշճի բառիկըն խորտակարար (էջ 13):
Շամտան ճըրագիւալ և՝ աշտանակ:
Շախան է խաղ՝ ծաղըն կատակ:
Շաթըն կարապետ սուրհանդակ,
Շէրպէթ ասելն՝ է օշարակ» (էջ 55):
Սէմէրճին է համետակար,
Սահաթըն ժամացոյց հայրիար,
Սողանըն որ է՝ սոխ կըծուաթեր,
Սապըռսըզ մարդըն անհամբեց» (էջ 73):

Հայերենի երկլեզվյան բառարանները առնչված են շուրջ 15 լեզվի, որոնց մեջ առանձնահատուկ տեղ են գրավում ուռւս-հայերեն բառարանները:

Երբ խոսք է լինում ուռւս-հայերեն կամ հայ-ուռւսերեն բառարանների մասին, մեր իրականության մեջ, մեծ մասը պատ-

կերացնում է Պետհրատի «Բուսա-Հայերեն նոր բառարանը», իսկ նախասովեական զրջանի համար Թաղրաշյանի բառարանները։ Մի քիչ ավելի տարածուն ընթերցողները հիշում են նաև Երեց-փոխյանի, Հովհաննիսյանի, Յաղորյանի բառարանները, մինչդեռ մեր ուսմերենին առնչված բառարանների թիվը հասնում է 40-ի։ Սուրեւ տալիս ենք այդ բառարանների ընդհանուր առաւտելը։

Բառարանի ակտուելը	Պահի անուն	Ո ր է ց	
		Նախասովե- ական զրջա- նում	Առվեական- շրջանում
Բուս-հայերեն ընդհանուր բառարան	15	9	6
» մահնագիր, բառարան	12	1	11
Բնդամենը	27	10	17
Հայ-ռուսերեն ընդհանուր բառարան	11	10	1
» մահնագիր, բառարան	2	1	1
Բնդամենը	13	11	2
Բուլուը միտուն	40	21	19

Այս բառարանների շարքում կան այնպիսիները, որոնց մասին չեն հիշատակում նույնիսկ մասնագետ լեզվաբանները, կամ եթե հիշատակում են այս կամ այն առնչությամբ, առանց աշխատությունը տեսնելու սխալ հայտարարություններ են անում։ Այսպիս՝ Ստ. Պալասանյանը խոսելով Կ. Պոպովի ոռուս-հայերեն բառարանի մասին, այդ աշխատության երատարակության թվականը համարում է 1830 թ.,¹ Երվանդ Շահազդղը իր «Մկըր-տիչ Էմին» աշխատության մեջ գրում է. «Դ. Պոպովը նույն 1832 թ. հրատարակել էր յուր «Բուս-հայկական բառարանը», այնինչ, իրականությամբ այդ բառարանը լույս է տեսել 1841 թվին։

Մոռացության են տրվել Ալամդարյանի, Խալդարյանի, Էմինի, Տեր-Արքհամյանի, Արագածյանի և այլ բառարանները։

¹ «Փորձ», 1877 թ. № 3, էջ 323.

Այդ բառարաններից մի քանիսն, անշուշտ, իրենց ունեցած մեծ պակասությունների պատճառով, ծննդաժ օրից գերեզման իջնելու վասնչին են հնթարկվել, մի մասն էլ մոռացվել են մերդեպի բառարանագրությունն ունեցած անուշադրության հետեւանքով:

Հայերեն բառարանների մեծ մասը, բացի ոռւսերենին առընչվածներից, կազմել են Մխիթարյան միաբանները կամ պոլսահայ ինտելիգենցիան: Այդ բառարաններն իրենց ունեցած իսուազը արժանիքների հետ միաժամանակ ունեն զգալի թերություններ: Այդ թերություններից ամենախոշորը, հատկապես Մխիթարյանների մոտ, կյանքից կտրված լինեն է: Մասնավորապես ոռւսահայ գրականության ստեղծած ժառանգությունը անտես է տառված այդ աշխատությունների մեջ: Այս հանդամանքը պատահական չե իհարկի, որովհետեւ բառարանը չենք անջատում իրեն՝ հեղինակից: «Դա մի ամբողջ կյանքի աշխատանք է, որ մարմնավորել է Դալի ամբողջ գործունեության հիմնական իրենքան, — ասում է Ա. Մ. Սուխոտինը, — իր բառարանուժ Դալը ոչ միայն բառարանագիր է, այլ նաև առաջին հերթին որոշ իդեոլոգիայի ներկայացուցիչ է, որին նա ծառայել է իր ամբողջ կյանքում, և որպես զրականացեալ է, և որպես հրապարակախոս և թերեւ, ավելի քան, որպես չինովակիք:»¹

Մխիթարյանները և արևմտահայ ինտելիգենցիան բառարաններ կազմելու ժամանակ աշքաթող են արել ոռւսահայերեն բառարաններում եղած, ոռւսահայ ժողովրդի սեփականությունը դարձած բառերը և իրենք նույնությամբ վերակերտել են իրենց աշխատություններում, համարելով իրենց կազմած նորաբանությունները: Մեր ասածը պարզաբանելու համար վերցնենք Փրանսերեն-հայերեն բառարանների զարդը կազմող և ընդհանուրապես որպես բառարան խիստ շահավետ և արժեքավոր նորացը Ն. Բյուզանդացու բառարանից մի քանի նմուշներ (տես էջ 204):

Բառերի այս համեմատական աղյուսակը կարելի է հարցուր ների հասցնել, բառեր, որոնք պետք է որ հաշվի առնվելին մեր բառարանագիրների կողմից և չհամարելին իրենց ստեղծագործությունը: Այդպիսի բառեր են նաև՝ անուրդ, մբնուրտ, մատենակարան, զրատուն, վերտառություն— ըստրամմա, սրախադարյուն, ամպիովանի, ծանրաշափ, բավիշ, զերմաշափ, շագենավ և ուրիշ շատ-

¹ А. Сухотин, „В. И. Даляр и его толковый словарь“, 1935 г., стр. 3

	Բյուզանդացի «Գրագիերեն- հայերեն» բառա- րան 1824 թ.	Նախքան Բյուզանդացին գործ է տձել	
		Արամարյան «Թուս. հայեր.՝ բնակ.» 1821 թ.	Երեցփոխան բնակ. հայեր.՝ բնակ. 1854 թ.
Դաշտացույց	Boussole	Կոմпас	Компас
Թքաման	Crachoir	—	Плевальница
Շոքորաման	Sucrerie	—	Сахарница
Բնութագուման	Naturaliste	—	Натуралист
Թեյաման	Théière	—	Чайник
Ջրանցք	Ru	Կանալ	Канал
Կեղծամ	Perruque	Պարик	Парик
Մավարութուզի	Carton	—	Картон
Հրաչտի	Pyromètre	—	Огномер
Սուրճ	Café	Կոֆեй	Кофе
Ժամացործ	Horloger	Часовщик	Часовщик
Բազմավանկ	Polysyllabe	Многосложный	Многосложный

բառեր, որոնք կապված են մեր անտեսության, մեր տորյայի հետ և վաղուց հետեւ ստացել են քաղաքացիական լայն իրավունք։ Ծառ գեղքերում միանգամայն սխալ կերպով կերտել են նոր բառեր, ինչպես՝ օրորոր—ջրազուվ (Բյուզ., էջ 299 թ.), իսկ Երեցփոխանը թարգմանել է ծովագուավ և ավելի ճիշտ է, որովհետեւ օրորոր-ը ծովի ջրերում է բնակվում։ Խուսերենում նույնպես ծովագուավ է բացատրված։ „Баклан—морской во-
рон.”¹ Նույն բանը կարելի է տուել նաև Հայկացյան, Առձեռն և այլ բառարանների մասսին, իսկ ինչ վերաբերում է «Առձեռն»-ից հետո հրատարակված հայերեն բառարաններին, նրանք կամ կրկնել են Առձեռնը և ավելացրել մի շարք «Կը» ճյուղին պատկանող բար-
բառային բառեր (Ս. Գարամաճյան—«Բառարան հայերեն լեզվի») կամ բառարանի մեջ են խցկել Ն. Բյուզանդացու կազմած նո-
րակերտ բառերը (Կ. Ուկյան, «Առձեռն բառարան հայ-գաղղիե-
քեն»), ինչպես՝ թքանոց, շաքարանոց և այլն։

¹ В. И. Даля, „Толковый словарь“, изд. IV, том I, стр. 101.

Պրոֆ. Հ. Աճառյանը նույնպես զերծ չէ այս թերությունից. նա ևս լիովին չի օղտագործել ուսւահայ լեզվական կուլտուրան։ Արժատական բառարանում կան բառեր, որոնք մեկ անգամ և այն էլ հաճախ, ըստ իրեն վկայության, սխալ գործածված բառեր են, մինչդեռ բառարանի մեջ (հատկապես՝ նոր բառեր բաժնում) չենք հանդիպում սառցարան, կայազոր և այլ բառերի Պրոֆ. Աճառյանը հիմք ընդունելով Բյուզանդացու, Փեղամալճյանի բառարանները, միանգամայն անտեղի կերպով որոշ բառեր կապել է նրանց անվան հետ, ինչպես՝ «Ծառատ—Թուխկարմաղույն» (ձի). Փրանս. եաւ (իրը նոր բառ, նորայր. բառ, Փրանսահայերեն 121 ամ), մինչդեռ իրականում այդպես չէ, այդ բառին հանդիպում ենք Արամեարյանի բառարանում „Հեծանի” բառի բացարության մեջ։ «Փեկոն ըստ Փեղամալճյան բառարանի նշանակում է, կաղամախի»,¹ մինչդեռ Փեղամալճյանից ավելի քան երկու տասնամյակ առաջ ունի Արամեարյանը „Եսկե”, բառի բացարության մեջ, իսկ նորայրը. Հետեւ բառի տակ համարում է իր հորինածը: «Տորդիկ—մի տեսակ թոշուն—իրեւ նորակերտ բառ ունի Նորայր Բյուզանդացին բառ, Փրանս. 619 ացիւն բառի, տակ»:² Արամեարյանի մոտ գրված է դրօձք—տորդիկ (թոշուն է): Իսկ դրօձքը հենց նույն ցիւն է:

Որոշ բառերի նկատմամբ հարգելի լեզվաբանը գրում է, որ Բյուզանդացին սխալ է, օրինակ՝ «Տամբուլ—Ճրհան» (Բյուզ. 962 թ), ունի Երեմիայի հավելվածը և Փեղամալճյան բառարանը, իսկ ուսւահայերեն բառարանների նկատմամբ այդ անալիզը և ճշշտումը չի արվում։ Հորիզոն բառի սասին Աճառյանը գրում է. «Ունի միայն Փեղամալճյան բառարան, նոր գրական բառ, որից նաև հորիզոնական»:³ Մինչդեռ հանդիպում ենք Արամեարյանի մոտ և ավելի առաջ ունի Ավգերյանը «Մայթ—փողոցի երկու կողմը՝ անց ու դարձի համար շինված նեղ սալահատակ, ունի միայն նորայր, բառարան ֆր. trottoir իրեւ նորակերտ բառ»:⁴ Այսինչ նույն նշանակությամբ մայթ բառին հանդիպում ենք Երեցիովիսյանի և ուրիշների մոտ։

Այսօրինակ պատճառներով մի շարք բառեր սխալ վերագրում-

¹ Հ. Աճառյան, «Արժատական բառարան», 5-րդ հատոր, էջ 277.

² Նույն տեղ, հատոր 6, էջ 1197:

³ Նույն տեղ, էջ 957:

⁴ Նույն տեղ, 4-րդ հատոր, էջ 387.

⁵ Նույն տեղ, էջ 791.

ան ստացել ու կամ տեղ չեն գտել մեր բառարաններում, ինչպես
մոռորակ (պետք—ջուլիսկի ճախարակ, կոճ), որ ունի երեց-
փոխյան Մենք այս բառը համարում ենք բարբառային բառ և
կտպում Երեմիայի «Մու—շոշափել» բառի հետ «Բակուղ-
խարազան», լախտ իմաստով հանդիպում ենք Ալամզարյանի մոտ,
իսկ պրոֆ. Աճառյանը գրում է, թե առաջին անգամ հանդիպում
ենք Զախշախյանի մոտ Հայտնենք նուն, որ այդ բառը Ալամ-
զարյանից առաջ գործ է ածել Ավգերյանը իր Փրանս-հայերեն
բառարանում:

Մի ուրիշ խնդիր ես Եթե անհրաժեշտություն էր Արմա-
տական բառարանում նշել այս կամ այն բառի առաջին անգամ
մը բառարանում գործածված լինելը, ապա նույնը պետք է կա-
տարվեր նաև ուռա-հայերեն բառարանների նկատմամբ, այս-
պես՝ ինչու չէր կարելի նշել, որ «հերոս» բառը առաջին անգամ
հանդիպում ենք Երեցփոխյանի ուռա-հայերեն բառարանում գե-
րօյ բառի տակ:

Փողովրդական լեզվի սպառործման ժամին Դալը տում է՝
язык народа, бесспорно, главнейший и неисчерпаемый род-
ник или рудник наш, сокровищница нашего языка, кото-
рый, на письме, далеко уклонился от того, чем бы ему сле-
довало быть».¹

Մեր բառարանագիրները հեղինակել են հունարենի, լատի-
ներենի, իտալերենի, ֆրանսերենի, անգլերենի, պարսկերենի,
տաճկերենի, բուլղարերենի և այլ լեզուների առնչված, երբեմն
նույնիսկ 3, 4, 6 լեզվան լավագույն բառարաններ։ Ուռասհա-
յերի կազմած բառարանները մեծ մասմբ ուռսերենին են վե-
րաբերում, կան միայն մի քանի այլ բառարաններ՝ գերմանե-
րեն, էսպերանտո, քրդերեն և այլն։ Զափազանց մեծ բաց պետք
է համարել, որ գործեր շարունակ հարեանում ենք վրաց ու աղըր-
քեջանական ժողովուրդներին և մինչև այժմ մի փոքրիկ բառարան
չունենք այդ լեզուների համար։

ՀԱՅ ՌՈՒՍԵՐԵՆ ԵՎ ՌՈՒՍ-ՀԱՅԵՐԵՆ ԱՌԱՋԻՆ ԲԱՌԱՐԱՆՆԵՐԸ

Հայ բառարանագրության մեջ հատուկ տեղ է գրավում
հայ-ուռասկան բառարանագրական բաժինը։ Այդ բաժինը հա-
րուստ է թե ընդհանուր թարգմանական, բացատրական բառա-

¹ В. И. Даль, „О русском словаре“, стр. 29.

բաններով, որոնց մեծ զեր են խաղացել ոռոսաց լեզուն սովորեցու դործում, և թե մասնագիտական ընույթի բառարաններով, որպիսիք իռջոր ծառայություն են մատուցել հայերենի մասնագիտական տերմիններ կերտելու գործին:

Հայուռուսական բառարանագրությունը խորն անցյալ ունի և բովանդակալից է ու բազմատեսակ, որն ինքնին ապացույց է արդ երկու ժողովուրդների սերտ կապի:

Դեռ վաղ ժամանակներից, իսկ ավելի ուժեղ 17-րդ դարից սկսած հայ վաճառականները հաճախակի շրջում էին Ռուսաստանի այս ու այն կողմերը և ուժեղ շփում ստեղծում ոռու ժողովրդի հետ Հայաշատ մշտական բնակավայրեր են դառնում Նըրմը, Դոնի, Վոլգայի ստորին հովիտները և կենտրոնական Ռուսիայի մի շարք քաղաքները: Հայ ժողովուրդը իր բախտը կապում է ոռու ժողովրդի բախտին, և ոռուներն լեզուն դառնում է այն լրաւավոր ուղին, որով ընթանալու է հայ մաքի մշտակայթի զարգացումը:

Ռուսաց լեզուն իշխող և խոշոր նշանակություն էր ստանում ոչ միայն Ռուսաստանում, այլև իր տերության սահմաններից դուրս:

Ահա ինչ է ասում այդ մասին ժամանակի խոշոր դեմքերից մեկը:

«Ռուսաց լեզուն, որ իշխողն է բռլոր լեզուների վրա, ոչ միայն իր տարածվածությամբ, այլև իր հարստությամբ մեծ է ըսուր լեզուների տառաջ ամբողջ Եվրոպայում... Եթե մի բան ճիշտ արտահայտել չենք կարողանում, պետք է ոչ թե մեր լեզվին վերագրենք, այլ մեր անշնորհքությանը, ով ժամանակամք խորանում է նրա մեջ, առաջնորդ ունենալով մարդու խոսքը, որպես ընդհանուր փիլիսոփայական հասկացողություն, նաև ակնում է անսահման լայն դաշտ, կամ ավելի ճիշտ ասած՝ պրեթե անձի մի ծովք»¹

Ժամանակի հայ գործիչները, մանկավարժները զիտակցում էին, որ հայ լեզվի, հայ կուլտուրայի զարգացումը ապահովելու համար պետք է աղերս ստեղծել ոռուսական կուլտուրայի, ոռուսական լեզվի հետ Միաժամանակ Ռուսաստանի նոր զաղթավայրերի հայ ընակչությանն անհրաժեշտ էր իմանալ իրենց ապահուան ավող ժողովրդի լեզուն, ծանօթանալ նրա կուլտուրային:

¹ Ломоносов, Сочинения, том III, стр. 250.

Օրտավուր ուժեղանում էր ոռուսիքին լեզուն իմանալու պահանջը, զգացվում էր բառարան ունենալու անհրաժեշտությունը, որովհետև ամեն ոք բառարանին դիմելով՝ կհասկանար իրեն համար անծանոթ բառը և կամ հայերենի միջոցով կսովորեր ոռուսիքին լեզուն:

Հայաստանում, պարսկական աիրապետության օրով գրված բառարանները մնացել են ձեռագիր վիճակում, մոռացված: Դեռ նորիքան ոռուսական աիրապետությունը, Հայաստանում կազմվել են ոռուսիքենին առնչված մի շաբթ գործնական ընույթ կըսդ բառարաններ, որնց մեջ հիշտակության արժանի գործ է Եղիշաղուր Տեր-Կարապետյան Առնջեցու «Համառուս բառարան» ի հայոց ի ոռուսաց լեզուա աշխատությունը:¹

Թուս-հայերեն և հայ-ոռուսիքին առանձին, ինքնուրույն տպագիր բառարանների մենք հանդիպում ենք 18-րդ դարի 2-րդ կեսին:

Այժմ քնննենք և ցույց տանք հայ-ոռուսիքին և ոռուս-հայերեն բառարաններից յուրաքանչյուրի տեղը հայ բառարանագրության պատմության մեջ:

Մեր նպատակազրած սահմաններից դուրս է բոլոր բառարանների մանրազնին ուսումնասիրությունը կտարեկ, մենք միայն պետք է զբաղվենք հայ-ոռուսական բառարանագրության զարգացման պրոցեսը ուսումնասիրելով և պարզելով այն ուղին, թե յուրաքանչյուր 10-ամյակում ինչ նորություններ են ներմուծվել հայ գրական և ժողովրդական խոսվածքի մեջ: Մեր առաջադրած նպատակներից դուրս է նաև զանազան գեղարվեստուկան, քաղաքական, մասնադիտական ու կամ դաստիրքերին կցված բառարանների մասին խոսելը: Ընդհանուր առմամբ պետք է ասել, որ զբանք բառարանային արժեք չեն ներկայացնում, մեծ մասամբ տրված են անսիստեմ, բացատրված են այս կամ այն բառի միայն այն առումները, երբեմն նույնիսկ սխալ որոնք գործածված են տվյալ երկի մեջ: Մյուս կողմից այդ բառարանները կազմված լինելով ոչ մասնագետ անձնավորություննե-

¹ Հայեական ՍՍԾ Մինիստրների Սովետին կից Մատենադարանը ձեռագիր № 6418:

րի ձեռքով, շատ ժամանակ չեն համապատասխանում բառարա-
նադրական տարրածական սկզբունքներին: Այս կարգի բառարան-
ները տնօննադատ կերպով օգտագործել են հրապարակի վրա
եղած բառարանները ու գրել այս կամ այն բառի բացատրու-
թյունը: Երբեմն լավագույն և բառիմաստը ճիշտ արտահայտող
ու ժողովրդականություն ստացած բառերի փոխարեն գրել են
հնացած կամ նորահնար արհեստական բառեր: Որպես օրինակ
մերցնենք միջնակարգ դպրոցի 7-րդ դասարանների համար կազմ-
ված ոռուերեն դասադրքի¹ մեջ եղած բառարանը, ուր „եակ“
բառը թարգմանված է՝ բաք, գաւ, ջրարկի: Այստեղ առաջին և
երրորդ բացատրությունները միանդամայն ավելորդ են: Վալեն-
կա—կանչականեր, ընկնանրապես մեր լեզվի մեջ, և այն էլ 7-ա-
մյակում, միանդամայն անհասկանալի է կամ (թաղիթ) բառը,
հետևապես ածանցված կանչակներ բառը դառնում է էլ ավել-
իլ անհասկանալի: Խրեbet բառը թարգմանված է ովնաշար,
լեռնաշարք: 7-ամյակի աշխարհագրության և ոչ մի դաստիքում
մենք չենք հանդիպում լեռնաշարքի, պետք է լինի լեռնաշարա,
որպիսի բառը բառարանում բացակայում է:

Թիչ առաջ ասացինք, որ նախքան ոռուական տիրապեսու-
թյունը, գեռ տամանամյակներ ու դար առաջ հայերն արդեն
զգում էին, որ միակ փրկությունը՝ դա իրենց մերձավոր հարեան
հղոր Ռուսաստանի հետ կապվելն է, որը նշ մքայն կապահովվի
ժողովրդի անտեսական-քաղաքական վիճակը: Այս դուռ կրա-
նա կուլտուրայի ու դիտության գարգացման համար:

Հայաստանի և հայերի բախտը Ռուսաստանի հետ կապելու
խնդիրը ավելի ուժեղանում է 18-րդ դարի 2-րդ կեսին:

Ահա հենց այդ ժամանակներում Գետերբուրդում (Աենին-
գրադ) 1788 թ. օգոստոսի 1-ին լույս է տեսնում առաջին հայ-
ոռուերեն և ոռուհայերեն բառարանը՝ «Դիրք որ կոչի բանալի
գիտութեան աշխատությունը»²

1 Կ. Այզար, Տ. Իօաննեսյան.—«Книга для чтения для VII класса
неполной средней и средней нерусской школы», Ереван, 1941 с.

2 1800-ական թվականներին հովհան Բատենաշվիլին այս աշխատու-
թյան հայ-ռուսերեն բաժինը լրացրել է նաև վրացերեն և արաբերեն թարգ-
մանություններով: Ձեռագիրը պահվում է Թբիլիսիի Գետական Թանգարա-
նում: Այս անդեկությունը մեզ հայտնեց պրոֆեսոր Մելիքսեթ Բեկը, որին և
հարոնում ենք շնորհակալություն:

Դրքի վերնողիւը արգեն վկայում է, որ այս գործը սոսկ բնապարան չէ, այլ «Բանալի գիտութեան», որ «Անսի սա ընդ իւր մասնաւոր այբբենարան, մասնաւոր բառարան և ըսկզբունք քաղաքական ուսմանց, արտիետ և թարգմանեալ ի նուսաց լի- զուէ ի հայ բարբառ, և ի Հայոց լեզուէ ի ուսւաց բարբառ»:

«Բանալի գիտութեան» զիրքը ինքնուսույցի հիմունքներով է կաղմած, արված է նախ «Այբուբենք բոլոր գրաց հայոց և ուսւաց», «Անուանք տասից ուսւաց ընդհայոց», ապա, «Հետեի միավանկ բառ ուսւաց ընդհայոց», և այսպես երկվանկը հայ- վանկ, քառականկ և այլ բառերի ուսւուցում:

«Բանալի գիտութեան» բառարանի բառարանադրական քննությունը կատարելուց առաջ աշխատենք պարզել, թե ինչ ազբյուրներ է ունեցել հեղինակը:

18-րդ դարի 80-ական թվականներին հրատարակված էր Միկոլայի հայերեն-լատիներեն (1621 թ.), Ներսեսովիչի լատինե- րեն-հայերեն (1695 թ.), Գիլոզի լատին-հայերեն (1710-1714 թ.թ.), Երեմիա վարդապետի բառդիրք հայոց (առաջին հրատա- րակությունը 1698, երկրորդ հրատարակությունը՝ 1728թ.) բառա- րանները, նաև Միհիթար Աքքայի եռահատոր Հայկազյան բա- ռարանը, որոնցից «Բանալի գիտութեան» հեղինակը կարող էր բառանյութ ընտրել, և իսկապես մենք հանդիպում ենք մի շարք բառերի, որոնք գոյություն ունեն միայն այս ու այն բառա- րանում, ինչպես «Խաւիզ—պարտեղ, բանջարանոց» իմաստով ու- նի Երեմիա վարդապետը¹, կամ «Կորդին—համետ, թամբ» իմաս- տով՝ միայն Միկոլան²: Նույն միտքը կարելի է հայտնել նաև ուսւական բաժնի վերաբերյալ, որովհետեւ հրատարակված էր Պ. Բերինդի „Լեксикон славяно-русский“, կիսի առաջնորդ Եվգենիի „Краткий словарь славянский“, Գելտերգովի (1765, 1771), Միզզեի (1784) ուսու-գերմաներեն և գերմաներեն-ուսու- սերեն, Նորդասետի երեքլեզվյան, Վոլչկովի չորսլեզվյան և այլ բառարաններ, որոնք կարսղ էին ուսւական բաժնի բառապա- շարը հայթայթել հեղինակին, սակայն «Բանալի գիտութեան» գիրքը կաղմած է մեծ մասամբ անտես առնելով այդ աշխա- տությունները: Աշխատության հեղինակը աշխատել է ընդգրկել

¹ Հ. Անայան, «Ազմառական բառարան», 3-րդ հատոր, էջ 445:

² Նույն տեղ, էջ 1367:

ժամանակի առօրյան, խոսակցական լեզուն ինչպես հայերերում, նույնպես և ոռւսերենի նկատմամբ:

«Բանալի գիտութեան» բառարանի հայ-ռուսերեն բաժինը ունի մոտ 2000, իսկ ոռւս-հայերենը բաժինը՝ 2500 բառ-հոդված՝ մեծ մասամբ ժողովրդի կենցողին, առօրյա կյանքին վիրաբերող բառեր, ինչպես՝ արեք, տպարակ, ազատ, ախտ, պինդ, պըդավել, շագանակ, զօկ, նախիր, արիստ, գավառ, գավազան, ծիրան, ձուկ, կաղամբ, պարտեզ, կամ արբuz, բյալօլ, օրեց-կա, օրտօրաց, ցրյա, ցրյա, չայ, րեսա և այլն:

Որ «Բանալի գիտութեան» գրքին որպես աղբյուր ժողովրդական խոսակցական լեզուն է հիմք ծառայել, որտեղ առաջին և յավագույշ ապացույցը հեղինակի աշխարհաբարամութ լեզուն է, որ գործ է ածվում գրքի զրուցարության բաժնում:

«Ուր ևս զնում հրամանքը այդպես կանուխ:

Ես զնում եմ գլուխումնաւ Կամ՝

«Հրամանք ինչ տեղ կուկենաս այն ժամանակ, որ
նու տեղու չկինի:

— Ի՞ն քեռուս մօդ:

— Ինչ տեղ է կենում նու:

— Կարմիր դասն մօդ:¹

Երկրորդ ապացույցը ժողովրդական բառերն ու գարձվածքներն են, որոնցով լիքն է «Բանալի գիտութեան»-ը, ինչպես՝ քուկ, պիեղ, քամակ, շամբալոր, աֆլար, կամ բահրու, վինիպա, զօհու, ազատ, կանուրա (կոնուր), աբու (օբու), ու կամ բառերի միայն խոսակցական լեզվի առումներն է արփած, ինչպես՝ «Ազարակ-սելո». բացակայում է անդաստան (поле), կալվածք (поместье) առումները: «Ազար-սվոբոդնայ» չկա բառի ազնվական (дворянин) և այլ իմաստները կամ «ածել-ունակ», «անբան-բեզծելին», «բան-դելօ»²:

Աշխատության հեղինակը օգտագործել է նաև խոսակցութեան լեզվի մեջ եղած օտար բառերը՝ բարօւր, (պրսկ, վառուր), աշխատա (պրսկ, խոհանոց), չափուց (թրք, մուրճ), բաղչա (պրսկ, պարտեղ), դափմ (արք, ամուր, կանգուն), բիրար (թրք, պղպեղ), սուրա (թրք, հոտ), եկանեկ (թրք, նժույզ) և այլն:

¹ Կ. Սարգսյան, «Դիրք որ կոչի բանալի գիտութեան», էջ 245, 251:

² Զրուցարության բաժնում ժողովրդական առումներից երեմն կատարում է զեղումներ. օրինակ՝ «բան» բառը հասկանում է խոսք, թեմա. «Անհնայն աշակերտի բան այնպես հատուկ ուղղում է—всякого ли ученика течь» (ընդգծումը մեր՝ կ. Դ.) особливо поправляет».

Երբորդ ապացույցը՝ բարբառային ուղղագրության պահպանումն է: Ճիշտն ասոծ՝ ուղղագրական տեսակետից այս գիրքը սխալներով լիցուն է, երբեմն նույն էջի վրա հանգիպուժ ենք միենույն բարին տարբեր ձևերով գրած՝ սուպ—սուփ (էջ 248), զեկումմեր—դեմամմեր, զաջ—զան, կնօջ—կնոչ, յալաչադրի—առաջնորդ: Այսօրինակ սխալների տոկայությունն էլ ինքնին վկայում է, որ բառարանի տղրյուրը ժողովրդի խոսակցական լեզուն է եղել, որովհետև միենույն վայրում, նույն ժամանակում, նույն բարբառով խոսողների խոսվածքի մեջ էլ լինում են նկատելի զանազանություններ. օրինակ՝ Երևանի Շահաբթաղամասում ասում են անծուծկ, ալաշ, կոնդում՝ անցուց, ալաչա, իսկ Շնթաղում (Շնն-թաղ) այս երկուսի միջին տեղն է բանում՝ անծուսկ, անսուսկ, հետեալես, ժողովրդական լեզվից հեղինակի հավաքած կամ լսած բառերն էլ կարող էին այս կամայն կերպ լինել:

Ի գեալ, նույն վիճակն ենք տեսմում աշխարհաբար գրական լեզվի կազմավորման շրջանի գրողների մոտ: Խաչատուր Արուվյանի երկերում սովորական բան է անկաջ—ականջ—անկան, տանին—արնին, բիին—բեյին, զար—զափ, ետ—եղ, ասեցին—ասցին, դաստա—դասրա, լարչին—լափչին, կրնեմ—կրնեն, աղչիկ—աղջիկ—ախչիկ և այլն ձևերի գրությունը:¹ Նույնը նկատվում է նաև Նալբանդյանի մոտ:

«Բանալի գիտութեան» աշխատության մեջ երբեմն ուղղակի կապակցություններ են արգած, ինչպես՝ հայ-ուսուներեն բաժնում՝ «Ամենայն զօրութենէ մտածել—սցլубляться», «Անկանին եղջերաց եղանց—линяние рогов оленых», «Անցեալ երբորդօր—третьего дня», «Յաւելում ջուրց—наводнение», «Անձրե զայ—дождь идет», «Երբեմն նույնիսկ միացած՝ որացիքն—кроме вас», «Էղապանի—голубка», կամ ուսւահայերին բաժնում՝ фиолетовой цвет—ծիրանագույն կամ ծիրանառանդ (այժմ՝ մանուշակագույն), „Хитрой вымысл—խորին մտածումն», „С оружием наступить—հրացանաւ մարտնչիլ», „рыбы мечут икру—ձկունք ածեն ծուղպ կամ խաւիար և ընդակառակը, որոշ բառեր արոհված են մասերի՝ չորեք շաբար (среда), հինգ շաբար, եօրն երրորդ ժամ և այլն».

¹ Գ. Գալապարյան, «Բառարան Խաչատուր Արովյանի երկերի», Երևան, 1947 թիվ:

ինչպիս նշեցինք, «Բանալի գիտութեան» աշխատության բառարանը հիմնականում կազմված է ժողովրդական խոսվածքի հիման վրա:

Հեղինակը նպատակ է դրել օգնել «Մանկանց և ամենից, որը ունին զիարօտութիւն և զպիտոյս մեր հարեան մեծ ժողովը» ի եղուն սովորելուն, այլ կերպ ասած՝ գիտության և զարգացման դաներ բանալու հայ ժողովրդի առաջ:

Այս աշխատությունը երբ քննում ենք բառարանագրական տեսանկյունով, հանդիպում ենք նկատելի թերությունների, նույնիսկ որոշ բառերի զիմաց չի արված ուռւսերեն թարգմանությունը, օրինակ՝ սողակ կամ պիւլպու (էջ 111):

Բառարանում չի պահպանված այրենական հաջորդական նույնությունը: Գրքի 28-րդ էջում իրար հաջորդում են 1 (12) անպարտ մարդ, 2 (5) անհամբերութիւն, 3 (11) անուզլա, 4 (8) անհոլովելի, 5 (1) անարատ, 6 (7) անհաշտ, 7 (9) անշարժ, 8 (2) անդէտ, 9 (10) անշուտափութ, 10 (3) աներկբայելի, 11 (4) անհամբեր, 12 (13) անքուն կամ աննինջ, 13 (6) անհանդիսական:

Այս առաջին բառարանում հանդիպում ենք բառերի, որոնք հատուկ են միայն «Բանալի գիտութեան»-ը: Այդօրինակ բառերի մի մասը կարելի է վրիպակ համարել, բայց կան բառեր, որոնք գործ են ածվել մեկից ավելի անզամ՝ թեղթ, թեղա,² ձուղպ, ծուղպ: Մենք համոզված ենք, որ այդ բառերը իր ժամանակին գործածական են եղել Աստրախանի քարբառի մեջ, որով խոսելիս է եղել Ռուսաստանի հայության մեծ մասը:

«Բանալի գիտութեան» բառարանը հետապնդում է նաև թարգմանելի լեզվի ուղղախոսության օրենքները սովորեցնելու նպատակին: Հեղինակը թարգմանվող յուրաքանչյուր բառ դրում է թարգմանած լեզվի տառադարձությամբ, ինչպիս՝ արևածագիկ—արևածագիկ—պուլունակ, սովիպատ կամ սովեկուր—воскепат կամ воскекур—в золото одраненоий, կամ ուռւսերեն բաժնում՝ հեշտացածունակ, անխնայ, անոզորմ, ուսունական պօրօիք—գան կամ ծեծ:

1 Փակազմերում տրված է այրենական գառապիրության ճիշտ կարգը:

2 Պրոֆ. Ամառյանը ճիշտ ձեզ լինդունում է թեղթ: Մեզ թվում է, ոյք բառը պետք է ընդունել որպես բարբառային բառ քեզտ ձեռվելու ինչպես և գործ են ածել Ալամբարյանը Երեցքությանը և ուրիշները:

Աշխատության վերջում արված է զրոցատրություն և զառախարակչական իրատիներ ու մտքեր, ուր նեղինակը իր օրինակող ուսուցանում է չծուլանար, լինել աշխատասեր: «Ես հրամանոցդ շատ անգամ ասացեալ եմ՝ թէ ծուլութիւն մայր է ամենայն արատութեանն, ածուլութիւն է վատ ուսուցիչ» (Էջ 261) և ընդհակառակն, «այր իմաստուն յամենայն ժամ կարող է գտանիլ յաշխատանս» և «որ սովորէ աշխատելոյ՝ նման զիւրինք են աշխատանիք» (Էջ 266):

Մուսական կուլտուրայի գաները բանալու առաջին բանամին կազմել է մի համեստ և զարգացած օրիորդ՝ ԿղեռպատրաՄովսեսի Սարաֆյանը:

Կղեռպատրա Սարաֆյանի կենսադրությունից մեղ քիչ բան է հայոնի, նրա աշխատությունից այն եղրակացության են զալիս, որ նա Աստրախանի հայերից է: Աշխատության բոռապաշարի մեջ հանգիղութ ենք նըրությունների, որոնք հատուկ են Աստրախանին, օրինակ՝ ձկների վերաբերյալ բառարտնում կան տասնյակ բառեր ու կապակցություններ: Նույն շրջապատի ռուսկան խոսվածքի մասին վ. Ի. Դալը իր „Օ նարечиях русского языка“ հոդվածում գրում է. «Այստեղ (Աստրախանում—Դ. Գ.) կենարունացած են հորավարեկայան նավազնացությունը ու ձկնորսարանները, որոնք կազմել են մի ամբողջ արդյունաբերական լեզու, որն համարյա անհայտ է Բուսաստանի մասած մասերում»:¹

Կ. Սարաֆյանը ուսումնական կուլտուրայի հզորությունը պիտակցելու հետ միաժամանակ հանդես է գալիս որպես ջերմ հայրենացեր:

«Այս է առաջին պարտականութիւնն մարդոյ՝ որ ծառայէ իւր հայրենիացնա: Նա հարց է տալիս. «Չի լինիլ փոշիմանութիւն (որոշութեան) հրամանոցդ՝ երբ հրամանքդ չես կարող երբեք, նորա ոչինչ ծառախոթիւնն ցոյց-տալ» և պատասխանում: «Ես ինքս ինձ անտես կառնէի, եթէ զտանէի ինձ ի մէջ այտպիսի բանի» (Էջ 255):

Սարաֆյանը գիտակցում է, որ այդպես դատելու հետ, պետք է գործնականում էլ այդպես լինել «... յոյժ բարւոք եւ գատում՝ ապա այտ չէ բաւական, հետեւիլ ընդ այն, և ընթանալ

¹ В. И. Даль, „О наречиях русского языка“, стр. 66.

հարկե» և բայականչում՝ „Я вас уверяю, что моя чувствительность не окончится, как с моего жизнью”.

Կ. Սարաֆյանի աշխատությունից չորս ամիս հետո, նույն վայրում՝ Պետերպոլսում, 1788 թ. դեկտեմբերի 2-ին լույս է տեսնում «Թիրք որ. կոչի շաւիզ լեզուագիտութեան» որարեալ մանրազնին ուղղագրութեամբ ի Նոր Զուղայեցի ազնուատուն մերնդոյն Խալդարեան յառաջասիրեալ ազնիւ. Խոջամալի որդիի¹:

Եթե Սարաֆյանի «Բանալի գիտութեան»-ը, որոշ առումով, ինքնուսույցի բնույթ էր կրում, ապա Գրիգոր Խալդարյանի, կամ նրա անունով հրատարակած «Շաւիզ լեզուագիտութեանը» սոսկ հայ-ուսուերեն բառարան է:²

Գ. Խալդարյանի բառարանը հետահեշտան հրատարակություն է, հրատարակել է կինը՝ Կատարինե Զաքարովնա: Գրքի առաջարանը գրել է Թադևոս Վարդապետ Պոլսեցին, մի ճոռու լեզվի տեր մարդ:

Հառաջարանում ասվում է. Գրիգոր Խալդարյանը տեսանում է, որ Խուսաստան գուղթող իր համազգիները բալուսովին չփառեն, լրասավոր սուսների պանծալի և ճոխ լին դուն, ճնա եռանգուա սիրով ձեռնամուխ եղեալ ի գործ օգտակար՝ և բազմաց համբուրելի՝ սկսաներ ստեղծարանել զմեծաց գովութեանց արժանաւոր զտետրակ հարկեսը բառեց՝ պերճաբան լեզուին Խուսաց թարգմանարար ի մեր բարբառ:՝³

Առաջարանում Թադևոս Պոլսեցին գրում է, որ բառարանը անվանեցինք «Շաւիզ լեզուագիտութեան», որովհետեւ՝

«Զի ըստ շաւիզն հետուաց՝ ընթացողացն յառաջադրոյն՝ ունի հանել զհետեղողն ինքեան՝ ի յաւզիցն և ի յարքունականն ալողոտայ՝ կատարեալ իմաստից և պերճ բարբառոյն Ռուսաց»:³

Խալդարյանի աշխատությունը, որպես բառարանային աշխատանք, ավելի կատարյալ գործ է: Հիմնականում հեղինակը օգտագործել է հայ լեզվի մեջ եղած լավագույն բառարանները: Այդ աշխատություններից հեղինակը վերցրել է նույնիսկ այն-

1 Խուսական բառարանագրության պատմության մեջ որպես առաջին հայ-ուսուերեն բառարան հիշատակվում է Գ. Խալդարյանի բառարանը:

2 «Շաւիզ լեզուագիտութեան», առաջարան, էջ Բ:

3 Նույն տեղ, էջ Ժ:

ոլիսի բառեր, որոնք թիրես բանաստեղծական հանդավորման համար են եղել կտղմած, ինչպես՝ Ռարդոն—ցուլ, գալազան (հեր), ուկայ—անխելք, ուսի—հանապարի, ուստ—առատ, նոխ, շատ (երեմ.), բախ, բամ, ւիվանդ, ւիքական, ւիք և այլն:

Խալքարյանի բառարանի բացարարությունները հետեւյալ ձևով են՝ Ազգ—նացիւ, նարու—նացիա, նարու—նացիա, նարու—նացիա:

Այս բառարանը, որի սկզբում գրված է «Բառք ընտիրք՝ Ազգիս Հայոց՝ և պանծալի լիզուրն Խուսաց համառօտապէս զէմը ընդպէծ միմիանց թարգմաննեցեալքը»,¹ նախորդի հպմիմատությամբ չունի հասուկ անուններ, ժողովրդական բառեր, խուսափել է նաև օտար բառերից: Բառարանում՝ որոշ բառեր արված են և գոյտեան, և ածական ձեերով՝ ագահ, ազահուրյուն: Խալքարյանի բառարանը ստուգարանական անսակեաց անբավարար է, օրինակ ազահ թարգմանված է չկոյո՞յ: Բառարանում ավելի ակներեկ են գրաբարյան բառերը:

Այս համառատ ուրիշագծումից նկատեցինք, որ առաջին հայ-ռուսերին և ռուս-հայերեն բառարանները կազմելիս հիմնական շեշտը գրվում էր ծանոթացնելու ռուսական գործնական խոսակցական լեզվին: Մեր նշան աշխատություններից և ոչ մեկը չէր հետապնդում բարձր գիտական նպատակներ: Հայ ժողովրդական լեզվի, բարբառների և ենթաբարբառային խոսվածքի օգնությամբ մեր առաջին բառարանագիրները նպատակ էին դնում հայկական անձուկ միջավայրից գուրս գալու զետի ռուսական լեզվի զարդացած ու «պերճ պողոտան»:

ՀՅՅ. ՌՈՒՍԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ 19. ՐԴ ԴԱՐՈՒՄ

19-րդ դարի արևածագին հայ և ռուս ժողովուրդների հայրերությունները մտնում են նոր հունի մեջ: Խուսական միապետությունը դարասկզբին ամրապետելով Վրաստանը, շարունակում էր շարժվել դեպի Երեանի և հարեան խանությունները:

Հայ վաճառականության համար ավելի լայն դռներ էին բացվում Ռուսաստանի բազմաթիվ շուկաներում: Ռուսերեն լեզուն գործնական կյանքի լեզու էր դառնում հայ վաճառականի համար: Այդ պահանջը բավարարելու համար 1821 թ. Մոսկվա-

¹ Խույն տեղ, էջ 1:

յում Հարություն քահանա Ալամդարյանը լույս է ընծայում մոտ 9000 բառ պարունակող «Համառօտ բառարան ի Ռուսաց լեզուէ ի հայու»:

Ալամդարյանի հիմնական նպատակն է տալ մի գործնական բառարան, և իսկապես մենք հանդիպում ենք կրոնական (երբեմն նույնիսկ երկերպ գրությամբ՝ ավա, աբա) ու վաճառականական շատ բառեր:

«Հայկագունք բնակեալք ի Ռուսսիայ թէն ի բազում իրս և մանաւանդ ի վաճառաշահութիւնս վարին բարբառով Տէրութեանն, սակայն ցարդ ոչ ուժէք փոյթ եղեւ ձեռնարկել ի կազմութիւն, բառարանի առ դիւրութիւն համբակաց»¹:

Երկեղիյան բառարանները քննելիս նախ պետք է դիտենք յուրաքանչյուր լեզվի մասը՝ բառապաշտը առանձին, ապա թարգմանչական հաջողությունը ու յուրաքանչյուր բառարանի նկատմամբ ողեաք է աշխատենք նշել նախորդների նկատմամբ ունեցած առավելություններն ու թերությունները:

Ալամդարյանի բառարանը կարելի է որպես ուռահայերեն առաջին բառարան համարել, այն հաշվավ, որ «Բանալի գիտութեան» բառարանը և ամբողջ աշխատությունը, ինչպես ասել ենք, որոյ չափով ինքնուսույցի և դասագրքի կոչում ունի:

Ալամդարյանի բառարանի ուռահական բաժինը իր վաճառականական, կրօնական բառերի կողքին ունի նաև բավականին հնություններ՝ աճյուղ աշխատությունը, ինչպես ասել ենք, որոյ չափով ինքնուսույցի և դասագրքի կոչում ունի:

Բառարանում հանդիպում ենք վաճառականության, առևտրի և շուկայական գործարքներին վերաբերող բառերի՝ торгаю, торговля, торгую, торгуясь, торг և այլն: Առևտրի վերաբերող բառերը ունեն մանրամասնություններ ոչ միայն արված են գոյական ձևով, այլև ածական, բայական ձևերով, մի հանգամանք, որ հակասում է հեղինակի առաջադրած սկզբունքներին Հեղինակը նպատակ ունի համառոտ բառարան տալու. «Մըսկինակ ոչ էր ինձ կամ ձեռնարկել ի կազմութիւն լիակատար Բառարանի, վասն այսօրիկ զուն դործեցի զյաճախ գործածական բառ և եթ ժողովել յայս տեսրակ և ըստ չներելոյ պէսպէս պարագայից խոյս ետու յայլայանդ իդական կոչեցեալ անուանց, արականօքն միայն շատացեալ»²:

1 Յ. Ալամդարյան, Համառոտ ուռահերեն-հայերեն բառարան, առաջաբան, էջ 1:

2 Նոյն ակղ:

Ալամդարյանը կառված է իր ժամանակի կյանքին ժողովը կանգանական, բարբառացին բառերը նրան խորթ չեն: Ինքն էլ շատ զեղքերում ժողովրդական ողով կերակը է նոր բառեր, չնայած ձևոքի տակ ունեցել է Մխիթար Արքայի և ուրիշ բառարաններ: Հեղինակին վերապրված բառերից մի ժամն էլ դարձյալ ժողովրդական վեղիկց կարող է լինել քանի որ նա խոստովանվում է, որ երբեմն համապատասխան բառեր չի դնում ու ստիղգած է լինում կապահցություններով բացարկելու իր ընարած բառեր:

Ալամդարյանը շատ զեղքերում առաջնությունը տվիլ է բարբառային ձեերին, ինչպես՝ մոտիկա—տկիր (զուր, սկուր), սանոր, քարեին (վայրի տանձ) և այլն, նույնը և ուստական բաժնում՝ ճրենե—կափ, ագռա—շիշակ, ամառու:

Ալամդարյանի զործածած՝ թիգու (թից), անկիտ (կերպաս), բարսիկ և այլ բառերը մեղ հաստատապես համոզում են, որ պրանք Աստրախանի երբեմնի բարբառի ժաղովրդական բառերն են եղել, որպիսիք և օգտագործել են մեր առաջին բառարանազիրները:

Համաստու ուսւ-հայերեն բառարանում մենք հանդիպում ենք նաև մի շարք օտար բառերի, որոնցից մեծ մասը առնված են փակագծերի մեջ, ինչպես դալամբրաշ (գրչահատ—перочинный ножичек), աղաշ (անվանակից—теска), շափտալու (դեղձ-персик), մակամ (սպեղանի — пластырь) և այլն:

Թարգմանական մասում հանդիպում ենք երկկերպ ուղղացրության՝ զահլին, գոտинная— զահլին: Շատ զեղքերում բացարկվող ուսւերեն բառը ոչ միայն թարգմանվում, այլ փոխադրվում է՝ Ավգուստ—օգոստոս—նավասարդ, ապրель—ապրել—ահելկան և այլն:

Ալամդարյանը օտար բառարաններ գործածելով, ընականորեն, ինքն էլ խոստովանում է, որ իր բառարանի մեջ է խցկել մեր լեզվի համար խորթ բառեր, ինչպես՝ Վեռնին (vernis) լակ բառի տակ, մեմնն (բույս) տմին բարի տակ և այլն:

Միանգամայն հասկանալի պատճառով այսօրինակ բառերը տեղ չեն զտել պրոֆ. Հ. Աճառյանի «Արմատական բառարանի» մեջ:

Ալամդարյանի բառարանն ունի նաև բավականաշափ թարգմանական սխալներ՝ բրալլանտ, ադամանտ, ալմազ բառերը բոլորն էլ թարգմանված են ադամանդ բառով. կասը թարգմանված

է գարեջուր, արտիշօկ—կանգառ (փոխ. կանկարա), ապէլցին—բողոք (փոխ. նարինչ):

19. ըդ դարի 20-ական թվականներին հայուսական հառարերությունները զանվում էին է՛լ ավելի բարվոք պայմաններում: 20-ական թվականների վերջին Թուրքմենչայի և Աղրիանասոլոի պայմանագրերով Անդրկովկասը վերջնականացնեատղատվում է պարսկական-օսմանական տիրապետությունից և անցնում Թուսաստանին:

Հայերը գրկարաց ընդունեցին ուուներին:

«Ուրիշ թշնամու առաջ իրանց արինն էին տալիս, եղու իրանց քաղաքն ու օղուշաղը, ուուսաց ընդհակառակն՝ բանալիքն էին ընծայում, եղու իրանց տունն ու ընտանիքը»¹:

Թուսական կուլտուրան սկսեց դպրոցի, զրականության, վաճառականության, պաշտոննեության միջոցով մուտք գործել Հայստանն Թուսերեն լեզուն զարձավ ոչ միայն հիմնարկային-պաշտոնական պետական լիցու, այլև մուտք գործեց ու ազգեց մեր կենցաղի վրա: Հայ բուրգուածդիան իւն նիստ ու կացը հարմարեց ուուսական կյանքին: Մեր բառապաշտրից զուրա զցիկցին թուրքերեն բառեր և փոխարինվեցին ուուսերեն բառ-սերով: Թուրքերենը հետամնաց կուլտուրայի նշան համարվեց և մաց ավելի ժողովրդական խոսվածքի մեջ:

«Թուրքերենը, իրեն ներկայացուցիչ նախկին հետամնաց կուլտուրայի, հետզհետեւ սկսեց տեղի տալ ուուսերենին, իրուք նոր առաջադիմական կուլտուրայի ներկայացուցիչ Այսպիսու, մենք տեսնում ենք երկար շաբաթը թուրքերեն բառերի, որոնք իրանց նշանակած իրերով տեղի են տալիս նոր կուլտուրայի բնրած համալատասխան իրերի՝ արդեն ուուսերեն լեզով,— չեքիլիա, խրիստ, էնթարի, մինթանա, բնելազիկ, բողմազ փոխարինվում են վուալ, յուզկիա, կորսաֆ, բրասկիա, բրոշկա... բառերով, փափախը, չուխան, չարուխը, չաքժան, չիբուխը, նարգիլան... փոխարինում են շլյապան, սերտուկը, պալտոն, սապոկը, տուֆլին, պապիրոսը, սիդարը»²:

Թուսական տիրապետությունից հետո, առաջին՝ բառարանագրական սկզբունքներին բավարարող՝ բառարանը Աղեքսանդր

1 Խ. Ազովյան, «Ընտիր երկնը», 1939 թ., հատոր առաջին, էջ 205.

2 Ստ. Մալթասյանց, «Գործ», 1917 թ., № 3, էջ 53:

Մակարյան Խուզաբաշյանցի «Բառարան» ի հայկական լեզուէ ի ռուսաց բարբառ» աշխատությունն է, որ երկու հատորով լույս տեսած Մոսկվայում 1838 թ. Լաղարյան ճեմարանի հրատարակությամբ: Այս բառարանն ընդգրկում է ավելի քան 35,000 բառ և բազմաթիվ ռենքն, որի վրա հեղինակն աշխատել է վեց տարի: Խուզաբաշյանն իր բառարանի հիմք ընդունել է Հարություն Վարդապետ Ավգերյանի «Հայ-ֆրանսերեն բառարան»-ը, ավելացնելով մի քանի աննշան բառեր՝ սետազաղննությունն և այլն:

Ավգերյանի բառարանի ֆրանսերեն մասը սուսացնելու ժամանակ համապատասխան առումը կամ բառը չունենալով հանդիրձ, Խուզաբաշյանը վերագրել է նաև ռուսերենին, ինչպես՝ nécrologue-իր. միաձների ցուցակ, մինչդեռ ռուսերենում, ինչպես և մեր լեզվի մեջ՝ մահխոսություն և ուրիշ բառեր:

Խուզաբաշյանն իր աշխատության առաջարանը, որոց իրմբագրութներով, վերցրել է նույնուն Ավգերյանից: Հեշտ միշտ չոց, մինչդեռ բառարան կաղմողը պարտավոր է քրտնաշան աշխատանք կատարել պրալաւմներ անելու ոչ միայն բառերի առումների բացատրության համար, այլ նենց բառարանի բառաշարքը (СЛОВНИК) ընտրելիս: Այս բառարանը վաճառականական և պետական թարգմանչական ձևումների է հետապնդում:

Բառարանի սկզբում տրված է այբուբենը, քերականությունը, իսկ վերջում՝ հատթիւ անունների ցանկ-բառարան: Ավգերյանը ճագար բառը գրում է սովոր և ապա Larin, իսկ առաջին բառից հետո ավելացնում՝ չի բառ վաղեմիր: Խուզաբաշյանը այդ ռուսերեն թարգմանում է՝ խրօցրով.

Խուզաբաշյանը իր բառարանը նվիրում է Նիկոլայ առաջինին: Զափաղանց հետաքրքրական է, որ հայ-ռուսական առաջին բառարանները (Մարաֆյան, Ալամդարյան, Խուզաբաշյան) ձևնվել են ռուսական միապետներին. սակայն պետք է նշել որ քա միայն արտաքին պիտակ է եղել ռուսական իշխանության համակրօնքը գրավելու համար: Այդ աշխատություններն էությամբ ստեղծագործվել են հայ ուսումնառենչ ժողովրդի համար: Այս բանը վկայում են նենց իրենք՝ բառարանագիրները: Հարությունն Ալամդարյանը իր բառարանը նվիրելով «Աստուածազօր մեծափառութեան ամենաբարեպաշտ մեծ թագաւորի և կայսեր Աղեքանդրի Ա. ինքնակալի ամենայն ուսուացան, մի շարք «օպոսառսափառ» և այլ ածականներով մեծարելով հանդերձ, միա-

ժամանակ ասուն է. «Զայդ Բառարան համառօտ բերկրապատար սրտիւ ընծայիմ Հայկազնեայ լեզուասէր մանկանց ի վայելումնաւ»¹

Խուղաբաշյանի հայութեան բառարանը գրեթե անմըսակից կերպով իշխեց մինչև դարի 90-ական թվականները, չնայած իր գրաբար բառապաշարի և սուստկան՝ թարգմանական բաժնի հնարանություններին ու հատկապես քերականական բաժնում ունեցած սխալներին:

19-րդ դարում շատ տարածված սովորություն է եղել որ յուրաքանչյուր դասառու ինքն է հոգացել յուր դաստիարակությանը հանձնված սաների դասադրքի, քերականության, բառարան կազմելու պարտականությունը և այդ է, որ մեր գրականության մեջ նման աշխատությունների թիվը հասնում է տասնյակների:

Այսօրինակ աշխատություններից մեկն է Աղաբարյան ուսումնարանի (Աստրախան) վերատեսուչ և բարձր դասարանների հայերեն լեզվի դասառու կաբապեա Պոպովի «Մուսերեն-հայերեն համառոտ բառարանը», որը կազմած է². «Ի պետս համազգի մանկանց այնը վարժարանի»:

Նեղինակ դառնալու անվան փառքն ու դրվը չէ, որ գրդել է Պոպովին կազմելու այս 5800 բառ պարունակող բառարանը, այլ որպեսողի իր սաները կարողանան ուսուերեն լեզուն սովորել նրանով և թարգմանություններ կատարեն, զի «Յակս անհմուտ գոլոյ նոցա թագաւորեալ լեզուին և չունենալով մերձաւոր գործիս թարգմանութեան այնօրիկ ի հայ բարբառ շատ անգամ հանդիպեն խոչընդուածից և դժուարութեանց»:³

Պոպովը իր բառարանի «Առ բարեմիտ ընթերցողս խոսքի մեջ շարադրում է այն փոփոխությունները, որ նա կատարել է նախորդ բառարանների (Ալամդարյան, Խուղաբաշյան) նկատմամբ»:

Պոպովի բառարանը կազմված լինելով ավելի նեղ շրջանի օգտագործման համար ու հետապնդելով ավելի նեղ նպատակներ, լայն ընդունելություն չդուավ մեր գրականության մեջ, չնայած նախորդների համեմատությամբ ունեցած որոշ առավելություններին: Պոպովի բառարանը հրատարակվել է Մասկվա-

¹ Հ. Ալամդարյան, «Մուս-հայերեն բառարան», առաջաբան, էջ 2:

² Կ. Պոպով, «Համառոտ սուս-հայերեն բառարան», 1841 թ., էջ 3:

յում, Խազարյանի ճեմարանի հրատարակությամբ 1841 թ., որտեղ ուժ տարի հետո հրատարակվել է Մկրտիչ Էմինի հայուսա-սերեն բառարանը, որի մտածին խոսք կլինի հետադայում:

Պոպովը իր բառարանի մեջ ամեն կերպ ձգտում էր հետև լինել ավելորդություններից, չծանրաբեռնել աշխատավթյանը հոմանիշներով, աշխատում է բառերը սոսկ թարգմանել, նրա մոտ ավցստը միայն օդուագ է, մայը՝ մայիս և ոչ նավա-ասրդ ու ահեկան: Այս բառարանի բացարարական բաժնի թուր-քերեն բառերը առնված են փակագծերի մեջ՝ մակլեր—վանապար-կու (դալալ): Պոպովի «համառոտ բառարանի» մեջ, ինչպես և հետագա շատ բառարաններում, միանգամայն անտիդի կերպով միացված են համանման բառերը Ռուսական բաժնի երաշտում բրակ բառը բացարարված է՝ «Պսակ, հարսանիք, նաև նշանակի վատ տպ-րանս», այնինչ երկրորդ նշանակության արմատը ոչ թե ուռու-կան երաշտում բրակ (ամռանություն) բառն է, այլ զերմաններին Brack (խոտան) բառը, որը և պետք է առանձին գրվեր:

Բառարանում շատ բառեր ընդունված են ամենահին ուղղ-դաշտությամբ՝ ՅՈՒՍՏՐՈՎԻ ՅՈՒՍՏՐՈՎ (Կիրակի), փոխանակ ՅՈՒՍՏՐԵՆԵ և միակցված է ՅՈՒՍՏՐԵՆ ՅՈՒՍՏՐԵՆ (Կիրություն) բառին: Մի շաբթ բառեր կամ սխալ և կամ պահտապոր են իրենց բացարարու-թյուններով՝ ՅՈՒՍՏՐԻ ՅՈՒՍՏՐԻ, սնունդ, փոխանակ պատիքարակություն, քանի որ նույն բառարանում ՅՈՒՍՏՐԻ բառը բացարարված է՝ դաստիքակ, յաշեն՝ վարսակ, ձաча— առւչութիւն: Այս վերջինները նաև հնություններ են, ինչպես և ՅՈՒՍՏՐԻ ՅՈՒՍՏՐԻ ՅՈՒՍՏՐԻ (ոչ ՅՈՒՍՏՐԻ ՅՈՒՍՏՐԻ) բառը:

Դարի 50-ական թվականներին Էլ ավելի ուժեղանում է ուռւությունը լեզուն զործնականորեն իմանալու աղեանջը: Մուսաց լեզուն զանում է հայ կյանքի մտավոր զարդացման լեզու, եվ-րոպական կուլտուրան մեր կյանքին հաղորդելու միջոց: Այս օրերին ուռւությունին առնչված լավագույն բառարանի խնդիրը ավելի ակտուալ է դառնում, իսկ կազմելն ավելի զյուրին, որով հետև թե՛ ուռւական և թե՛ հայկական բառեր ընտրելու համար գոյություն ունեին մի շարք արժեքավոր բառարաններ (Ակա-դիմիքական, Սոկոլով, Հայկագյան, Զախարչյան, Ավգերյան և ուրիշներ):

Ալամդարյանի և Պոպովի համառոտ բառարաններին հաջոր-դեց Գ. Երեցփոխյանի «Յառարան» ի ուռւաց լեզուէ ի հայ աշ-

խատությունը, որի առաջին հրատարակությունը լույս տեսավ 1854 թ. Թիֆլիսում:

Նախարդ բոլոր բառարանները գրվել ու հրատարակվել էին Կովկասից զուրս, այս բառարանն առաջինն էր, որ հրատարակվում էր Կովկասում:

Երեցփոխյանը իր բառարանի առաջաբանում նշում է, որ Ալամդարյանի և Պապովի բառարանները չեն կարող բավարարել այսօրվա պահանջները, որքան էլ նրանք արժեքավոր գործեր են եղել իրենց ժամանակին:

Երեցփոխյանը, հիմք ունենալով Սոկոլովի, Ռեյֆի, Օլդեկոնի և այլ բառարանները, կազմում է մի ընդարձակ, 125.000 բառ պարունակող բառարան: Բայց քանի որ նման ստվարահատոր բառարան հրատարակելու հստավորություն չկար, հեղինակին ասում է՝

«... Ես թողի առ այժմ զտպագրութիւն նորին, քաղեալ յայնմանէ զառաւել կիրառական բառս իբրու 45.000 կարելին ճիշտ ստուգաբանութեամբ ըստ այլ և այլ նշանակութեանց նոցին, ձեռնարկի տպագրութեան վերջնոյնի 1852 ամից Յայսն բառարանի գտանին ըստ ամենայն մասանց գիտութեանց և արհեստից բազմաթիւ նոր արհեստական բառք հայոց կազմեալթ ի նորումս, որք տակաւին չեն մուծեալ ի բառարանս մեր»:¹

Հեղինակն ամեն կերպ ճգնում է բառերի հայերեն ճիշտ նշանակությունը գտնել. «... սակայն առ ի չգոյէ այնոցիկ հարկադրեցայ բացատրել զայնս քանի մի բառիւք, և հըսկն աշխարհիկ բառիւք»:²

Բառարանի բառարանագրական բոլոր աշխատանքները նա կատարել է ըստ հետոց Եւրոպայի բառարանագրաց:

Երեցփոխյանը նույնպես շատ բառեր միացրել ու մի արժատի տակ է բացատրել ինչպես՝ «Ենկետ գ. ած. խնջույք, կոչումն, համլիսավար հացկերույք. պահանգարանմ. մայք, լրիկ»: Հեղինակի օգտագործած Սոկոլովի բառարանում կա բանկետ—խնջույք իմաստով (ֆր. Banquet) և բանկետ—պահանգարանմ (ֆր. Banquette—1. փոքրիկ հողաբլուր, հողաբլրակ, 2. դար (փողցի, կամըջի) մայթ, լրիկ իմաստով»:

¹ Գ. Երեցփոխյան, «Բառարան ի սուսաց լեզուէ ի հայ», 1854 թ. առաջաբան:

² Նույն տեղ

Երեցփոխյանը ուսուական բաժնի բառերը վերցնելով թարգմանչական բառարաններից, համարել է ուսուական բառ և խցկել աշխատություն մեջ, ինչպես՝ «քարկին—թղթենի, քաղցկեզ»։ Այս բառը չունեն Սոկոլովի, Դալի, Աւշակովի ու ուսուական ուրիշներից նոր նոր բառարանները։ Դա ֆր. «Carcinome—քաղցկեզ» բառն է։ Նույնը նաև՝ «քարոնադա—տեսակ ինչ հրազենաց, ֆր. catonade»։ «Կաստրամետացիա—բանակազմություն»—ֆր. castrametation»։ «Լիբրացիա—ֆր. libration» և այլն։

Երեցփոխյանի բառարանում հանդիպում ենք ժողովրդական ու երբեմն էլ շատ հին բառերի՝ կարտետա, ոսօկ, կարիկա—երկարեալ ստեղն ծառոյ, այր որոյ սրունք ստիցն են յոյժ հեռի յիրերաց, «քարտոֆելինա—հատ դեղնակեղեն գետնախնձոր» և այլն։

Մի շաբաթ առումներ բառարանում սխալ է զրանցված, այսպիս՝ բայց բառի տակ այլ բացատրությունների հետ միասին պրված է՝ «գրամար դրամոց ի խալի, թումբ ոմբանգության»։ Խաղի բառից հետո պետք է զրվեր միջակնու, այսինքն «թումբ ոմբանգությանը» առանձին առում է, ինչպես և ունի Սոկոլովի բառարանը։ Այս կարդի սխալները աչքաթող են արված նաև բառարանի երկրորդ հրատարակության ժամանակ։

Աղ. Շահազդիզյանի հրատարակությամբ Երեցփոխյանի բառարանը 1876 թ. լույս է տեսնում երկրորդ հրատարակությամբ։ Բուսահայ բառարանագրության մեջ այս տուաջին դեպքն էր, որ բառարանային աշխատությունը լույս էր տեսնում երկրորդ անգամ։ Միթիարյանների և արևմտահայերի կազմած բառարաններից շատերն են ունեցել երկրորդ, նույնիսկ երրորդ ու ավելի հրատարակություններ։ Երանի «Թրպանի անդրանիկ» և հայ-անգլերեն բառարանը մեզ ծանոթ է իր ութերորդ հարատարակությամբ, և այդ հրատարակություններից երր մենք համեմատում ենք Ս. Գաբրամաճյանի «Նոր բառագիրք հայերեն լեզվի» աշխատության առաջին (1892) և երկրորդ (1910) հրատարակությունները, հանդիպում ենք արմատական փոփոխությունների, նույն դրությունն ակնառու է նաև Կ. Ռոկյանի «Առձեռն բառարան հայերեն-գաղղրեն» (1887, 1893), Գանթարյանի «Գաղղիերեն-հայերեն-տաճկերեն» (1886, 1912), Ավգերյանի, Պողաճյանի և այլ բառարանների մեջ։ Նույնը չի կարելի ասել սակայն, Երեցփոխյանի բառարանի երկրորդ հրատարակության մասին, թերևս դրա

պատճառներից մեկն էլ այն է, որ վերոհիշյալ բառարանների մասին եղել են առողջ քննադատություններ, որոնց շահեկան կողմերը սիրով օգտագործել են քննադատված բառարանի երկրորդ հրատարակության ժամանակի. Մեզ մոտ այդ գործը նույնապես պատահական է եղել, իսկ շատ գեպքերում քննադատվել է ավելի անհատը՝ հեղինակը, քան նրա ստեղծագործական երկը:

Երեցփոխյանի բառարանը կարող էր բավարարել միայն 50-ական թվականների պահանջները, իսկ 70-ական թվականներին նույնագործ աշխատանք էր, իսկ բառարանային աշխատությունը երկրորդ անգամ հրատարակել և թողնել նույնությամբ, դա նույնն է, թե ետ զնալու:

Երկրորդ հրատարակության կապակցությամբ «Փորձ»ի քննադատ Դրիչը (Ստեփանոս Պալասանյան) դրում է.

«Եյսքանը կարելի է հաստատապես ասել, թե 1854 թ.

... երբ կյանքը զեռ այնպիս զարգացած չէր, երբ ուսումնարանները հազվադյուս երեսույթներ էին մեզանում, թուսաստանի հայ հասարակության պահանջները համեմատար շատ թույլ, զատ սահմանափակ էին, ամենայն մտավոր վաստակ, որքան էլ թերի ու պակասուվոր լիներ և մարդասիրական ներողամտությամբ» էր ընդունվում, այսուհետեւ ինքն առհասարակ առանց քննության էր մնում, և հեղինակների «Ճիրժեռանդ աշխատասիրությունը» վարձատըրավում էր մի քանի մեկենասների ձեռնտվությամբ»:¹

Դրիչը հատկապես խոսում է բառարանի երկրորդ հրատարակության և նրա հրատարակիչ Շահադիզյանի մասին, որ վերջինս զուրջ 25 տարի եետո, միայն շահադիտական նպատակներով, ժողովրդին է հրամցրել Դ. Երեցփոխյանի բառարանը և, փոխանակ շտկելու սխալները, ավելի փշացրել է աշխատությունը: «Программа» բառի երկար ու ձիգ բացարությունների մեջ՝ «յայտաբարութիւն զտպագրելի մատենէ զհեղինակութենէ, կամ զլրագրոյ, նախագաղափար որ և իցէ գիտութեան կամ արհետի. բնաբան տուեալ վասն ուսումնական շաբագրութեան», դուր կաշխատեք գտնել «Ճրագիր»² սովորական բառը:³

¹ «Փորձ», 1877 թ., № 3, էջ 322—323:

² Մրագիր բառին (программа) իմաստով առաջին անգամ հանդիպում էնք Կ. Յաղուբյանի բառարանում:

³ «Փորձ», 1877, № 3, էջ 325—326:

Երեցփոխյանը բառարանում մի շաբք բառեր բառարանապրական շաբքնավ տառքում է կատարում, սակայն ցույց տված բառը բառարանում չենք գտնում և կամ պատահում ենք անվերջանում՝ ցուցումների, թնդղիս՝

Скочекъ иф. р. Скокъ.

Скокъ и. Прыжекъ.

Прыжокъ и. Скачокъ.

Скачекъ и. Прыжекъ.

Բառարանի երկրորդ հրատարակության ժամանակ մասմբ միտյն ուղղվել են հեղինակի նշան վրիպակները, իսկ շատ սիրալներ՝ նույնությամբ մնացել են և նույնիսկ ավելացել են նոր սխալներ՝ կարտոչկա—տամակ այցելության, փոխանակ տոմսեկ: Առաջին հրատարակության մեջ շատ իրավացի կերպով հեղինակը ածականաբար վարձածված ձևերը հղել է գոյական բառն: Օրինակ՝ կարикատуրա զոյական բառը բացարելուց հետո գրում է՝ «Կարикатурный»—ածական վերոգրեալ բառին, մինչդեռ երկրորդ հրատարակության մեջ գրված է՝ կարիկատурный ած. վերոգրեալ բառին: Այսուղ պարզապես շփոթմունք է առաջանում, նամանավանդ ածական բառի նշումի (պոմետ) շղագիր լինելուց: Բառարանադրական լիգվով հասկացվում է, որ կարիկատուրները բառը ածական խոսքի մաս է և նշանակում է վերօրյալ բառին անհմաստ արտահայտությանը: Այսօրինակ սխալները բավականին շատ են: Բառարանի երկրորդ հրատարակության ժամանակ կատարված են աննշան փոփոխություններ, հանված է՝ բարգամոտ (бергамот—խաչազուր—տանձ), կանալինակ (այլ բառեր, կամ ավելացված՝ ուլյուս, բառերը), զարդարանը:

Նշված թերություններով հանդերձ Երեցփոխյանի բառարանը եղել է իր ժամանակի (50—70-ական թվականների) ուսուհայներեն լավագույն բառարանը:

Հաջորդ բառարանը, որի մասին անհրաժեշտ է կանգ տանել, դա Արիսողոմ Հովհաննիսյանի ուսուհայերեն երկհատոր բառարանն է (1888—1893): Բառարանի հեղինակը առաջարանի մոփարեն վրած վերջաբանում ասում է. «Տեսնելով մեր նորածիլ աշխարհիկ դրականության և ըրազբության ճիգերը լուսավոր աղջաց մտքի արդյունքներից՝ ուսւ գրականության միջոցով հայ ժողովրդյան ես բաժին հանել, տեսնելով ուսւ ինքնու-

գույն և թարգմանական գրականության ընդարձակ ծավալը և մեր ուսումնարանների թվի հետզհետեւ աճելը, որոնց մեջ ուսուցվի ուսուցումը պարտավորական է, նույնպես տեսնելով, որ աշխարհիկ լեզվով ոչ միայն ուսուհայերեն մի բառարան չկամեր գրականության մեջ, այլև ոչ մի մամնագիտ լեզվաբան լըրաջությամբ չի աշխատում այդ պահասը լրացնել, մտածեցի մի հանդուգն գործի ճենարկել և ուսուհայերեն բառարան կազմել, որպեսզի կարելի լինի գոնե թարգմանիչներին, հոգված գրողներին և ուսուցիչներին դյուրություն տալ նրանց օդապավետ, բայց դժվարին գործունելության մեջ»:¹

Բառարանի առաջին հատորը լույս տեսնելուց հետո մեր քննադատությունը զայտ խիստ մատեցավ այդ աշխատանքին: Այսպիս, Ստ. Մալխասյանը մանրամասն քննության ենթարկելով այս գործը, վերջում ավելացնում է... այս բառարանը ամոթ և նախատինք կլինի ոչ միայն հեղինակի անվան, այլև բոլոր այն ժողովուրդներին, որի մեջ և համար որ ապազրվել է: այս բառարանը բազմատեսակ թերություններով և աններկի սիստեմազմ՝ մեծամեծ միասներ կարող է բերել անհմուտներին (համբակներին և աշակերտներին), ուստի և խստիվ պետք է արգելի նորա գործածությունը մեր ուսումնարաններում»:²

Հովհաննիսյանը այս ու այն քննադատություններին մասնամբ բավարարություն տալու համար բառարանի երկրորդ հատորին կցած վերջարանում ասում է՝

«Որովհետեւ իմ գլխավոր նպատակներից մինն է եղել բառարանս նաև դյուրըժքանելի անել, այդ պատճառով ի նկատի եմ առել. ա) մեր կենդանի բառարանների մեջ գործ դրված այնպիսի բառեր, որոնք թեպետ գրաբար բառարանների մեջ չ'ն գտնվել, բայց արդեն մուտք են գործել արդի աշխարհաբար գրականության, լրագրական թղթակցությանց և ժողովրդական հրատարակության մեջ. բ) խիստ սահման չ'մ դրել գրաբար և աշխարհաբար ձեերի մեջ և բառերն ընդունել եմ նրանց վերջին ձևով, եթե անհարմար է եղել սկզբնական ձևը պահել (ոլորելը, խախտելը, փոխ. ոլորումն, խախտումն և այլն), և ընդհակառակը պահել եմ գրաբար ձևը. իմ աշխարհաբարն անհարմար է եղել գոր-

¹ Ա. Հովհաննիսյան, «Ռուս-հայերեն բառարան», առաջաբան, էջ 2.

² «Արաբա», 1889 թ., Ա. գիրք, էջ 100:

ծածության համար (դառամյալ, արտանյալ, դարձացման գիտությանց, քաջությում և այլն). զ) շատ անդամ անկարելի լինելով ուստ ածականի գեմ հայ ածական ձեզ դնել, նախազատել եմ հատկացուցիչ ձեզ (Ճրեսնայ—ծառի, ԿՈԼՈԿՈԼԻՆԱՅ—զանդի, ԿԱՆԱԴԻ, ԿԱՆԱԴԻ—պարանի և այլն), զ) մի քանի բառեր, որոնք բացարձակ օտար ծաղում ունեն, բայց հայերեն վերջավորություն ընդունելով արդեն ընդհանրացի են ժողովրդի բերանում, ընդունել են իրեն հայերեն բառեր (դասապություն, Քիրաճել, վաքսել և այլն), հ) անդ-անդ բայերի զործոծության երկու ձեն էլ հմ զրել (պակասացնել պակասեցնել փոսացնել փոսցնել և այլն), Առհասաթակ կենդանի բարբառների վրա ես նայել եմ իրեն երկրորդ շահմարանի վրա, որտեղից պետք է լրացնել աշխարհիկ՝ զեռես կազմակերպվող լեզվի պակասը, իսկ նորան յուր այժմյան տնցողական զրության միջոցին կաշկանդել որոշյալ տրհեստական ձեռնով տննպատակ իմ համարեք քանի որ ժամանակը ինքը պետք է նողատե, որ որոշյալ ձեռեր մրցումից սինչե վերջնական հաղթությունը տանենք:¹

Հովհաննիսյանը բացատրությունները զրում է աշխարհաբար, առումներն իրարից բաժանում է (||) նշանով, որն ավելի պարզություն է մտցնում բառարանի մեջ, քան միջակետերով բաժանելու:

Հովհաննիսյանը, ինչպես և նախորդ բառարանադիրները, չեն նշում բառի կիրառության սահմանները (բուսաբանական, ռազմական, բժշկական և այլն), որը չափազանց կարեոր է:

Խուս-հայերեն բառարան կազմողը միայն ընդունում է ռուսերեն բառապաշտը, եմք ընդունելով իր ժամանակի կյանքը և եղած նախկին բառարանները, որովհետեւ նախորդները հետնորդ բառարանների համար անցման կամուրջ են հանդիսանում: Բառարանագրի անհատական հասկացողությունից և գիտությունից է կախված լավ ընտրություն կտտարելը Երկու կամ ավելի լեզուներով լավ խոսել իմանալը երաշխիք չէ, որ լավ բառարան կարող է կազմել տվյալ անձնավորությունը: Բառարան կազմելու համար ամենից առաջ պետք է իմանալ բառարանագրության սկզբունքները և առավել ես պատկերացնել կազմելիք:

¹ Ա. Հովհաննիսյան, «Խուս-հայերեն բառարան», վերջաբան, էջ 1-2:

բառարանի նպատակը և ուղղությունը: Նորայր Բյուզանդացին իր դադիերեն-հայերեն բառարանով ոչ միայն հարստացրել և հին ու միջնադաշտան հայերենի ակունքներից երեան է բերել հազարավոր բառեր և դարձվածքներ, այլև ֆրանսերեն լեզվի համար էլ սահեծել է արժեքավոր աշխատություն:

Ար. Հովհաննիսյանը ետ է մնում այս տեսակետով իր նախորդներից, բառարանում չի տալիս ոչ մի ոճ, իսկ օբառարանն առանց ոների գա սոսկ կմախք է: Ինքը՝ հեղինակը շեշտում է, որ «Ենքս մասնագետ» լեզվաբան չինելով, երբեք չեմ էլ մտածել, որ իմ կազմած բառարանը անսխալ և օրինակելի կլինիա¹:

Հովհաննիսյանի բառարանի սխալները ավելի շատ են: Բացարությունների մեջ մենք հանդիպում ենք հոմանիշների կուտակումների և այն էլ ոչ դասավորված կերպով: Այս բառարանի հոմանիշներից երբեք հնարավոր չէ կուանել, թե որն է ավելի ճիշտ պարզաբանում տվյալ ոռուսերեն բառի իմաստը:

19-րդ դարի 30—90-ական թվականներին հրատարակվել էին մի քանի ոռուս-հայերեն բառարաններ, մինչդեռ Առուղարաշյանի հայ-ոռուսերեն բառարանից հետո առանձին գրքով լույս տեսած առաջին աշխատությունը Կարապետ Յաղուրյանի բառարանն էր:²

Նախքան Յաղուրյանի բառարանի էռությանն անցնելը, անհրաժեշտ է ընդգծել, որ 1849 թ. Լազարյան ճեմարանի աշխակերտության համար Մկրտիչ Էմինը կազմում և հրատարակում է հայ-ոռուսերեն բառարան, որը պարունակում է ավելի քան 7000 ընտիր հայերեն բառեր: Էմինի բառարանը անծանոթ է մնացել ընթերցող լայն հասարակությանը, չնայած ընտիր «Հայ-ոռուսերեն բառարան» լինելուն: Պատճառը թերևս այն է, որ այս բառարանը հրատարակվել է նույն հեղինակի «Ընտիր հատուածք քաղեալք ի գրոց նտինի և արդի մատենագրաց հայոց» աշխատությանը կից և անսուրագիր: Այս «Բառագիրքը» ոչ միայն հայերեն բառերի ընտրության մեջ զգույշ և խստապահանջ է, այլև բացատրությունների մեջ հեղինակն աշխատում է գտնել ու ընտրել լավագույն և տվյալ հայերեն բառի ճիշտ իմաստն արտահայտող ոռուսական իմաստները: Մ. Էմինը առաջնահերթ կերպով տալիս է իր ժամանակի իմաստը և ապա անցնում հնին, քնչալեալ արու-սուլ, կրեսոլ, պրեստոլ.

1 Ա. Հովհաննիսյան, «Բնուս-հայերեն բառարան», վերջաբան, էջ 1:

2 Կ. Յաղուրյան, «Հայերեն-ոռուսերեն բառարան», Թիֆլիս, 1891:

90-ական թվականներին հրատարակվել էին հայերեն և այլ լեզուների առնչված մի քանի հաջողված բառարաններ, որոնք արդեն հնարավորություն էին տալիս արժեքավոր բառարաններ կազմելու, բայց Յաղուրյանը այլ նպատակ է հետապնդում «Տալու մի համառու բառահար», որի հիմքը կազմել էր Պետրոսուրդի ուսանող Կ. Խատիսյանը, իր Կ. Պոլում եղած ժամանակ:

Յաղուրյանը իր բառարանի գրա աշխատել է երկու տարի՝ այն էլ պաշտոնից ազատ ժամանակ և զրա համար էլ «Ետա կարելի է, — տուժ է հեղինակը, — որ բաղմաթիվ բաներ, որոնք պիտի լինեն այս բառարանում, դուքս թողնված են» Ձևոքի տակ եղած պառաստի նյութից որքան հնարավոր էր օգուտ քաղեցի: Մակայն զա բացական չէ»¹.

Յաղուրյանը գիտակցում է, որ հայերեն աշխարհաբար բառարան հորինողը պետք է ինքը ևս նյութ ժողովի, և առուժ է, «Մենք չունենք ոչ մի հայերեն բառարան, որի բաների քանակությունը (նույն կատար) քիչ չատ լրիվ լինի: Պետք է նորից և ինքնուրույն կաղմելու զիսավոր զժվարություններից մեկը: Բացի այդ, պետք է օգուտ քաղել գալառական բառարաններից, որ դեռ մշտկված, անզամ զրի անցրած չեն: Այեւք է օգուտ քաղել նորակազմ բաներից, որ ամենայն օր զրեթև կազմվում են ... իսկ այդ բոլորը պահանջում են ժամանակ»²:

Հեղինակի զիսավոր նոյնական է եղել որ բառարան գործածող դոմի այս կամ այն բառի ճիշտ ու զիսավոր նշանակությունը «Թի մըքան այդ նպատակին հաջողվել է ինձ հասնել այն պայմաններում, որ ես աշխատել եմ, այդ թող դատին ուրիշները» և բացականչում³ feci quod potui (արեցի, ինչ կարող էր):

Յաղուրյանի բառարանին մտաիկից ծանոթացող ամեն մի զբաղետ կասի, որ, նկատի ունենալով հեղինակի աշխատանքի պայմանները և հնարավորությունները, քիչ բան է արված: Այդ ժամանակամիջոցում հնարավոր էր է՛լ ավելի կատարյալ աշխատավորություն տալու: Միաժամանակ մենք համամիտ չենք բառարանի այն քննադատների հետ (Ս. Զելինսկի, Ս. Սարգսյան, Ս. Լիսիցյան և ուրիշներ), որոնք այս բառարանի արժեքը ոչնչության են հավասարեցնում, իսկ նրա դործածությունը

¹ Կ. Յաղուրյան, «Հայ-ռուսերեն բառարան», տառջաբան, էջ 6:

² Նույնը, առաջարան, էջ 6:

³ Նույն անդ:

նույնիսկ վառնդավոր, ընդհակառակը՝ վերջինս իր տեսակի մեջ տուաջին բառարանն է, որ հետապնդում է գործնական նպատակներին. Այս քառարանից զուրս են նետված 90. ական թվականներին արգեն անգործածական բոլոր գրաբարյան և գրաբարակերպ բառերն ու տոռներն, ինչպես՝ ար, արին, ագանել, ագապ կամ ազգ բառի զիմաց, եթե Խուզաբաշյանը գրում էր՝ народ, нация, жители одной земли, хотя не под одними законами живут, и не одному государю подвержены, поколение, колено, племя; происхождение, линия рода, фамилия; порода, род, исчадие, отрасли; род племени, род доброты; свойство, качество.

Էմինը՝ народ; род, поколение. Յաղուրյանի բառարանում՝ «Ազգ—нация, народ. Կամ բանափառ բառը Խուզաբաշյանի մոտ՝ разумный, словесный, одаренный понятием, разумением. Էմինի մոտ՝ словесный, разумный Յաղուրյանի մոտ՝ устный, бանափառ գրականություն—устная литература.

Յաղուրյանը բառարանն ավելի գործնական դարձնելու համար տեղ չի տվել համուկ անուններին, չի գրել ածականների գերադրական աստիճանը և այլն: Նախորդ բառարաններից ընտրություն կատարելիս շատ գործածական բառեր զուրս է թողել հեղինակը, ինչպես՝ նուշիկ—тихий, медленный, осторожный, միտպազաղ—1. ровный, 2. стройный, бравашի—полчище, разбойничья шайка.

Յաղուրյանը հայտագել և բառարանի մեջ է մտցրել հարյուրավոր բառեր, որոնք մինչ այդ անծանոթ են եղել բառարաններին՝ բախտախնդիր—авантюрист, բանագործ—литературный вор, եպուստ—одежда, ծրագիր—программа իմաստով: Յաղուրյանը մտանցները բացատրված են առանձին, օրինակ՝ «Հակա-» (частица, приставляемая к началу слова для обозначения противоположения), анти.

Յաղուրյանը օգտագործել է նաև բարբառային բառեր, հիմք ընդունելով իր մայքրենի՝ կարնո գաղթականների լեզուն՝ Ախալիսիսայի բարբառը: Հայուուսներին գրական լեզվի բառարան կազմելու ժամանակ բնականորեն անհրաժեշտ է այս կամ այն չափով օգտագործել բարբառային բառապաշարը: Խնդիրը այն է՝ ինչպես օգտագործել ժողովրդական այդ անսպառ հարստությունը: Գրական լեզվի բառարանի համար պետք է գերցնել բարբառային այն բառերը, որոնց հոմանիշը չունենք գրական լեզվի

մեջ, ինչպես՝ արքատ, ալարել, կլոր և այլն ու որոնք ավելի լայն տարածում ունեն և չեն սահմանափակվում մի բարբառի կամ ենթարբառի սահմաններում։ Թուսահայ գրական լիդլին ավելի մոտիկ է կանգնած Արարտյան և մասնավորապես Երևան քաղաքի խոսքածքը, ապա և առաջնությունը պետք է արվեր վերջինիս։ Մինույն ժամանակ լավագույնը այն կլիներ, որ հատուկ նշումով ցույց տրվեր բարբառային լինելը, այլապես այն տպավորությունն է սաացգում, որ հայերեն զրական բառեր են գան (զզվանք—приторность), խպնել (ամաչել—стесняться), նախմուկ (չզջիկ—летучая мышь).

Յաղուրյանի բառարանի քննուղաններից մեկը միանգամայն արգարացի կերպով ասում է. «Բառարանի մեջ մոտել են այնպիսի բառեր, ինչպես՝ «ճիգ-ճիգ—ցալլունոկ, գան, գանը զալ, գացել, զինովիալ, զինովցնել, աղվոր, աղվորնալ (աղվորցնել), աղվորույն, նախչոր, նախչորնալ (ճանաչվորություն)» և այլն. և մինույն ժամանակ չկա՞ ճուտ, վեր, հեր, մեր, էս, էդ, էն, էգուց և այլն։ Ճուտ բառը, ճշմարիտ է, կա, բայց նա ըստ Յաղուրյանի բառարանի նշանակում է ձեռենի (животных); պտեր; սատանի նուտ—чертенок, բայց ճուտ իբրև հավի նուտ—ցալլունոկ չկա, մինչդեռ մեր բոլոր արևելյան բարբառներում ցալլունոկ նշանակում է նուտ և ոչ ճիգ-ճիգ։¹ Նատ գեղջերում Յաղուրյանը առաջնությունը ատլիս է բարբառային ձեւերին, այսպես՝ խլմեստ և խլմեսու ձեւերը առաջում է խլմու նեղ բարբառային ձեի տակ։

Յաղուրյանի բառարանն ընդգրկում է 30.000 բառ, իսկ բառարանի սկզբում արված է քերականական համառոտ տերեկություններ, ուր խոսվում է հնչյունների և նրանց արագերման, գոյական անունների հոլովման (ի, ու, ան), գերանունների, օժանդակ բայի և հատկանի բայի խոնարհման մասին ի գեալ տեղին է հայտնել, որ Յաղուրյանը միանգամայն սխալ կերպով իր բառարանի մեջ նշումները (ՊՈՄԵՏԱ) կատարում է հայերեն լեզվով (գ. ած, ը. դ.). Միաժամանակ ավելացնենք, որ Յաղուրյանի նախորդ բառարանագիր Մ. Էմինը լիովին իրավացի էր այգանս վարվելու, քանի որ նա իր աշխատությունը կազմում էր «Ի պետս աշակերտաց Լաղարեանց ճեմարանի Արե-

¹ Ս. Սարգսյան. «Կ. Յաղուրյանի բառարանը», «Մուբե» 1893 թ. № 2, էջ 296.

վելեան լեզուաց», իսկ Յաղուրյանը՝ առաջին հերթին «Մայրենի լեզվով գաստիարակվելու բախտավորությունից զուրկ մնացող ների» համար:

Յազուրյանի աշխատության գրախոսներից՝ Ս. Սարգսյանը մի ամբողջ հատված (15 էջ) նվիրում է բառարանին կցված քերականության քննադատությանը:

Դարի 50-ական թվականներից սկսած Կովկասյան լեռներից հյուսիս ընկած տարածության վրա ապրող հայերն իրենց մայրենի լեզվի կուլտուրայի օջախ համարում էին Անդրկովկասաի կենտրոնները, առանձնապես Թիֆլիսը, բայց այդ հանգամանքը երբեք չեր բացառում այլ վայրերում գրական, լեզվաբանական աշխատությունների երեան գալը:

1898 թ. Թումանյան (Դոնի) լույս է տեսնում ապարանատեր Հովհաննես Աբրհամի Տեր-Աբրհամյանի «Նոր բառզիրք հայերէն գրաբարէ աշխարհաբար լեզուի Թումանյան թարգմանութեամբ» աշխատությունը:

Այս բառարանը, ինչպես վերնադիրն է վկայում, առաջնահերթ կերպով պետք է պարունակեր գրաբարի բառերը, նրանց հաջորդեր աշխարհաբարը և առաջ թարգմանական ուսւսերենը, սակայն իրականում ստեղծված է բառարանային քառու Հեղինակը ինչ լսել, կամ կարդացել է որեէ տեղում, անկախ աշխատության ժամանակից և ուղղությունից, նույնիսկ նեղ բարբառային ու խիստ ակնառու եվրոպական բառերը մտցրել է բառարանի առաջին հատվածում, համարելով գրաբար բառեր և այդպիսով բառաքանակը հասցըրել 36750 բառի (հեղինակի համարակալումերով հաշված): Տեր-Աբրհամյանի կարծիքով գրաբար բառեր են՝ լաւողական, լրաբեր, լրազիր, խաղարկության, ծավածոց, շոգեհարշ, շոգեկառ, խնուղի, զերմաշափ, ծանրաչափ, նույնիսկ բիլիարդ, ալֆոնսություն և նման բառեր: Մայր բարբառային բառը գրաբար ընդունելով, բացառում է՝ լիկ... տրուար, բայց միենույն ժամանակ գրաբարյան շարքում ունի՝ ըլրիկ - սալահատակ» նեղ բարբառային բառը:

Տեր-Աբրհամյանը իր բառադրքի մեջ մտցրել է մի շարք բացանայտ անսառույց բառեր՝ խուռակ - չորցած խաղող - виноград вяленый, խարազիմաց - պի պահող - ненавистливый, զլопамятный, խլաւեռ - բարակ գլխի ծածկոց կանանց - женское головное покрывало, вуаль, наглавник, խխադրական - շին-չու, մտացածին - поддельный, вымысленный, կամ խարա-

բան—զինետուն—կաբակ, питейный дом բառը՝ Վերջին բառի
մտածին հեղինակի օդապարձած ազրյուրներից՝ Հայկադյանը
գրում է. «Բառ անհայտ, թերեւ անպիտան թան, անպիտան
իջևան (կա և պրսկ, խարապար—զինետուն, կամ կրտակ զինե-
վաճառիք. մեյխանե)։ Առանց վերցրել է միտյն փակագծված
մտուր, իսկ Տեր-Արքհամյանը նույնությամբ ընդօրինակել է
վերջինից։ Շատ ու շատ բառեր զրված են պահասավոր կամ
սիստ ինչպես՝ խառան բառի միտյն չփան—веревка առումն է
արգած. խառնակ զրված է՝ խառնած, անմահուր—смешанный,
неочистый. Այս բառը նույնարաշյանը գրել է. «нечистый, сме-
шанный,ինչպես անհնում ենք, Տեր-Արքհամյանը բացարու-
թյունը շրջել է և գրել սիստ ու պահասավոր Խառնակ բառը
այդ նշանակությունից դուրս ունի խառն, անորոշ, շփոք, անար-
ժան, մեղսուա առումները։ Խառնարան բառը նշանակում է՝ զինու
ամսն, կարաս, գավար, բաս, այժմ՝ երարխարեան. իսկ Տեր-Արքհ-
համյանը բացարում է՝ մատագարան։ Խառնելիք բառը, ըստ
բարոր բառարանների, նույն խառնարանն է, մինչդեռ Տեր-Արքհ-
համյանը բացարում է՝ բաղադրելի բաներ—составные ча-
стти.

Նշած ավելորդպարանություններին զուզընթաց շատ բառեր՝
խապագ (հացազործ—ունի Այգեկցին), խառնախուց, խառնիչ բա-
ռարանում չկան։

Բացահայտ նկատելի դարձավ, որ մեր քերած բոլոր օրի-
նակները վերցրած են 1150 սյունակ ունեցող բառարանի չորս-
հինգ սյունակից, այս բանը կատարել ենք զիտավորյալ կերպով,
քանի որ ամենուրեք նույնն է։ Յուրաքանչյուր ոք կարող է այս
զրությունը նկատել նաև մնացած էջերում ու սյունակներում։

Տեր-Արքհամյանն իր բառարանի վրիպակներն ուղղելուց
(sic) հետո, և մինչև «հասուուկ անուանց, աշխարհապրական» և պի-
ցարանական» բառարանին անցնելը՝ տալիս է «Բառերուն մեծ
մասը շարելու ժամանակ բաց թողված», իսկ վոքրիկ մասը շա-
րուելն վերջն ավելցուցած բառերի հավելված, որոնք՝ տպված
են գունավոր թղթի վրա, որպեսզի «Բառարան դործածովների
համար գյուրին լինի բուն բառապրքին մեջ չդանված բառը խ-
կույն հոն նայել»։

Այս հավելվածն իր թերություններով առավել ևս մեզան-
չանք է գրաբարի և բառարանապրության դեմ, այնպես որ գու-
նավոր թուղթը «գյուրին» կը արձնի աշխատության ավելի խո-

տան մասը մի կողմ նետելու Հավելվածի մեջ գրաբար բառերի
 շարքում հանդիպում էնք՝ գործադուլ, դաշնամուր, դաշնակահար,
 դեղազիր, դեղատում, քատերասրտն, քետման, հաշվեկշիռ, հեծա-
 նիվ, ձայնոխոս նոր գրական բառերի, կամ' ծամիկ, կրուշակ բար-
 բառային բառերի: Հավելվածն արտաքուստ տռանձնահատուկ
 լիներով, բառերով էլ առանձնահատուկ է, իսկ սխալներով՝ ավե-
 լի քան, ինչպիս՝ պարկապակութիւն (երաժշտական տիկ) ս. волынկ,
 духовое музикальное орудие, состоящее из кожаного пу-
 зыря, надувающегося посредством прикрепленной сверху
 трубочки. Այս բառը նեղ բարբառային բառ է, մինչդեռ մենք
 ունենք ավելի տարածված «Պարկապակուկ» բառը: Գրդակ (րիթ
 գերմանացվոց (ս. вафля, род пирожного из крупчатой муки
 с примесью сливок и яиц. Եթե այս գրդակը գերմանական
 Vaffeln է, ապա այդ գերմանացված պիտք է հայերեն թարգմանվեր
 շետք, նուրբ կարկանդակ, մի տեսակ խմորեղինա): Վերջապես
 ստորակետ զրաբար բառը բացատրված է՝ սրաստիքս, սրակետ
 (ընդգծումը մերն է՝ Դ. Գ.), ստորակետ աշխարհաբար բառերով:
 Ընդգծած բառերից սրակետ բառի կազմությունը հասկանալի է
 որպես սուր և կետ բառերի բարդություն, բայց իմաստի տե-
 սակետից միթե ստորակետը սուր կետի ձև ունի. եթե այդ տե-
 սանկյունով մոտենանք, հայերեն կետադրության նշաններից
 ավելի շշեղտը սրակետի ձև ունի, քան ստորակետը, և չենք
 սխալվում, Տիր-Արքամյանի բառարանում «շշեղտ» բառը բա-
 ցատրված է՝ սրտծայր: Ինչ վերաբերում է ստորակետ բառի
 մյուս՝ սրաստիքս բացատրությանը, ապա խոստովանում ենք
 մեր ուժերի թուլությունը, մեր գրական լեզուն այդպիսի բառ
 չունենալու պատճառով, անկարող ենք մեկնաբաներ Վերջաց-
 նենք մեր խոսքն այս բառարանի մասին մի վերջին անգամ
 շեշտելով, որ այս աշխատությունն միայն ունի արտաքնափայլ
 գրավչություն:

19. ըդ դաքի հայուսական բառարանագրության ամբող-
 ջացման համար մնում է միայն հիշատակել Միքայիլ Հախպատ-
 յանցի «Ալմենն բառագրքույկ» ի ոռուսաց լեզուէ ի հայց աշ-
 խատությունը, որ լույս է տեսել Թրիլիսիում 1879 թ. և ընդ-
 գրկում է ավելի քան 13.000 բառ: Հախպատյանցը բառարանին
 կցված ծանոթության մեջ ասում է, «Մենք աշխատել ենք բա-

¹ Ա. Կոյլավ, «Գերմաներեն-հայերեն բառարան», էջ 1507.

ատղբըռույկս օգտակար առնել որքան կարելի էր պարզ բացառություններով:

Հեզինակն աշխատում է պահպանել մեկ բառի դիմաց մեկ բացառություն առլու սկզբունքը: Հախատյանցի բառարանը տանձին արժեք չի ներկայացնում և մասացության է արվել հենց ապագության օրերին:

Մուսական տիրապետության այս առաջին շրջանի բառարանները հիմնականում ծառայում էին ռևուլյոնական և թարգմանչական նորագործությունների մուսական տիրապետության շնորհիվ տվելիք լույն նորագործություններ էր ստեղծվել հայ վաճառականության համար: Դպրոցներում և հիմնարկներում պարտադիր էր ուսուերեն լեզուն իմանալը:

Մուսահայերեն բառարաններ կազմվելու ժամանակ բառարանագրի տմենամեծ ու ստեղծագործական աշխատանքը բաժին էր ընկերում հայկական մտած վրա: Հայերեն զրական լեզուն ապրում էր իր կազմավորման շրջանը, դրաբարը տեղի էր տալիս աշխարհաբարին և այդ անցողիկ որոշեալ երեսմ է 19-րդ դարի հայ բառարանագրության մեջ:

Մինչև այժմ մենք մեր ըոլոր եզրացությունները կատարում էինք հիմք ունենալով ապագրված բառարանները, սակայն այդ տպագրված աշխատությունների կողքին ունենք անտիպ կամ թերամիպ գործեր, որոնցից անհրաժեշտ է նշել մի Պատկանյանի „Կлассификация животного царства“¹ և Շերք Հայտստանի² աշխատությունները³: Առաջին աշխատությամբ Պատկանյանը տալիս է կենդանական աշխարհի բառարանը, որ ըստանում է երեք հիմնական խմբի՝ կաթնասուններ, թռչուններ և այլ անսակներ, յուրաքանչյուր խումբը՝ 30 ենթախմբի և ամեն մի կենդանու անուն գրում է ուսուերեն, լատիներեն և հայերեն երկրորդ բառարանը՝ «Բերք Հայտստանին» մի հոյակապ աշխատություն է, որտեղ հեղինակը այբուբենական կարգով տալիս է Հայտստանի բույսերի շուրջ 700 տեսակ, նշում նրանց հայերեն, լատիներեն և ուսուերեն անունները ինչպես: —

¹ Գրական թանգարան, № 1171/134 ձեռագիր:

² Գրական թանգարան, № 4186/97 ձեռագիր:

³ Ա. Պատկանյանը ունի նաև լինդհանուր բնույթ կրող ուսուհայերեն բառարան, որի ոչ ամբողջական ձեռագիրը դանվում է Գրական թանգարանում, № 1171/94:

Աղինջ, եղինջ	Urtica	крапива
Դարմի	lavrus	лавр
Դղում	cocurbita	тыква
Դեղձ	persica	персиковое дерево

Այս աշխատությունները չափաղանց կարեռ գործեր են և նրանց հրատարակությունն անհրաժեշտու¹

Մ. Պատկանյանի ձեռագիր աշխատությունների կողքին հիշատակության արժանի է նաև մի ուրիշ գործ, որը ոչ միայն 19-րդ դարի ուսումնային բառարանների մեջ, այլև բնդիան-բապես չափաղանց արժեքավոր աշխատություն է:

Այդ բառարանը Մկրտիչ Բերոյանի «Բուսա-հայերեն-ֆրանսերեն լիակատար բառարան»² է, որի վրա հեղինակը «միայնակ բազմամյա աշխատանք է թափելու բառարանից մեր ձեռքն է հասել երկու մեծաղիր ձեռագիր հատոր, որն ընդգրկում է մինչև որոմ բառը (1550+1520, ընդամենը 3070 էջ)». Բառարանի հիմնական աշխատանքները հեղինակը ձեռնարկել է 1834 թ.:

Ա. Ղաղիկյանը այս աշխատության մասին, հարցականի տակ առած, հայտնում է. «Բառարան ուսումնայերեն երկասիրեաց Մկրտիչ Բերուան, ուսուցիչ հայկական գրականութեան իշայսերական համալսարանին որ ի Փեթրպուրկ Բուսաց Տպագրեալ ի տպագրատան Համալսարանին».³

Տպագրված օրինակը գտնել մեղ մոտ չհաջողվեց, միայն Պետական Գրական Թանգարանի № 4827/95 գործի մեջ գտնը-վում է բառարանի 243-րդ էջի՝ Ռ. Ռ.—Գանիտ բառի արտատիպը (ОТТИСК):

Բերոյանի բառարանը չի հետապնդում միայն իր ազգի մանուկների զարգացման և կամ «թարգմանչական դյուրություն-տալու գործին», այլ ավելի լայն նպատակների:

Մկրտիչ Բերոյանը նախքան յուր բառարանը կազմելու սկզբունքներին անցնելը, բերում է մի քանի հայագետների:

¹ Թ. Պատկանյանի բառարանային աշխատությունների մասին տես՝ ֆ. Գտապարյան, ևթ. Պատկանյանը բառարանագիր, Հայկական ԱՍԲ Գիտությունների, Ակադեմիայի տեղեկագիր, 1945 թ., № 5:

² Նույն հեղինակն ունի նաև Գրանսերեն-հայերեն բառարան, դարձյալ ձեռագիր, որ պահպան է Գրական թանգարանում:

³ Ա. Ղաղիկյան, «Հայկական նոր մատենագրություն և հանդիաբարան հայ կյանքի», էջ 336.

կարծիքը հայերենի մտսին Մի շարք փաստարկութերով նա ցույց է տալիս, թե ինչքան մեծ է ու կարևոր ուսու-հայերեն պիտական բնույթի բառարան կազմելու անհրաժեշտությունը. Նա գտնում է, որ հայերեն լեզվի իր նախադաս բառարանը պիտք է գուրս գտ նեղ, այսպես կոչված ծխական սահմաններից և բառնա շտաբերի սեփականությունն Բերոյանը լրիվ չափով դիտակցում է բառարան կազմելու էռթյունը ու գմբարությունները. Այդ բոլորը «պարտավորեցրին ինձ,— ասում է Բերոյանը,— իմ թույլ աշխատանքով օգտակար լինել՝ բոլոր ցանկացաղներին նվիրվել այսպիսի հարաւա և օգտակար, ինչպիսին է հայեական, լեզվի գիտության, կազմել բառարան ոչ թե միայն առևկական բառերից, այլև բառարանը հարստացնել լեզվի ամբողջականության համար անառարկելիութեան անհրաժեշտ շատ գարձվածքներով»¹.

Բերոյանը իր բառարանը կազմելիս «առձեւագուտրաստ» անեցել է մի շարք արժեքավոր բառարաններ, զրա հետ միաժամանակ պրապտութեան է կատարել մեր մատենագրության մեջ և շատ բառեր ներմուծել իր բառարանը, հատկապես բուսաբանական բառեր:

Մ. Բերոյանը անգաղրում աշխատել է յուր բառարանը որպան հնարավոր է ընդունակ և կատարյալ զարձնել Մեր ձեռքը հասած ապադրական արտատիպից երեսում է, որ նույնիսկ տպագրության ընթացքում հեղինակը շատ բառեր վերամշակման է ենթարկել այսպես՝ գանձ բառի բացատրության մեջ նավահանգիստ բացատրությունից հետո ավելացրել է հնանգրուան նավուց. նախակայք կամ գաճառ—գուշակ բացատրությունից հետո՝ ըդապատում, կախարդ բառեր, և կամ շատ բացատրություններ, համարելով երկրորդական, առել է փակադերի մեջ (համեմատել 243 էջի տպագրական արտատիպը և ձեռագրի առաջին հատուրի 755—756 էջերը).

Բերոյանի այս կեսոդարյան աշխատանքը չի գնահատվել, հայ «աղդամերները» չեն դիտակցել նրա արժեքը:

Դ. Աղայանը «Իմ կյանքի գլխավոր դեպքերը» աշխատության մեջ զրում է.

«Երբ վեպս տարա նրա մոտ (զրաքննիչ Մ. Բերոյանի —

1 Մ. Բերոյան, «Ռուսերեն-հայերեն-պաղիերեն բառարան», ներառություն, Դրական թանգարան, գործ № 4327/95:

Դ. Գ.), նա իր ձեռագիր հարուստ բառարանի թերթերը փակէ
էր դահլիճի մեջ, և զդիտեև թնչ էր շոկջկում:

— Այդ թնչ ես գրել, ասաց:

— Ոչինչ, ասացի, աղջային կյանքից մի վեալ է:

— Աղջային կյանքից... ասաց ծերունին ցաված սրտով:

— Ուրեմն աղջային թշվառությունից կլինի անշուշտու Այս, թշվառ է մեր աղջի կյանքը, շատ թշվառ Տեսնում եք ահա այս թերթերը, 50 տարվա աշխատություններ են, 50 տարի շարունակ աշխատել եմ ես սրանց վրա, բայց գնահատող չկա, ոչ տպող կա, ոչ առնող, այնքան ամուլացած է մեր աղջի մեջ ուսումնասիրությունը, գրասիրությունը, չնայած, որ միլիոնատեր հայեր ունենք: Այս աշխատության դին չղնողները թնչ պիտի գնեն քո վեպին:

Բեր, բեր, ստորագրեմ:

Եվ ստորագրեց առանց կարդարու:¹

Հ. ԴԱՂԲԱՇՅԱՆԻ «ԼԻԱԿԱՏԱՐ» ԲԱՌԱՐԱՆՆԵՐԸ

Ռուսերեն լեզվի պահանջը ավելի ակնառու էր զատել 20-րդ դարի սկզբներին: Եթե արեմատահայերի համար «Մտավորական լեզուն միշտ մնաց ֆրանսերենը»,² ապա արենելահայերի համար ռուսաց լեզուն դարձավ ոչ միայն մտավորական, այլ շատ դեպքերում կենցաղի լեզու: Դիտությունն ու գրականությունը սկսում էին ավելի ուժեղ թափով դարգանալ Ռուսերենից և հվրոպական լեզուներից ուսուերենի միջոցով թարգմանվում էին տասնյակ աշխատություններ գիտության զանազան բնագավառներին պատկանող: Հրատարակված նախորդ բառարանները չեն կարող լրացնել այդ պակասը, յուրաքանչյուր գրագետ պահանջ էր զգում իր սեղանի վրա ունենալու ուսուերեն լեզուն ընդգրկող բառարան՝ հայերեն լավագույն թարգմանությամբ, նման Գ. Դպիրի, Ն. Բյուզանդացու, Ա. Կոյլավի բառարաններին:

Այդ օրերին Հարություն Դաղբաշյանը ձեռնարկում է կազմելու «Լիակատար բառարան ուսուերենից-հայերեն» և քիչ ժամանակից հետո՝ «Լիակատար բառարան հայերենից-ուսուերեն» աշխատությունները:

¹ Դ. Աղայան, «Իմ կյանքի գլխավոր գեղարքերը», 1893 թ., էջ 83.

² Ե. Տեմիրճիլաշյան, «Ֆրանսերեն-հայերեն բառարան», 1896 թ., առաջընթաց, էջ Ա:

Բավականին զժվարին ինդիր. կտղմել լիակատար բառարան, այն էլ կենդանի լիդուների համար, ու անհնարին գործ էր, քանի որ ամեն օր սակագիւռմ, կտղմիւռ ու փոխառնվում էին տասնյակ բառերը ճշգրիտն առած, ինքը՝ Դաղրաշյանն էլ իր առածին չի հավատում, այլտպես ինչնի բացարեր որ լիակատար բառարանների հեղինակը աշխատության վերջարանում խոսում է «բաց թողած բառերի և հավելվածի» լրացուցիչ հրատարակության մասին» կակատար բառը բառարանի հակատին դրոշմելով, ոչ միայն աշխատությունը լիակատար չի դարձնում, մի բան, որ, ինչպես ասացինք, հնարավոր չէ, այլև վասում է գործին: Բառարանների մեջ առաջ են գրավում բառերի ու գարձվածքների մի ամբողջ շրան, որոնք լիովին բաշխում են դասնում ավյալ լեզվի համար:

Դաղրաշյանի բառարանները, ի տարրերություն նախորդների, կտղմված են բնային սիստեմով, մի սիստեմ, որ միայն առաջ շահելու առավելությունը ունի նման բառարաններում և միենույն ժամանակ, իր հերթին, զժվարացնում է որպեսի բառը դանելը: Նույնիսկ բնային սիստեմով կամ, ինչպես առում են, սրներով՝ բառարան կազմելու կողմանակից Վ. Դալը ասում է: «Երկլեզվյան բառարանները պետք է դասավորվեն մեկ լեզվի այրենական կարգով¹, Երկլեզվյան բառարանները մեծ մասամբ ծառայում են թարգմանչական նպատակների, այդ իսկ պատճառով անհրաժեշտ չէ նույն բնից առաջացած բառերի ներքին կազը ցույց տալու համար ընտրել այդ ձեւը: Հատկապես հայերենի նկատմամբ ավելի մեծ բարգություններ են ստեղծվում, երբ հաշվի ենք առնում մեր լեզվի հնչյունափոխության գեղագերը: Դալի բառարանի քննադատ ակադեմիկոս Գրուզը իր „ФИЛОЛОГИЧЕСКИЕ РАЗЫСКАНИЯ“, աշխատության մեջ բննության առնելով «Толковый словарь живого великорусского языка» աշխատության առաջին հրատարակությունը, սկզբունքորեն դեմ չկանգնելով, այլ հաստատելով «այդ խելացի և հարմար սիստեմը», նշում է մի շարք սիստեմեր, ինչպես՝ «ՃԱԿԻՅ» և «ՃԱԿՅ» բառերը Դալը միացրել է, մյուս կողմից՝ «ՃԱՇԼՈ» վերագրված է «ՃԱԽԱՏ» բային, «ՊՐՈՍՏՈՐ»-ը «ՊՐՈՍՏՈՅ»-ին և այլն:

Դալը հետագայում ուզզեց՝ իր այդ կարգի սիստեմերը:

Բնային սիստեմով բառարան կազմելը ավելի նպատակա-

¹ В. Даль, „О наречиях русского языка“, стр. 53.

հարմար է միլեղվյան և այն էլ ստուգաքանական քննույթ կը ող բառարանների համար, այն էլ խիստ սկզբունքայնությամբ։ Դալը հատօւկ ընտրությամբ և մանրակիտությամբ սոտենում է միայն տուաջին բառերին, այսպես կոչված բնարմատներին, իսկ դրանցից առաջացած բառերի նկատմամբ տվելի անփույթ է և շատ հաճախ մտցնում է իր կերտած բառերը։ Դալը ընար-մատ ընդունում է հիմնականում բայց։

Դաղրաշյանի մոտ բների կազմած սկզբունքայնություն չկա, երբեմն տարարմատ բառերը միացած են մի բնի մեջ, ինչ-պես՝ ճռակ, և երբեմն միևնույն բնային բառերը տրոհված են մի քանի մասերի։ Դաղրաշյանի մոտ որոշ բներ հինգ էջ են զրա-դեցնում (ամենա...):

«Մուսերենից հայերին լիտկատար բառարանիս մեջ այբ-րնական կարգով գետեղել ենք ոռուսերեն լեղվել լիտկատար բա-ռամթերքը, — դրում է Դաղրաշյանը, — լիտկատար բառամթերք տակելով մենք հասկացել ենք ոչ միայն ոռուսերեն, այլև այն բաղմաթիվ օտար բառերը, որոնք արդեն ընդունվել և գործա-ծական են դարձել առևելենի մեջ»¹ Դաղրաշյանն ասում է. «Աղբյուրների նկատմամբ մենք հետեւ ենք Պլինիոս Կրտսերի խոսքին, թե «multum, non multa» և լատինական առածին, թե «multa nocent»։

Դաղրաշյանը իր օգտագործած աղբյուրները, գոնե հիմնա-կանները, լրիվ չի հիշատակում. ըստ իր հայտարարության չի օգտագործել Դալի բառարանը, կաժ ավելի ճիշտ՝ թերություն է համարում աղբյուրներ օգտագործելը, մինչդեռ լավագույն բառարան կազմելու համար անհրաժեշտ է օգտագործել նախորդ բառարանները, հաշվի առնել բառարանագրական փորձը և ավե-լացնել իր ժամանակի նորույթը։

Խուս անվանի բառարանագրի Դալը օգտագործել է իր աշ-խատությանը նախորդող „Словарь Академии Российской“, „Словарь церковнославянского и русского языка“, „Опыт областного великорусского слова“ աշխատությունները և ավելացրել շուրջ 80.000 բառ։ Պրոֆ. Աճառյանը «Արմատական բառարանի» համար օգտագործել է մի քանի տասնյակ բառա-րաններ և հարյուրավոր սկզբնաղբյուրներ, մի բան, որ համա-րում ենք առավելություն։

¹ Հ. Դաղրաշյան, «Մուսերեն-հայերեն լիտկատար բառարան», նախա-բան, էջ 3.

Թուս-հայերեն բառարան կաղմելու առաջին բաժինը՝ ոռուսական բառապաշտարը ընտրելը, բառարանագրական հուասություն ունեցող և բարեխիղճ աշխատողի համար անհամեմատ հեղտ էր, քանի որ այդ ժամանակներում ոռուսական բառարանագրությունը տվել էր շատ արժեքավոր աշխատություններ։ Բառարանագրի շնորհքը պետք է հանդիս գար երկրորդ՝ թարդմանական բաժնում։

Նախքան թարդմանական բաժնի հաջողություններին անցնելը, մի քանի խոսք օտար բառերի օգտագործման մասին։ Այսուղի ժամանակն է ասել, որ անդի անտեղի չպետք է օգտագործել օտար բառերը, այդպիսինները պետք է ընդունել այն գեղքերում միայն, եթե համապատասխան հայերեն կամ ավելի ճիշտ՝ ավյալ լիզվում այդ բառի հոմանիշը չկա։

Ըստհանրապես, եթե լիզունները հարստանում են նաև այլ լեզուներից փոխառություններ կատարելու ճանապարհով, ապա, միենույն ժամանակի անտեղի և անհաջող օտար բառի ընտրությունը կամ առավել են այլակերպու քերտկանական ձևեր պահպանելը հանդում է լիզվի ազգաւայրման։

Օտար բառերի փոխառության մասին բանաստեղծ Հովհաննես Թումանյանը իր «Հայոց գրական լիզվի խնդիրը» հոդվածում գրում է.—

«Լիզվի հաջող փոխառությունն ու ճիշտ թարդմանությունը մեծապես տաղանդի ու շնորհքի գործ են գառնում, բայց, գժբախտաբար, լիզվի վրա անշնորհք մարդիկ շատ են ազդում, և հասկացող ու կիրթ ճաշակի տեր մարդկանց մնում է խոսելիս թե զբելիս, փոխ առնելիս թե թարդմաննելիս զգույշ լինել ու բարեխիղճ, որովհետեւ ամեն մի հնչյուն, ամեն մի բառ, ամեն մի ձև կամ ոճ մի մեծ ստեղծագործություն է ու մի ամբողջ աշխարհը¹։

Թարդմանական բառարանների մեջ օտար բառերի դիմաց անհրաժեշտ է ճշուաթյամբ որոշել և նշանակել բառի ծագումը, մի բան, որ Դաղբաշյանի մոտ պատահական ընույթ է կրում և չկա սկզբունքային հետևողականություն։

Դազբաշյանի «Հիմակատար ոռուսերեն-հայերեն բառարանի» եթե առաջին՝ ոռուսական բաժինը պահանջում էր բարեխիղճ մոռաեցում գոյություն ունեցող աղբյուրների նկատմամբ, ապա

¹ «Թումանյանը քննադատու», 1939 թ., էջ 389—390։

Արկրորդ՝ թարգմանական բաժինը բարեխղճության հետ միաժամանակ պահանջում էր տիրապետել հայերեն լեզվի գանձերին, քընոնաջան աշխատանք տանել, արալտումներ կատարել և վերջապես բառընտրության ճաշակ ունենալ:

Դաղբաշշյանի ոռուս-հայերեն բառարանի թարգմանական բաժնի մասին խոսել նշանակում է անցնել նրա շրջած՝ «Հիանալի աշխատար հայ-ոռուսերեն բառարանի» քննությանը:

Վերեւում նշեցինք, որ բառարանի խորագրի լիակատաբ բառը ակնառու է: Հ. Ավգերյանը Դաղբաշշյանի գրքի կապակշությամբ գրում է. «Հմուտ մասնագիտաց կթողունք գատել թե որչափ հարժար է այս գործն իր նպատակին, մենք միայն ըսենք, որ լիակատար բառը չափազանց է, և բառարանի մը կատարելությունը ոչ թե բուսական կամ բնական գիտությանց վերաբերյալ բառերու կուտակությամբ կըլլա. այլ ընտիր մատենագրաց գործերի քաղված օրինակներով, լեզվի մը ղժվարին կամ սեփական գարձվածքներու առաւտ քանակությամբ. և այս վերջիններովս ճոխցած չենք տեսներ ներկա պրակը. անդրագարձություն մ'ալ ներվի մեզ ընել, որ առայժմ դեռ կարեւը չէ մեղի լիակատար բառարան մը, ընդհակառակն անհրաժեշտ է միջակ բառարան մը, որ յուր մեջ բովանդակե սուս լեզվի ամեն գործածական բառերը ու գարձվածքները»:¹

Դաղբաշշյանը իր բառարանների լիակատար լինելուն հարազատ մնալու համար ամեն ինչ մտցրել է այնտեղ, օրինակ՝ հայ-ոռուսերեն բառարանում Մեսրոպյան գրերով գրված ամեն ինչ, նույնիսկ՝ հայույական բառեր: Ինքնավստան կերպով հեղինակը հայտարարում է. «Հանուր հայության համար իմ այս գործն ուշագրավ պետք է լինի թեկուղ հենց այն կետից, որ առաջին անգամ ներկայացնում է հայությանն իր նոր լեզվի լիակատար բառամթերքն ու ոճաբանությունը»:²

Դաղբաշշյանը նախքան իր բառարանների կազմելուն անցնելը, ծանոթացել է սուս և հայ բառարանագրությանը, զուգընթացար բառեր հավաքելով բառարանային և խոսակցական լեզվից: Հ. Դաղբաշշյանի ոռուս-հայերեն լիակատար բառարանը պարունակում է ավելի քան 125.000 բառ, իսկ հայ-ոռուսերեն բառարանը մոտավորապես 70.000 բառ և 200.000 ոճեր, դարձ-

¹ «Բաղմավեպ», 1902 թ., № 9—10, էջ 460.

² Հ. Դաղբաշշյան, «Հայ-ոռուսերեն բառարան», նախարան, էջ 12:

վածքներ, տռակներ և տսացվածքներ: Հայութական բառարանագրության մեջ այս ծավալի աշխատությունները նորություն էին:

Դաղրաշյանն ընդունում է, որ Շեղուն ժողովրդի կյանքի տասիճանացույցն է, որքան մի ժողովրդի կյանքը բարդ և բազմակողմանի է, այնքան էլ նորա լեզուն անոնում ենք բարդավաճած ու զարգացած, և ընդհակառակը¹ Բայց ենց ոկյանքի տատիճանացույցը-ի ճիշտ պատկերը ցույց տալու համար անհրաժեշտ էր ավելի հողատար վերաբերմունք զեպի բառերի ընտրությունն ու թարգմանությունը, քանի որ ամեն մի անսառույց և սխալ բառ մԱննպատակ և մնակար պիտի լիներ թվել որեւէ գործնական, զպրոցական՝ կամ տաձեռն բառարանի մեջ, որտեղետև տեղիք պիտի տար սխալ ձեերի տարածմանը²:

Հայերենից ոռուերեն բառարան կազմելու համար անհրաժեշտ էր օղապորձել ոչ միայն հրապարակի վրա եղած նախկին լավագույն բառարանները, այլև անհրաժեշտ էր ընտրությունը օգուտ քաղել ժողովրդական լեզվի՝ բարբառների դանձարանից:

«Ժողովրդական լեզվի ընտրի բառերը, սեղմ ու սերտ, պատկերավար ոճերը, պարզ ու շքեղ ձեերը,—ասում է Ն. Թումանյանը,—էսօր արգեն ամենաթանկ զարդերն են համարվում հայ գրողի երկերի մեջ և համարձակ փալում են լեզվի համաձայնության վրա ու այլս կոշտության կամ աղքատության խոսք չկա նրանց զեմք»³:

Բառարանագրի վարպետությունն ու գիտությունը այս ընտրության բաժնում է, որ պետք է հանդես գար:

Դաղրաշյանի բառարաններում մենք հանդիպում ենք բարբառային բառերի, որոնք վերաբերում են, կարելի է ասել, զանազան բարբառների, երբեմն էլ այնպիսի բառերի, որոնք թերեւս երեք էլ չեն գործածվելու մեր գրականության մեջ, ինչու պես՝ բառներ՝ հողակոշտ, զուղձ, որ առաջին անգամ ավել է Ավգերյանը Motte բառի տակ: Դաղրաշյանը ոչ միայն ընտրություն չի կատարել բարբառային բառերի մեջ, այլև իր աշխատությունը ծանրաբեռնել է նաև մեծ թիվ կազմող թուրքերին բառերով:

¹ Նույն աեղ, էջ 6.

² Ն. Աճառյան, «Արմատական բառարան», 7-րդ հատոր, էջ 16:

³ Թումանյան, «Թումանյանը քննադատ», էջ 395:

Յուրաքանչյուր բառարան մի հատուկ նպատակ է հետապնդում: Թարգմանական բառարանները, ինչպիսին է Դաղբաշյանինը, բրդան էլ լիակատար անունը կըեն, չի նշանակում թե այդ լեզվով գրված ամեն մի բառ, լինի բարբառային թե գրական, օտար թե սեփական, գործածական թե գոհեհիկ ու նորակերտ, պետք է տեղ գրավին բառարանի մեջ: Ո՞չ և ոչ: Թարգմանական բառարանները պետք է ընդգրկեն տվյալ ժամանակաշրջանի լեզվի այն բառապաշարը, որն ընդունված և գործածական է տվյալ լեզվում:

Մուսահայ բառարանագիրներից Դաղբաշյանն առաջիններից էր, որ զգաց, թե

«Լիակատար բառարանը չէր կարող լոկ բռուամթերք տալով շատանալ: Ներկայումս բառարանն առանց ոճաբանությունների, թեկուզ նա հենց պարունակե լեզվի լիակատար բառամթերքը, անաքրոնիզմ պետք է համարել: Արդ կան բառեր, որոնք ունեն մի քանի նշանակություններ: Իսկ յուրաքանչյուր նշանակության հետ էլ կապված են բազմաթիվ ոճեր, առածներ ու դարձվածքներ, որոնք լեզվի համա ու հոտն են կազմում: Այս բոլորն ես իմ բառարանի մեջ առաջ եմ բերել ըստ չափու կարողության և հույս ունիմ, որ ընթերցողը գրեթե իր բոլոր ակնկալությունները կատարված պետք է գտնեա:»¹

Դաղբաշյանը հարազատ իր խոստանը՝ բառարանների մեջ մտցրել է բավականին մեծ քանակությամբ ոճեր, կապակցություններ, ժողովրդական ասույթներ:

Նախորդ բառարանների մասին բացասական կարծիք հայտնած բոլոր քննադատների դիտողությունները Դաղբաշյանն իրեն օգտագիտ է զգացել: Յաղուբյանի, Հովհաննիսյանի բառարանների մասին արված Մ. Սարգսյանի, Ստ. Մալխասյանցի դիտողությունները Դաղբաշյանն անշեղորեն օգտագործել է:

Դաղբաշյանը իր բառարանների մեջ ստեղծել է թարգմանական բառերի ճոխություն, մի բան, որ եթե մի կողմից նաև առաջարկություն է տալիս թարգմանական ընտրություն կատարելու, մյուս կաղմից՝ հոմանիշներն երբեմն հեռացնում են թարգմանված բառի բուն իմաստն արտահայտելուց:

¹ Հ. Դաղբաշյան, «Հայերեն-ռուսերեն բառարան», նախաբան, էջ 7:

վերեռում ասացինք, որ Դաղբաշյանը չի խուսափում օտար բառերից: Իր «Բառարանադրական հարցը» նամակի մեջ առում է:

«Ես ոչ միայն հակառակ չեմ, այլև ջերմ կողմանակից եմ մեր լեզուն օտար բառերով հարստացնելուն, դրան ապացույց կարող է լինել իմ երկրորդ՝ հայերեն-ռուսերեն լիակատար բառարանը, որը ժողովրդական բառերի հետ միասին տալիս է աշխարհաբարում քաղաքացիական իրավունք ստացած բոլոր օտար բառերը: Միայն թե օտարազգի բառերը չպիտի են ի չարք գործադրել (ընդգծում մերն է— Դ. Գ.), ինչպես անում են ոմանք, նույնիսկ պ. Առ. Մալխատյանը, գրելով պրավորավնի, պրավավավորությունը:¹

Դաղբաշյանը գիտակցելով «ի չարք գործադրելու» խնդիրը, ինքը բառարաններում տեղ է տվել նույնիսկ սիմոլ ձեւերի:

Դաղբաշյանի բառարանները եթե թերի աշխատություններ են որպես «լիակատար», ապա իր նախորդների նկատմամբ մեծառավելություններ ունեն, հարուստ է բառապաշտարը և ոճարանություններով ու թարգմանական մասով շատ ավելի կատարյար քան նախորդները, իսկ բառարանի, նամանավանք կենդանի լեզվի բառարանի, կատարելությունն էլ այն է, որ անկատը լինելով լեզվական ամբողջ հարստությունը բովանդակել, գոնե յուր նախորդների նկատմամբ ունենա նկատելի առավելություններ:

Դաղբաշյանի «լիակատար» բառարանները, որքան էլ հաջող կաղմամատ աշխատություններ լինեին, այնուամենայնիվ ի վեճակի չէին բավարարելու մեր ժամանակակից սերնդի պահանջները, ոչ թե սոսկ այն պատճառով, որ վաղուց հետեւ սպառված գործեր էին, այլ հիմնականում այն պատճառով, որ այդ բառարանները չունեին հազարավոր նորակերտ այն բառերն ու բառառումները, որոնք ստեղծագործվել էին սովորական էտապում:

Դաղբաշյանը 1925 թ. ձեռնարկում է իր «Թուս-հայերեն լիակատար բառարան»-ի երկրորդ հրատարակությունը, որը սակայն մնում է անավարտ: Հրատարակվել է 262 երկսյունակ էջ և ընդգրկում է մինչև դաստիարակական բառը:

Բառարանի երկրորդ հրատարակության նախաբանի մեջ Դաղբաշյանը դրում է. «Երբ իմ առաջին հրատարակության

¹ «Գործ», 1917 թ. № 7, էջ 144.

առաջին տպագրական թերթի սրբագրությունը կարդաց անմուանալի Անն Խանաղյանը . . . բացագանչեց. «Այս բառարանից հետո, այլևս ոչ ոք ուսւհայերեն բառարան չի հրատարակիւ։ Անցան 27 ձիգ տարիներ, և ոչ ոք չնամարձակվեց ձեռնարկել ուսւհայերեն լիտերատուր բառարանի գործին։ Իսկ ցանկացողակիցների թիֆս անհամար էր»։

Բառարանները, այն էլ ավելի ընդարձակները, դպրոցական դասագրքեր չեն, որ յուրաքանչյուր ուսումնական տարեսկզբի հրատարակման պահանջ դդացվի, այդ աշխատությունները տվյալ էպոխայի արտահայտությունը լինելով, անկախիրենց այս կամ այն թերություններից, բավարարում են տվյալ սերունդների պահանջներին։ Այս եղբակացությանն է ըերբում մեզ բառարանների պատմության ուսումնասիրությունը։ Այս բանը չէր ժխտի նաև Դաղբաշյանը, քանի որ նրա «թույլ աշխատանք» համարած երեցփոխանցի բառարանը ապրել է ոչ թե 27, այլ 34 և ավելի տարիներ, Հովհաննիսյանի «սխալներով լիցուն բառարանը»՝ 18 տարի և ընդհակառակը՝ Հ. Տեր-Աբրահամյանի «Նոր բառագիրքը» երեք չէր նշանակում, այդ աշխատության հրատարակությունից վեց տարի առաջ լույս տեսած, Յաղուրյանի «հայ-ուսւերեն բառարանի թուլությունը», ինչպես ասել ենք «Նոր սառագիրքը» մի թույլ, անսկզբունք և անսիստեմ բառարան էր, նախորդ աշխատությունների համեմատությամբ ավելի թույլ և եթե կուղեք ավելի հեռու էր տանում, հեռացնում նոր՝ աշխարհաբար գրականությունից ու լիզվից։

Դաղբաշյանը Ապացած իր բառարանների հաջողությամբ, դեռ 1917 թվին գրում էր. «Ինուս-հայերեն բառարանս, որից այժմ հազիվ 20 օրինակ անվաճառ է մնում, հիմնովին վերամշակել և լրացրել եմ, և նրա երկրորդ տպագրությունը, որն այժմ զրամական միջոցների սղության պատճառով հետաձգվում է, թերություններից ազատ կլինիա։¹ Մինչդեռ երկրորդ հրատարակությունը այդպիսին չէ և առաջին հրատարակության համեմատությամբ թույլ աշխատանք է։

Երենց ունեցած թերություններով հանդերձ Դաղբաշյանի բառարանները հսկայական դեր են խաղացել մեր կյանքում, նպաստել են ոսւսերեն լեզուն սովորելուն և թարգմանական աշխատանքներին։ Եթե մի կողմից վտանգագոր երեւյթ է եղել ամեն ինչ բառարանի մեջ խցկելը, ապա մյուս կողմից՝ ի մի հավաքման (լեզվի բառապաշարի) առավելությունն է ունեցել,

¹ «Թույլ 1917 թ., № 7—8, էջ 148,

իսկ հյանքը զտել է և գուրս վերել էականն ու պիտանին, ուն
նեաելով ասովածաբանական, կրոնական, գուենիկ ու մեր լեզվին
խորթ բառերը

Դաղբաշյանի հաջողության արժանացած բառարանի երկ-
րորդ հրատարակությունը ձախողվեց ոչ միայն վերև նշված
պատճառներով, այլ հիմնականում նրանով, որ առաջին ռեոլու-
ցիայի օրերին հաջողություն ունեցած բառարանը չէր կարող
պիտանի լինել նաև սոցիալիստական ռեվոլուցիայի և նրա հաղ-
թանակների շրջանի համար նշենք, որ այդ երեսույթը նկատ-
վում էր նաև Սովետական Միության մյուս ժողովուրդների մոտ:

ԲՈՌԱՐԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

Բառարանազրությունը սկսում է ուժեղ թափով զարդանալ
սոցիալիստական ռեօլուցիայից հետո Սովետական Միության
բազմազգ ժողովուրդների լեզուներով լույս են տեսնում զանա-
ղան տիպի մեծ ու փոքր՝ այդ թվում ընդհանուր և մասնագի-
տական հանրագիտարաններ, բացարարական-ստուգաբաններն,
ուղղագրական, թարգմանական, ժամանագիտական, գպրոցական և
այլ բնույթի բառարաններ, որոնք ազգային ձևով արտահայտում
են սոցիալիստական բովանդակություն: Բառարանազրությունը
սոցիալիզմի կառուցման երկրում դառնում է պայքարի միջոց:

Հայ բառարանազրությունը, Հայաստանում սովետական
կարգեր հաստատվելուց հետո, նույնպես ապրում է վերելքի շըր-
ջան: Սովետական Հայաստանի հենց առաջին տասնամյակում
հրատարակվում է մասնագիտական բառարանների մի ամբողջ
սերիա՝ իրավաբանական, երկաթուղային, առևտրա-հաշվապա-
հական, շինարարական կառուցվածքների, ռազմական, քժկա-
գիտական, աշխատանքային տերմինների, հետագայում՝ նեվրա-
յին տերմինների, անատոմիական,¹ բուսաբանական և այլ սուս-
հայերին բառարաններ:

¹ «Անատոմիական տերմինաբանական բառարանը» (կազմել են պրոֆ. Մ. Արեգյան, պրոֆ. Լ. Հովհաննիսյան, բժիշկ Ա. Ղաղաբյան, բժիշկ Ա. Տեր-Պողոսյան) խառը տիպի՝ լատին-ռուս-հայ և ռուս-լատին-հայ բառարան է: Կազմողներն էլ առում են «Ցերմինաբանական բառարանի» մեջ լատին տերմի-ները հետո դրվում է ռուսերեն ռեբունը՝ հթե կա, և ապա հայերեն տերմինը, իսկ ռուսերեն՝ տերմինի դիմաց դրվում է լատիներեն, եթե վերջինս դուրժա-
ծական է, հետո՝ հայերենը»

Այդ բառարանները հսկայական դեր են խաղացել հայերեն լեզվով վարելով՝ բժշկական, ուսումական, երկաթուղային, շինարարական և այլ աշխատանքները:

Մասնագիտական բառարաններին հաջորդում են ընդհանուր թարգմանական, քաղաքական, տերմինոլոգիական բառարանները: Առաջին անգամ լույս է տեսնում հայերեն-քրդերեն բառարան և վերջապես ռառանց որևէ զրաքննական ձեւականության¹ հրատարակվում է հայ բառարանագրության հիմնագանձը կաղմող Արմատական բառարանը:

Լեզվաշինարարության բնագավառում մեծ հաջողություն: Այս բառարանները ընդգրկում են մեր կյանքի բազմազան բնագավառների բազմապիսի բառերն ու դարձվածքները: Անցնենք այս բառարանների էությանը:

Մասնագիտական բառարանների նեղ մասնագիտական աբբեքի մասին խոսելու, հասկանալի պատճառով, որոշ դժվարություններ ունի, մենք միայն կզբաղվենք այդ աշխատությունների լեզվական-բառարանագրական արժեքով:

Մասնագիտական բնույթի բառարաններ մենք ունեինք մեր բառարանների ցանկում, ինչպես՝ Ալիշանի «Հայրուսակը», Քաջուռու «Բառգիրք արգեստից և գեղեցիկ դպրության» եռահատոր աշխատությունը (Ա. և Բ. հատորները ֆրանս-հայերեն և Գ. հատորը հայերենից-ֆրանսերեն): Էփրիկյանի «Պատկերապարդ բնաշխարհիկը», Տաղավարյանի «Ֆրանսերենից-հայերեն ախտանվաց բառացուցակը» և այլն,² սակայն ուռւսերենին առընչված առաջին մասնագիտական բառարանը «Հայփաստ»-ի հրատարակած Ռուս-հայերեն իրավաբանական առձեռն բառարանն է (Թիֆլիս 1919 թ.), եթե չհաշվենք Թիֆլիսում 1889 թ. հրատարակված „Объяснительный словарь татарских, грузинских и армянских слов, вошедших в материалы для изучения экономического быта государственных крестьян Закавказского края“—С. П. Зелинский-ի աշխատությունը:³ Զելինսկու

¹ Հ. Անապայան, «Արմատական բառարան», հատ. 7, էջ 204:

² Մասնագիտական, հատկապես բժշկագիտական հայ-ռուսերեն բառաններով հարուստ են մի շաբթ բժշկաբաններ, որոնց մեջ լավագույնը պետք է համարել Բաբյանի բժշկաբաններ կցված բառարանը:

³ Սաեփան Զելինսկին աղդությամբ հայ է, ծննդյան անունը Սամսոն, ծնվել է 1843 թ. օգոստոսի մեկին Հին Նախիշևանի Յարմջա գյուղում, մասնագիտությամբ գյուղատնտես, աշխատակցել է «Մշակ» և այլ թերթերի: 1883 թվին եղել է Երևանագործության մինիստրության աշխատակից, Մեռել է 1904 թվի հոկտեմբերի 22-ին:

բառարանը ընդգրկում է մոտ 2000 բառ, որից հայկական բառները՝ 350 բառ։ Հենց հեղինակի խոստովանությամբ, բաժիններից մեջ շփոթություն կան, հատկապես այդ բանը նկատվում է հայկական և թուրքական բառերի շարքում։ Հայկական բաժնի բառերը մեծ մասամբ ժողովրդական բառեր են կամ փոխառություն, ինչպես՝ օյմա, նախիր, ավարիկ, շնչարամ, երինջ, ետոց, տափ, տնիքսա և այլն։ Դրաբար և նոր գրական բառերը Զելինսկու բառարանում աննշան թիվ են կազմում։

Առևո-հայերեն առաջին մասնագիտական իրավաբանական շուրջ 1400 բառ պարունակող առձեռն բառարանը իր անցած ուղու մասին 18-էջյա առաջաբան ունի, ուր մանրազնին շարդրված են բառարանի բոլոր սկզբունքները, բայց ի ցավը բառարանային զրականության մեջ առաջաբանները մի բաժին են ներկայացնում, որ միայն օգտագործվում են ուսումնասիրական աշխատանքներ կատարելիս։

«Իրավաբանական առձեռն բառարան»-ի առաջաբանում՝ կարդում ենք.

«Հայերեն իրավաբանական բառարան կազմելը նշանակելի չափով ստեղծագործական մի աշխատանք է, որովհետեւ ոչ միայն մեր արդի լեզուն առնասարակ դեռ կազմակերպման ու մշակման փուլի (Փազիսի) մեջ է գտնընկալվում, այլ որ ավելի ևս կարեռը է՝ նոր հայերենը մինչև այժմ բնագ չի ունեցել իրավագիտական տերմինուղղիարիսկ հին հայերենը շատ ազգական է այդ կողմից»¹.

Իրավաբանական առձեռն բառարանի առաջաբանից իմանում ենք, որ յուրաքանչյուր բառ ստուգվել է Նուպարյանի, Լուսինյանի, Քաջունու, Նորայր Բյուզանդացու, Տեմիրճիպաշյանի ֆրանս-հայերեն, Կոյլալի գերմաներեն-հայերեն ու այլ բառարաններով։ Բառարանը ժանրազնին կերպով քննել են մեր լավագույն հայերենագետներն ու իրավաբան-մասնագետները, բայց այնուամենայնիվ, այս աշխատությունը ունի զգալի թերություններ։ Աշխատության ծավալը և բառապաշարը չի ապահովում այն անհրաժեշտ մինիմումը, որ պահանջում է իրավագիտությունը, և որոշ բառեր ստուցել են սխալ կամ պակասավոր բացարություն։ Առաջին էջում կարդում ենք՝ Ավարյա-ավարիա, ծռվավթար։ Այս բառի երկրորդ բացարությունը սխալ է, ոչ թե

¹ «Իրավաբանական առձեռն բառարան», 1919 թ., էջ 15.

ծովն է վթարման և թարկվում, այլ նավը, բեռը, ուստի պետք է թարգմանվի՝ նավավրար, բեռնավրար, և ֆրանսերեն Արագ բառը թարգմանված է «լուս նավու կամ աղխամաղխի, բեռանց»:¹ Դոմանի՝ արես թարգմանված է տանու կալանի, իսկ դոմանյա ասպարեւում մեր կամ աղխամաղխի, բեռնանց կամ աղխամաղխի:

«Ենոր հայերենի պակասություններից մեկն էլ,—գրված է բառարանի առաջարանում,—բառերից շատերի չափա- զանց երկարությունն է, ուստի մեր հոգսերից մեկն էլ եղել է բառերին կրճատ ձեւ տալը կամ նրանց կրճատ ձեերի վե- րականդումը»:²

Այս սկզբունքը մի մասնագիտության համար, ինչպիսին իրավաբանությունն է, լավ ու սաղական է, բայց այդ գեռ չի նշանակում թի բռնի բառահատություն պետք է կատարել և հավատարմատար (поверенный) դարձնել հավատար, „զայմ”ը բացատրել միայն փոխ, իսկ հաջորդ տողում զայմ անունը առողջությունը պառական է արդեն փոխ և փոխառությունը առողջությունը: Մեզ մոտ զայմ բառի համար ընդունված է արդեն փոխ և փոխառությունը առողջությունը: Անհրաժեշտությունը, որ իրավաբանական առձեռն բառարան կազմողների օգտագործած մի քանի բառարանների ֆրանսերեն Էտրունտ բառի հանդեպ եղած փոխ թարգմանությունը մնացել է սուկ բառարանային սահմաններում:

1924 թ. ՀՍԾԾ Կհնտգործկոմի օրենսդրական հանձնաժողովի հրատարակությամբ երեանում լրւյս է տեսնում ավելի ըն- դարձակ (3400 բառ) «Թուս-հայերեն իրավաբանական բառա- րան»: Այս բառարանը չի զբաղվում սուկ բառերի թարգմանու- թյամբ: Կազմողները աշխատել են տալ՝

«Ոչ միայն այս կամ այն ոռուերեն բառի հայերենը, այլև բառի գործածությունը այլ բառի հետ, ամբողջ դարձվածքնե- րով»,³ մի աշխատանք, որ հեշտացնում և կոնկրետացնում է բառի իմաստը: Աշխատության բառաքանակն ինքնին վկայությունն է, որ ավելացած են բավականին նոր բառեր, որոնք տեղ չեն գտնել իրավաբանական նախորդ բառարանի մեջ:

Իրավաբանական այս նոր բառարանը նախորդի համեմա- տությամբ ավելի հայացված է, այսպիս՝ «Հայփաստանի բառա- րանում ավանց բացատրված է՝ տվանս, կանխավճար, ավարիա—ա-

¹ Ն. Բյուզանդացի, «Դաղղիերէն-հայերէն բառարան», էջ 115:

² «Թուս-հայերեն իրավաբանական բառարան», 1924 թ., առաջաբան, էջ 5..

³ Նույն տեղ:

ժարիա, ծովավրար, իսկ նոր բառարանում՝ ավահ—կտնխավնար, ավարիա—ծովավրար և այլն։ Նույնիսկ Շերքեմն մի ոռուերեն բառուի դիմաց, —զրում են կազմողները, —դրել ենք հայերեն երկուերեք հոմանիշ բառ, ընարությունը թողնելով գործածողներին, եթե երկուսի-երեքի գործածությունն էլ թույլտարելի ենք համարել¹։

Իրավաբանական բառարաններին հաջորդում են Մ. Արեգյանի «Ծուս-հայերեն ռազմական բառարան»-ի, մի խումբ հայագետների ու մասնագետների կազմած «Երկաթուղային տերմինների սուս-հայերեն բառարան»-ի, Վ. Փոթեյանի «Ծուս-հայերեն աշխատանքային բառարան»-ի, իսկ ավելի տուաջ՝ բժշկական դիտությունների գոկտոր՝ Վ. Արծրունու «Ծուս-լատին-հայ բժշկագիտական բառարան»-ի հրատարակությունները։

Այս բառարանները 1928 թ. հրատարակված «Ծուս-հայերեն բառարան շինարարական կանուցվածքների» հետ կազմում են մեր մասնագիտական բառարանների լավագույն նմուշները, բառարաններ, որոնք իրենց փոքր թերություններով հանդերձ, օգտագործելով մեր զրական և ժողովրդական լեզվի հարստությունները, ստեղծել են այդ մասնագիտությունների գծով հատուկ տերմինուգիտական կայստանի բժշկական, շինարարական, ռազմական և այլ մասնագիտության կաղըերը իրենց աշխատանքի պրակտիկայում հիմնականում օգտագործում են այդ բառարանների տերմինուգիտական։

Մասնագիտական բառարաններում տրված են միայն բառերի ավյալ մասնագիտությանը վերաբերող առումները։

«Առնված են միայն բառերի կարևոր նշանակությունները, երբեմն նաև այնպիսի բառեր, որոնք թեպետ այժմ հնացած են, բայց կարող են այս կամ այն կերպ պիտանի լինել այս բառարանին զիմողների համար, —զրում է Մ. Արեգյանը, —բացի այդ՝ գուցե ոմանց կթվա թե այս բառարանի մեջ տեղ են գտել բառեր, որոնք ըստ երեսութիւն ռազմական բառեր չեն։ Բայց ռազմական դորձն այնպիսի բազմազան շփում ունի կյանքի, արվեստի և գիտության բազմաթիվ կողմերի հետ, որ շատ այսպիսի բառեր նույնքան անհրաժեշտ են համարվում, որքան և բուն ռազմական բառերը»²։

¹ «Իրավաբանական բառարան», 1924 թ., էջ 5.

² Մ. Արեգյան, «Ծուս-հայերեն ռազմական բառարան», 1925 թ., առաջապահն, էջ 5.

Երկաթուղային տերմինների բառարանի մեջ վեճելի է տարիքային ցուցակի ապրանքների բառերը, որոնք առանց քննության, ինժեներ լ. Տեր-Միքայելյանի պահանջով, բառարանի մեջ է մացրել Հ. Սպենդիարյանը։ Տարիքային բառերը՝ երկաթուղային բառարանը «ծանրագեննելուց» բացի ուրիշ առավելություններ չունեն։

Մեր օրերի մասնագիտական բնույթ կրող բառարանները բոլորն էլ կազմվել են ոռուսերենից-հայերեն, հակառակը կազմելու միակ փորձը «Երկաթուղային տերմինների հայ-ոռուսերեն բառարանն» է, որը ըստ գրքի շապկի լույս է տեսել 1927 թ., իսկ ըստ առաջին էջի՝ 1925 թ.։

Բառարանների-ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ամենալավագույն բառարանները շրջելիս դադարում են ոչ միայն նույն որակն ունենալուց, այլև շատ գեղագերում դառնում են անարժեք և անօգտագործելի Այսպիս, Դաղբաշյանի «Ծուս-հայերեն բառարանում» հանդիպում ենք „ԸԿՈՏՈԿՐԱԾ,-ԾՏՅՈ”, բառերին տավարագող, -ուրյան հայերեն թարգմանությամբ և ճիշտ է, բայց սխալ է, եթե նույն հեղինակը իր հայերեն-ոռուսերեն բառարանում գրում է հայերենում գոյություն չունեցող տավարագող, -ուրյան բառերը և թարգմանում ԸԿՈՏՈԿՐԱԾ,-ԾՏՅՈ ոռուսերեն բառերով։

Հայ-ոռուսերեն երկաթուղային տերմինների բառարանը շըս-ջան բառարան լինելով, իր հայկական բառաշարքում տեղ է տվել այնպիսի բառերի, որոնք թեռևս հայերեն միայն գրվել են «Ծուս-հայերեն երկաթուղային տերմինների բառարանում»։

«Հայ-ոռուսերեն երկաթուղային տերմինների բառարանում» չի տրված ոչ մի աներաժեշտ բացատրություն, մվ է կազմվել բառարանը, չի նշված, թի նշանակում աստղանիշները,¹ չի պարզաբանված և այլն։ Եթե հրատարակչությունն այն կարծիքին է եղել, որ յուրաքանչյուր գործածող պետք է ունենա և «Ծուս-հայերեն» բաժինը, այդ դեպքում պետք է երկու հատվածները առնվելին մի կազմի տակ, ինչպես երանի «Անգլո-հայ և հայ-անգլերեն բառարանները»։

Երկաթուղային տերմինների բառարանի սուս-հայերեն հատվածում եթե այս կամ այն չտվով հնարավոր է արդարացնել

¹ Հ. Սպենդիարյանի ավելացրած տարիքային ցուցակի ապրանքների բառերը

Հ. Սպենդիարյանի տարիքային բառերի բացատրությունը, թարգմանությունը, տպա մվասց, որ հայերննում գոյություն ունի ժույա (չոյա), ժելե (շելե), տրյուկ, ուրյուկ (յրօկ), կուդրավշիկ (հասարակ ընկույզի տեսակ—կուդրյանչիկ), կուրկում (կորկում) և շատ ու շատ տյու կարգի բառեր:

Մասնագիտական բառարաններ կազմելու այս առաջին փորձերը պետք է հնարավորություն տային ավելի լավագույնները կազմելու, մինչեւ նախորդների համեմատությամբ շատ ավելի պակասավոր աշխատություններ են Մ. Տեր-Հովակիմյանի «Առեւտրահաշվապահական տերմինների համառոտ ուռուհայիրեն բառարանը», բուսաբանական տերմինների և այլ համառոտ բառարանները:

Վերջին բառարաններից, որպես նմուշ, քննենք «Առեւտրահաշվապահական տերմինների բառարան»-ը:

Ա. Հովհաննիսյանի բառարանի կապակցությամբ նշեցինք, որ երկու լեզվի լավ իմանալը դեռ երաշխիք չէ հաջող բառարան կազմելու, այսուղ մենք պետք է ավելացնենք նաև, որ լավ մասնագետ լինելը նույնպես երաշխիք չէ ավյալ մասնագիտության հաջողված բառարան կազմելու Մասնագիտական բառարանների ուսումնասիրությունը մեզ տառմ է, որ նրանցից լավագույնը կազմել են երբեմն մեր ոչ մասնագետ, բայց բառարանագրությանը քաջածանոթ անձնավորություններ են. Տեր-Հովակիմյանը կարող է շատ լավ իմանալ հաշվապահական բոլոր ձեռվերն ու հոգվածների տարածումը, բայց անտեղյակ լինել, և իրոք այդպես է, բառարանագրական հոգվածներին:

Հաշվապահական տերմինների բառարանի առաջաբանում գրված է.

«Միևնույն բառը մի քանի նշանակությամբ գործածելու դեպքում, զուտ առևտրահաշվապահական իմաստով, աըբաված են հնարավոր բոլոր թարգմանությունները և բաժանված են ստորակետներով կամ թվանշաններով¹ (ընդգծումը մերն է—Գ. Գ.):

Դիտության, բառարանագրության մեջ կամ հասկացողությունը չկա, ամեն ինչ պետք է լինի պարզ, որոշակի: Օրինակ՝ ինչպես կուահել, որ հաշվապահական տերմինների բառարանի

¹ Մ. Տեր-Հովակիմյան, «Համառոտ ուռուհայերեն բառարան առեւտրահաշվապահական տերմինների», էջ 6:

адресат բառի հասցեաներ, մուրիակտաւեր բացատրությունների մեջ հղած ստորակետը տրոհում է առումները, իսկ շայր բառի աժուր, առօր բառերի միջև հղած ստորակետը՝ բացատրության հոմանիշները:

Բառարանի թարգմանությունները պակասավոր են և սխալ ինչպես սեյփ թարգմանված է՝ սեյֆ (պողպատյա արկղ բանկերում՝ թանկարժեք իրեր պահելու համար): Սեյֆ (անգլ. safe—անվտաս, անվթար, պահով, զերծ, անվտանգ) միայն արկղ չէ, այլև հրզեհից պաշտպանված սենյակ և բացի այդ՝ սեյֆը միայն բանկերում չի լինում, այլև ուրիշ հիմնարկներում: Սեյփը պետք է թարգմանված սեյֆ, գանձապահորան, չնրկիզնող պահոց: Կոմандировка թարգմանված է գործուղարկ, ինչու ոչ արդեն տարածված՝ գործուղում: Ծծելայ ուղարկած թարգմանված է՝ ըստ գործյա գնահատություն, փոխանակ՝ սերմինարանություն: Տօվարօօբորոտ—ապրանքի շրջանառություն, փոխանակ՝ ապրանքաշրջանառություն, նամանավանդ բառարանի հեղինակը չի խոսափում ապրանքափոխանակություն—տօվարօօբում բառը գործածելուց: Կրյուկ թարգմանված է՝ կրուծիա կտմ կիսուշտոփ (1/10 վեցրո): Բուխгалտեր—հաշվապահ, տոմարակալ: Տոմարակալ, տոմարակալություն բառերը մեր այսօրվա պրակտիկայում գրեթե մոռացության տրված բառեր են: Արիֆմոմետր—բվաչափ, այնինչ պետք է թողնվեր արիֆմոմետր:

Բառարանագրական օրենքով բառի առումների բացատրությունն ավելի կոնկրետացնելու նպատակով այդ բառերը վերցնում են կապակցությունների մեջ, այսպես է վարդել նաև Ֆեր-Հովհակիմյանը, ինչպես՝ բացայ թարգմանված է բազմժ և հետո բարու բացայ—ծանրոց: Պարզաբանվեց բազմժ բառի գործածությունը, իհարկե հչ:

Ուղղագրական տեսակետից նույնպես թերի է այս աշխատությունը: Բացի տպագրական բազմաթիվ վրիպակներից, կան սխալներ, որոնք բխել են հեղինակի ունեցած ուղղագրական և կղզունքներից: Օտար բառերի զույգ բաղաձայնների նկատմաքը հայերենում վեճ է եղել, նրանք, ովքեր ուստերեն լեզվի տեսանկյունով են մոտեցել խնդրին, կողմնակից են եղել զույգ բաղաձայն գընլու՝ կոլլեկտիվ, կոմմունիստ, առտեսատատ, իսկ ովքեր, իրավացի կերպով, այդ բառերի մայրենի լեզվի տեսանկյունով են մոտեցել, կողմնակից են եղել մեկ բաղաձայնի, ինչ-

պես՝ կոլեկտիվ, կոմունիստ, առևտատ և այլն. Դեմք վերաբերվել է միայն բառամիջում եղած զույգ բաղաձայներին, իսկ բառավերջում բոլորն ել կողմանից ևն եղել մեկ բաղաձայնի գրության։ Մ. Տեր-Հովհակիմյանը այնքան հետևողական է այս խնդրում, որ բառավերջում էլ ընդունում է զույգ բաղաձայնի տառադարձությունը՝ արցիս (абдисса), պրոցես (процесс), դիագրամ (диаграмма), բայց ունի նույն կուլիս (кулисса), ժիրովրամ (килограмм) և այլն։¹

Օտարազգի բառերի հայերենի տառադարձման օրենքներից մեկն է, որ բառասկզբի „ԵՐԱ“ տառադարձվում է միշտ հայերեն «Ա»-ով, «Ը»—«Թ»-ով և «Կ» և «Ծ»-ով, բայց Տեր-Հովհակիմյանի բառարանը շեղվում է այս կանոնից և դրում՝ բամբուր (рамбурс), բեզալիա (регалия), բեզմաննու (регламент), բեզրես (регресс), բեյ (рейс), բեկվերենտ (рекламент), բեմարկա, բեսկոնտր և այլն, կոմ սեքվեստր (լատ. sequestrum) տառադարձված է սեկվեստր, փոխանակ՝ սեկվեստր, և ընդհակառակը, ԿИЛО, կилограмм, տառադարձված է՝ ֆիլո, ֆիլոգրամմ, ֆիլոմետր, փոխանակ՝ կիլո, կիլոմետր և այլն².

Մ. Տեր-Հովհակիմյանի բառարանը այս տեսանկյունով կարելի է կոչել՝ Բառարան առևտրա-հաշվապահական տերմինների առևտրենից հայատառ առևտրենների լեզվի։

Հայերեն լեզվի մեջ բարդ բառերի երկրորդ մասն է էական նշանակություն ստանում, այսպես՝ երբ առում ենք զրասեղան, էականը այն սեղանն է, որի վրա գիր ենք դրում և ոչ թե այն պիրը, որ սեղանի վրա է կատարվում։ Եյս օրենքը նույնպես չի պահպանված։ Մ. Տեր-Հովհակիմյանի բառարանում՝ Վերցնենք մի օրինակ։ ԿՈՆՏՈԿՈՐԵՆ բառը թարգմանված է ընթացիկ հաշիվ, հաշվինքաց։ Եթե այս ԿՈՆՏՈԿՈՐԵՆ բառի բացատրությունների մեջ եղած ստորակետը նշանակում է հոմանիշների տրոհում, այդ

1 Նվրոպական մի շաբաթ լեզուների մեջ կրկնակ բաղաձայների գրությունը երբեմն ուրիշ նպատակի է ծառայում և երբեք երկու բաղաձայն չի կարգացվում։ Կրկնակ լինելու տարբերում է միայն աչքը և ոչ ականջը, այսպես՝ գերմ. Gruppe, Suppe, Symmetrie կարգացվում են որպես մեկ բաղաձայնունեցող բառեր, մինչդեռ հայերեն կրկնակ զբելը, կրկնակ էլ կկարգացվի։

2 Կիլո բառը հունարեն chilioi—հազար բառն է, և հայերեն պետք է տառադարձել քիլո, բայց քանի որ մեր փոխառությունը կատարվել է ոռևերենի միջոցով, հետեւապես պահպանվում է կիլո գրությունը։

ղեղքում հեղինակը սխալվում է, քանի որ ընթացիկ հաշիվը երբեք հոմանիշ չէ՝ հաշվընթաց բառին։ Մաթեմատիկայի մեջ, եթե արտադրիչների տեղափոխություններից չի փոխվում արտադրյալը, ապա լիզի մեջ՝ բարդության մասերի տեղափոխություններից փոխվում է բառի իմաստը. այսպես, միևնույն բառերից կազմված լինելով, տարբեր են փակուլի (տուն), ուղիֆակ (զատա), սիրաբանություն—բանափրություն, արգելատուն—տնարգել, գլխակօր—կորագուի, ջրակարիլ—կարիլքազուր, բանավեն—վիճարան, միջազգային—ազգամիջան, խաղարուլք—բդրախաղ և այլ բառերը, իսկ եթե ստորակետը բաժանում է բառի բացարձության տարբեր առումները, կամ ըստ հեղինակի ունի մեջման նշանակությունը, այդ դեպքում նույնպես սխալվում է հեղինակը, քանի որ իտալ. contocorrente բառն ունի միայն ընթացիկ հաշիվ նշանակությունը¹.

Առևտրահաշվապահական տերմինների բառարանի բոլոր բառերը, առանց սկզբնատառերի վերնագրման կամ անշատման, իրար հաջորդում են և որպես saldo փոխանցվում. մյուս երեսին:

Հրատարակված մասնագիտական բառարանները օժանդակում էին մի որոշակի բնագավառի բառերին ու տերմիններին ծանոթանալու, իսկ ընթերցող լայն մասսաներին բավարարելու համար ընդհանուր բառարան ունենալու պահանջը օրավուրուժներում էր. Դաղրաշյանի բառարանները չէին կարող բավարարել այդ պահանջները։ Մենք տեսանք արդեն, որ Դաղրաշյանը 1925 թ. ձեռնարկեց իր բառարանի երկրորդ հրատարակությանը, բոլոր թերթերը ողողեց հայտարարություններով, բացիկներ ուղղեց հարյուր ու մի կազմակերպությունների և անձնավորությունների, բայց ապարդյուն, նրա աշխատություններն արդեն կատարել էին իրենց արժեքավոր զերը։

Մասսայական այս պահանջը նկատի առնելով, Գետհրատը հավաքական ուժերով կազմում և հրատարակում է «Ծուռ-հայերեն նոր բառարան», որի առաջին հատորը լույս տեսավ 1933 թ. և երկրորդը՝ 1935 թ.։

Այս բառարանն ընդգրկում է 80,000 բառ ու արտահայ-

¹ Բառարանագրության լիզի մասին առև. Գ. Դասպարյան, «Սովետահայ բառարանագրության լիզուն», Հայկական ՍՍՌ Գիտութ. Ակադեմիայի Տեղեկագիր, № 4, 1947 թ.։

տություն սուսերենի համառատ քերականությամբ և օտարազգի դարձվածքների բառակարով:¹

Ռուս-հայերեն նոր բառարան կազմողները բառարանի առաջարանում նշում են, որ նախորդ բառարանները չեն կարող բավարարել մեր այժմյան ընթերցողի պահանջները, որովհետեւ՝ ընախ՝ փոխվել էր սուսերենի բառապաշարը: Հնանալով, պրծածությունից գուրս էին ընկել մի շարք բառեր և ասություններ, և հանրային քաղաքական կյանքի ու գիտության գարգացման հետեւանքով ավելացել էին բազմաթիվ նորանոր տերմիններ ու արտահայտություններ: Երկրորդ՝ սուսերենից շատ ու շատ ավելի փոխվել կարելի է ասել, հեղափոխվել էր հատկապես հայերենի բառապաշարը: Պետական հիմնարկներից վտարված լեզու լինելուց հայերենը զարձել էր պետական լեզու, որը պարտադրաբար գործ է ածվում Հայաստանի Ս. Խ. Հանրապետության պետական ապարատում ու հիմնարկներում, բանակում, ուղղոցներում ու գիտական բարձրագույն հաստատություններում և այլն: Այսանդ արգեն անհնարին էր պահանջված բառից ու արտահայտությունից խուսափել մեջ տալ ու անցնել Կյանքը հրամայաբար պահանջում էր գտնել ու գործածել նորանոր, հայերենում մինչև այժմ չեղած բառեր, տերմիններ, արտահայտություններ ու ասություններ: Այս ճանապարհով հազարավոր ու հազարավոր բառեր էին ավելացել հայերենի հին բառապաշարի վրա, որոնք պետք է զբանցիկն և բառարանագրական մշակման ենթարկվեին:²

Հին բառարաններից օգտվելու դժվարություններից մեկն էլ ուղղագրությունն էր: Փոխվել էր թե սուսերենի և թե հայերենի ուղղագրությունը:

Ռուս-հայերեն նոր բառարանը կազմված է „Иностранные слова в словарях“ ընդհանուր վերնագրի տակ լույս տեսնող բառարանների հիմունքներով և հիմնականում՝ նույն բառապաշարով:

Սոցիալական ուսուցիչան սուսերեն լեզվի արժեքը է՝ ավելի բարձրացրեց, արդեն «Ովկ ուղում է կուլտուրական լինել,

¹ Հետազայում բառարանի այս վերջին բաժինը լույս տեսավ տանձին գրքով. Ե. Տեր-Մինասյան, «Օտարազդի դարձվածքների գրանի բառգրքույի գերնադրով»:

² «Ռուս-հայերեն նոր բառարան», 1933 թ., առաջարան, էջ 3:

Նա չի կարող յոլա գնալ առանց ռուսաց լեզուն իմանալու։ Ով ուղում է լինել կըթված, նա չի կարող հաղորդակից չլինել ռուսական՝ կուլտուրային, ռուսական գրականության երկերին» (Ա. Միկոյան)։

Բուսաց լեզվի անհրաժեշտության հետ միաժամանակ նույնքան տնհրաժեշտություն էր հայերեն լեզվի բառապաշարի ի մի հավաքումը, որի մեջ արտացոլվում է ժողովրդի զարգացման, քաղաքակրթության աստիճանը։ Նոր բառարան կազմելու թերեւ ամենտղժվարին և պատասխանատու դործը այս վերջին չնողիրն էր կազմողները նշում են՝

«Մենք առաջնորդվել ենք այս սկզբունքով, որ բառարանը պետք է նպաստի ոչ միայն օտար լեզվին հմտանալուն, այլև նենց մայրենի գրական լեզուն ավելի ու ավելի յարացնելուն և սրան, իրեւ մշակույթի հղոր գործոնի, տիրապետելուն։ Այս նպատակադրումով ջանացել ենք, որ «Ռուս-հայերեն նոր բառարանի» հայերենը լինի մաքուր ու միակերտ գրական լեզու։ Սրա համար էլ մենք ըստ ամենայնի խուսափել ենք լեզվական այլատարը խճացումից, գրաբարածե ասություններից ու բացատրություններից և զուտ տեղական գալիքաբանությունից, մի պարագա, որ մինչև այժմ ընդհանրապես անտեսված է եղել ռուս-հայերեն ընդհանուր բառարան կազմողների կողմից»¹ Միանգամայն ճշմարիտ և իրավացի քննադատական վերաբերմունք անցյալի ժառանգության վերաբերյալ «Եզրվական այլատարը խճացումից խուսափելու և «մաքուր ու միակերտ գրական լեզվի» բառարան տարբ նպատակադրում։

«Միաժամանակ, — շարունակում են բառարան կազմողները, — խուսափելով նկարագրական-բացատրական եղանակից ու հետևելով սուսերեն բառի դիմաց հայերեն համապատասխան որոշակի բառ կամ տերմին դնելու կանոնին, մենք օգտագործել ենք ձեռքի տակ եղած հին, նոր ու նորագույն գլխավոր աղբյուրները, դիմելով նաև ժողովրդական կենդանի լեզվի հաճախ չգրանցված բառամթերքին, իսկ այս բոլոր աղբյուրների անբավարար լինելու զեպքում կազմել ենք համապատասխան հայերեն նոր բառեր — սրանց թիվը հաղարների է հասնում — զեկավարվելով իմաստի

¹ «Ռուս-հայերեն նոր բառարան», առաջաբան, էջ 5։

Հշտության և բառի սեղմության ու բարեհնչյունության նկատառություն։¹

Չափազանց խելամիտ տողեր, սակայն մըքան ճիշտ է կիրառված, այս է էական խնդիրը։ Երբ ծանոթանում ենք այս բառարանին, թե կուզ հարեանցի, անմիջապես աչքի են ընկնում «բարեհնչյուն» նոր բառերը։ Ցավոք պետք է նշենք, որ այդ «հազարների հասնող» նոր բառերը որևէ նշանով չեն կրել կազմովների սիփուկանության կնիքը։ Այդ նոր բառերից են՝ կրպակառ (линейка), տեղաշարժ (локомотив), սաստկախոս (микрофон), ետագայրիչ (антенна), բիստմեննա (инкубатор), երկարակառ (дороги), օծակօշիկներ (смазные сапоги), օծելուիկ (помазанница), փայտ բան (деревянная лопата), եղագալափած (сыгранныость), ծալամուտ (подхалим) և նման հազարներ։

Բառարան կազմելին, ինչպես ասել ենք, տեխնիկական գործչել, այլ ստեղծագործական աշխատանք, ինչպես մյուս գիտական աշխատանքները։ Բառարան կազմելիս հաճուխ մի բառի թարգմանության համապատասխան բառ գտնելու համար անհրաժեշտ է լինում օրեր մտածել, պրատումներ կատարել։ Գրոֆ. Մ. Արեգյանը պատմում էր, թե ինչպես ինքը, պրոֆ. Ստ. Մալխասյանցը և Տ. Հովհաննիսյանը «Առձեռն իրավաբանական բառարան»-ը կազմելու ժամանակ երկար մտածել ու պրատումներ են կատարել ուստի են քրոք բառը հայտցնելու ուղղությամբ։ Առաջարկություն է եղել թարգմանել կիտիկ (Տ. Հովհաննիսյան, հետագայում նաև Ստ. Մալխասյանց), ժամանակակետ (Մ. Արեգյան), բայց նետագայում գործածական և ընդունելի։ Է դառել ժամկետ ձեզ, այսպես և շատ ու շատ բառերի նկատմամբ։

Ռուս-հայերեն նոր բառարան կազմողներին վերագրած բառերից մի մասը կարող է իրենց կազմածը չլինել իհարկե, բայց այդ հանգամանքը պատահանատվությունից չի աղատում նրանց։ Բառարան կազմելու ժամանակ անհրաժեշտ է ճաշակ ունենալ՝ և՛ ունեցած և՛ ժողովրդի մեջ եղած բառերից ընտրություն կատարելու և նոր բառեր կազմելու համար։

Ստ. Մալխասյանցը Գվիդոն Լուսինյանի «Թրանս-հայերեն նոր բառարան»-ի մասին գրած քննադատության մեջ ասում է՝ «Եթէվար թե ճաշակ ունեցող հայ ժարդը կարողանա հաշտվել՝ պարանաչուանել — débosser, արգելարածիլ—forgai-

¹ «Ռուս-հայերեն նոր բառարան», առաջարան, էջ 5—6.

ser, լրադրամ—appoint, վիճկեստրախույս—échappé de Biscétre, տղեմաննարտավարօւթյուն—Entéremiase, աղեծփս-նատքրտաբափություն—Entérepirophalocèle և այլ այս տեսակ նոր բառերի հետ, և դժվար թե սրանք երբեքն իսկապես բառ գառնան։ Դրանք ծնած օրից մեռած են և այս բառարանից դուրս կյանքի և գրականության մեջ գործածություն չեն ունենում։¹

«Թուս-հայերեն նոր բառարան» կազմողների խոստովանությամբ, իրենք հետ չեն մնում բառահորինման ասպարեզում իրենց նախորդ՝ հայտնի բառահորինից Գ. Լուսինյանից։ Մուս-հայերեն բառարանի նորահնար բառերի մի մասը իգականացված է «ունի» մասնիկով, անկախ նրանքց, բառը գոյական է թե ածագան և օրեկտը կենդանի է թե մեռած, ինչպես՝ քզկուեի (карлица), խցանուեանուեի (пробочница), եղկարդուեի (шлифовальщица), ծալցուեի (фальцовщица), գեներալուի (генеральша), գրուեի (сердоболка), գիշատչուեի (хищница), գիշերտեածուեի (сомнамбулистка), արագուեի (аистиха), գրավտվուեի (залогодательница), գրորդուեի (литераторша), երեսպաշտուեի (лицемерка), երգեհոնկարուեի (шарманщица), գրտնակչուեի (катальщица), երևակայորդուեի (фантазерка)։ Նոր բառարանում հանդիպում ենք նաև բառերի հետեւյալ բառաշարքին՝ մասկվուեի, մասկովուեի (москвичка), կիևուեի (киевлянка), հռոմուեի (римлянка), բեռլինուեի (берлинка) բառերի, որոնք չեն պատահում հայերեն գրական լեզվի մեջ։ Այս «ունի»-ամոլությունը այնքան առաջ է գնացել, որ կազմվել է նաև այս բառարանի «պարզերից» մեկը՝ մեռելուեի (ПОКОЙНИЦА) բառը։

Արևեստականորեն կազմված բառերի մեծ մասը բառարանային սահմաններից դուրս չեն գալիս, այնպես որ, այս բառերից մեծ մասը չեն և չեն կարող մերզել մեր գրական լեզվին։ Նույն է նաև մյուս ժողովուրդների մոտ։ Այսպես՝ Դալը առաջարկուել էր կոկետ բառի փոխարեն գործածել՝ միլունդնից, կրասուտկա, ժեմաննից, խօրոշուհա, կազուկա կամ պուրիստի փոխարեն չիտք և այլն, սակայն ոռուերեն լեզվի մեջ գործածական մնացին միայն կոկետ, պուրիստ բառերը։

Լեզուն հարստանում է ածանցավոր և բարդ բառեր կազմելով, բայց այդ բարդություններն ու ածանցումները պետք է

1. «Մուլք», 1901 թ., № 1, էջ 209.

կազմել այնպես, որ արտահայտի ճիշտ խմաստը և լինի ճաշակով, այլապես չեն կարող տարածվել ու ժամայտկանացվել և ընդհակառակը՝ բառարանի ու առօրյա խոսակցական լեզվի մեջ կառաջանա մի մեծ բացառ:

Գ. Լուսինյանի բառարանում հանդիպում ենք երկարաշունչ բարգությունների, ինչպես՝ ջրածնալեղակյուղային (Hydrin-dique), ավարանաջրգողաբարյան (Hydroarion), և այն Ռուս-հայերեն նոր բառարանը հետեւում է այս սխալ պրակտիկային և կաղմում՝ օդոչվազիտուրյան (авиатика), աղանդերագողալ (десертная ложка), խարդախաշահաւքյան (шахер-махерство), գրակարդացուի, հաշվառությունի (начетчица) և այլն, բառեր, որ անշնորհքության հետ միասին, իրենց երկարությունն էլ դասնում է կորույան պատճառ:

Երկինդվյան բառարանները չփետք է ծանրաբեռնել հումանիշների շարանով: Հոմանիշների շաբան ստեղծելու ոլորտ սկզբունքը «Ռուս-հայերեն նոր բառարան»-ի հեղինակները նույնպես ժառանգել են իրենց օգտագործած Գ. Լուսինյանի բառարանից:

Հարկանցի կերպով թերթենք այս բառարանը և կհանդիպենք սիրով բառի գեմ՝ 10 թարգմանական բառի, բառի պատճեն և գործադրությունը՝ 11 բառ, սուրբությունը՝ 12 բառ, սուրբությունը՝ 13 բառ, սուրբությունը՝ 14 բառ, սուրբությունը՝ 15 բառ, սուրբությունը՝ 16 բառ, սուրբությունը՝ 17 բառ, սուրբությունը՝ 18 բառ, սուրբությունը՝ 19 բառ, սուրբությունը՝ 20 բառ, սուրբությունը՝ 21 բառ, սուրբությունը՝ 22 բառ, սուրբությունը՝ 23 բառ, սուրբությունը՝ 24 բառ, սուրբությունը՝ 25 բառ, սուրբությունը՝ 26 բառ, սուրբությունը՝ 27 բառ, սուրբությունը՝ 28 բառ, սուրբությունը՝ 29 բառ, սուրբությունը՝ 30 բառ, սուրբությունը՝ 31 բառ, սուրբությունը՝ 32 բառ, սուրբությունը՝ 33 բառ, սուրբությունը՝ 34 բառ, սուրբությունը՝ 35 բառ, սուրբությունը՝ 36 բառ, սուրբությունը՝ 37 բառ, սուրբությունը՝ 38 բառ, սուրբությունը՝ 39 բառ, սուրբությունը՝ 40 բառ, սուրբությունը՝ 41 բառ, սուրբությունը՝ 42 բառ, սուրբությունը՝ 43 բառ, սուրբությունը՝ 44 բառ, սուրբությունը՝ 45 բառ, սուրբությունը՝ 46 բառ, սուրբությունը՝ 47 բառ, սուրբությունը՝ 48 բառ, սուրբությունը՝ 49 բառ, սուրբությունը՝ 50 բառ, սուրբությունը՝ 51 բառ, սուրբությունը՝ 52 բառ, սուրբությունը՝ 53 բառ, սուրբությունը՝ 54 բառ, սուրբությունը՝ 55 բառ, սուրբությունը՝ 56 բառ, սուրբությունը՝ 57 բառ, սուրբությունը՝ 58 բառ, սուրբությունը՝ 59 բառ, սուրբությունը՝ 60 բառ, սուրբությունը՝ 61 բառ, սուրբությունը՝ 62 բառ, սուրբությունը՝ 63 բառ, սուրբությունը՝ 64 բառ, սուրբությունը՝ 65 բառ, սուրբությունը՝ 66 բառ, սուրբությունը՝ 67 բառ, սուրբությունը՝ 68 բառ, սուրբությունը՝ 69 բառ, սուրբությունը՝ 70 բառ, սուրբությունը՝ 71 բառ, սուրբությունը՝ 72 բառ, սուրբությունը՝ 73 բառ, սուրբությունը՝ 74 բառ, սուրբությունը՝ 75 բառ, սուրբությունը՝ 76 բառ, սուրբությունը՝ 77 բառ, սուրբությունը՝ 78 բառ, սուրբությունը՝ 79 բառ, սուրբությունը՝ 80 բառ, սուրբությունը՝ 81 բառ, սուրբությունը՝ 82 բառ, սուրբությունը՝ 83 բառ, սուրբությունը՝ 84 բառ, սուրբությունը՝ 85 բառ, սուրբությունը՝ 86 բառ, սուրբությունը՝ 87 բառ, սուրբությունը՝ 88 բառ, սուրբությունը՝ 89 բառ, սուրբությունը՝ 90 բառ, սուրբությունը՝ 91 բառ, սուրբությունը՝ 92 բառ, սուրբությունը՝ 93 բառ, սուրբությունը՝ 94 բառ, սուրբությունը՝ 95 բառ, սուրբությունը՝ 96 բառ, սուրբությունը՝ 97 բառ, սուրբությունը՝ 98 բառ, սուրբությունը՝ 99 բառ, սուրբությունը՝ 100 բառ:

Ռուս-հայերեն նոր բառարան կազմողները բառարանից օգտվողներին ընտրություն անելու լայն հնարավորություն տառալու համար հոմանիշներ բերելիս նույնպես պետք է քննադատական մոտեցում հանդիս բերեն, հմտորեն օգտագործեին անցյալի ժառանգությունը և ավելի խստապահանջ լինելու իրենց նկատմամբ և չստեղծեին հոմանիշների շաբան: Հոմանիշների բազմազնությամբ երբեք օգուտ չեն տալիս թարգմանիչներին, ընդհակառակը, ավելի ու ավելի դժվարացնում են դործը:

Նոր բառարան կազմողները բառերի առումները բացարեկու համար շատ դեպքերում դիմում են կապակցություններին վեց չափաղանց դրական գործ է, բայց կազմողներին արդեն

հայտնի է, թե որքան ամոթալի է, որ ԴՕՄ բառի տակ վերված են մի քանի առումներ, մինչև խոկ՝ դոմ մծու և դոմ տերությունները: Ընդհանրապես բացատրության համար վերցված կապակցությունները պետք է լինեն ժամանակակից, տիպիկ և բնորոշ:

Օտար բառերի օգտագործման վերաբերյալ, բառարանի առաջաբանից գտնելով, կազմողները շատ ճիշտ տեսակետի վրա են կանգնած, գրելով «Թաղաքացիություն ստացած կրոպական բառերը հայերենում պահել ենք ընդհանրապես: Արանց զուգահեռ հաճախ գրել ենք հայերեն բառեր էլ խիստ ընտրությամբ»:¹

Մենք նույնպես կողմնակից ենք, որ քաղաքացիություն ստացած օտար բառերը պետք է նույնությամբ էլ պահել, քանի որ այսօր շատ ավելի հասկանալի է ազիտացիա, տրամվայ, ավտոմոբիլ, տանկ բառերը, քան եռլարիուրուն, ելեկտրաֆարշ, ինքնաշարժ, սողաքերդ բառերը, բայց ինարկե չպետք է չարաշահել այս տեսակետը:

«Եվ միշտ ավելի լավ է չունեցած բառերը փոխ առնել, — զրում է Հ: Թումանյանը, — քան ճգնել անպատճառ ստեղծել կամ թարգմանել ու Փրակը շինել պոչազգեստ, կոտըլետը — կողիկներ կամ ուհաթլոխումը — հանգստապատառ...»²

Բառարանի բացատրությունները գրելու լավագույն ձևն է, որ բացատրվող բառի ամենամոտ նշանակությունները զըլեն առաջ և որքան բառից հեռանա, այնքան բացատրությունն ավելի երկրորդական, երրորդական ու վերջապես պատկերավոր և փոխարերական նշանակություն ստանա: Այս սկզբունքը ճիշտ չի պահպանված «Ռուս-հայերեն նոր բառարանում», օրինակ՝ տրքական բառը թարգմանված է եռանիվ, երեխակնանի: Այսպեսից եզրակացնում ենք, որ «անիվ» բառը ավելի առաջնություն է ստացել «ակ» բառի նկատմամբ, բայց տրքական վելօնությունը կապակցություն բացատրության մեջ հակառակ՝ երեք ակնանի հեծանիվ, եռանիվ հեծանիվ, իսկ կոլեսո բառի տակ բոլորովին չկա ակ բացատրությունը:

Ռուս-հայերեն նոր բառարանի բացատրությունները խը-

¹ «Ռուս-հայերեն նոր բառարան», առաջաբան, էջ 6:

² Թումանյան, «Թումանյանը քննադատ», էջ 389:

ճողված կերպով է տրված, օրինակ բառի մի առումը
թարգմանված է ամուսնուց բաժանված կին, մարդաթող (կին):
Այսիդ միանդամայն ավելորդ է փակազծված կին բառը, քա-
նի որ մեզ մաս մարդ հասկացվում է մարդ (человек) և ամու-
սին (супруг), որի համար ունենք մարդաւում տալ, մարդու զնայ
կապակցությունները: Նույն բառարանում человек բառի տակ
դրված է՝ «1. այր, տղամարդ, մարդ. 2. ամուսին, էրիկ, և
ստարդն ու կնիկը մի ծառի պատուղ են» կապակցությունը: Մար-
դարսդ տղամարդ չէր հասկացվի, ինչդեռ և սխալ կլիներ կաղ-
մել կնարադ կին:

Այս բառարանի քննադատները իրավացի կերպով նշել են,
որ բառարանից բացակայում են՝ կոնստրուկտոր, գիдростանցիա,
кинофикация, кинофильմ, դիսպետչեր, լենինեց, ՄԻՈԴ և
այսօրինակ շատ գործածական բառեր, և սխալվում են, պահան-
ջելով, որ բառարանի մեջ մտցվեն տեխնիկական բնույթ կրող
բառեր:

Ռուս-հայերեն նոր բառարանը հարուստ է բաղմաթիվ
նորաբանություններով: Նախորդների համեմատությամբ ունի
ավելի պարզ, մասսաներին ավելի հասկանալի ձև:

Բառարանները պատկանում են լեզվաբանական աշխատու-
թյունների այն խմբին, որոնք ավելի հաճախակի են պահանջ-
ղում նորոգման, վերամշակման, հավելման: Այս խնդիրը հատ-
կապես զգալի է դառնում հայերեն լեզվի համար, որ օր-օրի
վրա թեսկոխում է զարդացման նորանոր բարձունքներ և այդ
զարդացումն արտահայտելու համար կաղմում է ու փոխառնում
հաղարավոր բառեր և կամ հնուց հայտնի բառերին տալիս նոր
իմաստավորում:

Մեղ մոտ մի վատ սովորություն կա: Եղած բառարանները
վերահատարակում են մի քանի բառի փոփոխմամբ, շատ
դեպքում ազավաղութեարով և կոչում հրատարակչի անունով: Այդպես չէ ուրիշ ժողովուրդների մոտ. տասնյակ անգամ վերա-
հատարակվում է այս կամ այն բառարանը, կատարում են
լրացումներ, բայց դարձյալ կրում է հեղինակի անունը: Որպես
լավագույն օրինակ կարող է ծառայել Դավիթ բառարանի, ուռ-
սական բառարանագրության նշանավոր հուշարձանի երբորդ
հրատարակությունը: Այս հրատարակությունը խմբագրել և լրաց-
րել է Անդրեադի համալսարանի պրոֆեսոր, լեզվաբան ի.
Բողուեն դե Կուրտենեն, որը ոչ միայն ուղղել է մի շարք ոճա-

կան և քերականական սխալներ, այլև ավելացրել է շուրջ 16000 նոր բառ և տոռում՝ քանդել է մի քանի բաներ, նկատելի կերպով ճշխացրել է քերականական և ստուգաբանական ցուցմունքները, բայց թողել է միայն ու միայն Վ. Ի. Դալի անունը:

Հայրենական Պատերազմի օրերին ոռուս-հայերեն բառարանները ե'լ ավելի արժեքավոր դարձան: Այդ շրջանում սուսական գրականության մեջ լույս տեսան մի քանի բառարաններ, ինքնուսույցներ և զրուցատրություններ, որոնց նպատակն էր սովորեցնել մեր բարեկամների և մեր թշնամիների լեզուները: Առաջնահերթ կերպով զդացվում էր ուազմական բառարանի պահանջ:

1925 թ. լույս տեսած Մ. Աբեղյանի «Ռուս-հայերեն ուազմական բառարանը» որքան էլ հաջող լիներ, չէր կարող բավարարել մեր ժամանակի պահանջները: Ռազմական կյանքում և տեխնիկայում այնպիսի փոփոխություններ էին առաջացել, որ պահանջ էր զդացվում ուազմական նոր բառարան ունենալու: Այս պահանջը ավելի քան հասունացավ Հայրենական Պատերազմի հենց առաջին օրերին, ՏՀՕՊ-ի, ինքնապաշտպանության խմբակների և ուազմական այլ անհրաժեշտ ձեռնարկումների հետ:

Պետհրատը «Հայ կարմիրբանակայիններին օժանդակելու համար 1941 թ. պրոֆ. գոկարը Ար. Ղարիբյանի ընդհանուր զեկավարությամբ և խմբազրությամբ լույս է ընծայում «Ռուս-հայերեն ուազմական համառոտ բառարան»¹ շուրջ 6.000 բառապաշտուգություն:

Համառոտ ուազմական բառարանի առաջաբանում կարդում ենք.

«Համառոտ բառարանը» գիտական նպատակներ չի հետապնդում: Սկզբունքը ունենալով հասկանալիքությունը և շատ օգնությունը, բառարանում զետեղված են առանձին անհրաժեշտություն ներկայացնող բառերը: Ըստ հնարավորին բացարությունները տրված են մասսայորին: ծանոթ և ընդունված բառերով: Այդ նույն սկզբունքից ելնելով՝ որոշ դեպքերում թեթևակի խախտված են բառարանագրական և կամ, նույնիսկ, գրական լեզվի ընդունված նորմա-

¹ Այս բառարանը կազմելու աշխատանքներին մասնակցել է նաև տողեջիս դըռջը, տալով Ս-Յ առողջի բառերը:

ները, որ բնավ չի մնասում բառարանին ու բառարանագիտությանը և ոչ էլ գրական լեզվին։ Բառարանը կազմելիս օգտագործվել է պրոֆ. Մ. Արեղյանի «Ծուսահայերեն ուազմական բառարանը», հիշյալ բառարանից տարբերվող բառերը հավաքել ու թարգմանել է Պ. Աթայանը¹։

Ճիշտ նպատակադրում Ընդհանրապես, նոր բառարան կազմողները եղած այդ կարգի բառարաններից լավագույնը հիմքն ընդունում, դուրս նետում կյանքում չընդունված տերմինները, փոխարինելով նորերով, ավելացնում նոր բառեր ու առումներ, շտկում տեխնիկական բնույթի անհարթությունները և այդպիսով ստանում նոր բառարան։ Բայց խնդիրը միայն ճիշտ նպատակադրումը չէ, այլ կատարումը։ Կարեռն այն է, թե արգյութեարողացել է նոր բառարանը ընդգրկել ուազմական գիտելիքների բառապաշարի անհրաժեշտ մինիմումը, թե ոչ։

Ամենից առաջ՝ բառարանի սուսական բաժնի, բառացանկի ընտրության համար ճիշտ չէ եղել հիմք ընդունել պրոֆ. Մ. Արեղյանի բառարանը։ Ոյգ աշխատությունը կարող էր մեծապես օժանդակել բառարանի թարգմանական կողմին, պետք է հիմք ընդունվեր 1940, 1941 թվականների կազմած սուսակերմաններն, ոուս-ֆրանսերեն, ոուս-տաճկերեն ուազմական բառարանները դարձյալ նորագույն ուազմական բառերի հավելումով և թերեւ այդ է պատճառը, որ բառարանում պակասում են ավուտական առողջությունը։

«Ծուս-հայերեն ուազմական համառոտ բառարանը», կազմված լինելով շտառ և մի քանի մարդկանց ձեռքով, չունի հետևողական, միասնական սկզբունք, օրինակ՝ որոշ տառերով գրվող բառերի բացատրության տարբեր առումները իրարից չեն բացորշված, ինչպես՝ «սարմատուրա-արմատուրա, սպառազենք, զինազգեստ», արտիլլերիա-հրետանի, հրետազոր, արտիլերիա և այլն, իսկ բացորշումը շատ կարևոր է, որպեսզի հրետանին հրետազորի փոխարեն չգործածվի։

«Ծուս-հայերեն ուազմական համառոտ բառարան»-ում կազմակցությունները որոշ գեպքերում տրված է հիմնական բառից տակ և երբեմն առանձին, ինչպես՝ «двухмоторный-ый бомбар-

¹ Ա. Ղարիբյան, «Ծուս-հայերեն ուազմական համառոտ բառարան»-ը բառաշաբան, էջ 3։

директор,-ый самолёт—երկմատորային, երկմատոր,—սմբակածիչ, —ինքնարիռ, բայց այլ տեղերում որպես առանձին բառեր՝ „ко-
ный—небьюл, ծիափոր, конный отряд—небьюл զոկատ, конный
разведчик—ծիափոր, հեծյալ հետախուզ, конный строй—небյալ
շարք, конная армия—небյալ բանակ, конная артиллерия—
հեծյալ երեւանի, конная часть—հեծյալ զարամաս» և այլն:

«Ծուս-հայերեն ուղմական համառոտ բառարան»-ում չե-
պահպանված այրբենական դասավորության ճշտությունը, ոչ մի-
այն առանձին բառեր, ինչպես յամեն.-ը ընկել է յանակայ
բառից հետո, այլև ամբողջ բառախմբեր խանգած են, ինչպես՝
50-րդ էջում գրված է „горизонт,—орудия—бронебиты брони,—
глыбы» բառից հետո գրված է «горючее—флюиды лаваны» և այլն,
իսկ 53-րդ էջում՝ «гусеничный трактор—тракторы» բառից
հետո նորից՝ «горизонтальный, горловина» և այլն:

«Ծուս-հայերեն ուղմական համառոտ բառարանը», բնա-
կանարար, չեր կարող ընդգրկել ուղմական գործին վերաբերող
բոլոր բառերը, բայց տեսնենք թե ժամանակակից նույնաբնույթ
բառարանների համեմատությամբ ինչպիսի բառեր է հապավել-
կամ ավելացրելու Ծաղմական համառոտ բառարանից բացակայում
է խլորացեօֆեօնօ, դոպորկ, դոպորկա, դոպորկա (հենակ, նեցուկ) և
նման բառեր և, ընդհակառակը, կրկնակի անդամ է գրված մի
շարք բառեր ու՝ կապակցություններ՝ „аллюр сокращенный—
կրճատված քելք» (Էջ 8), „сокращенный аллюр—կրճատած,
պակսեցրած քելք» (Էջ 252), «атака лобовая—գրոհ ճակատա-
յին, ճակատագրոհ» (Էջ 11), «лобовая атака—ճակատային-
գրոհ» (Էջ 117), „перевес численный—թվական գիրակղուու-
թյուն» (Էջ 176), „численный перевес—թվական գիրակղուու-
թյուն» (Էջ 302), նույնիսկ երբեմն միևնույն շարադասությամբ,
ինչպես „шагом марш (հրամ.) քայլով մարշ» (Էջ 120 և 303):
Միթե նման բառարանի համար „օхра, пробка, жестянка”
ավելի կարեռ էին, քան մօրская пехота, пропаганда, блин-
даж բառերը:

Մեր առաջադրած նպատակներից շատ հետու կտաներ բա-
ռարանի մանրաղնին քննությունը, ուստի անցնենք Հայրենա-
կան Պատերազմի օրերին լույս տեսած հաջորդ՝ «Ծուս-հայերեն-
դպրոցական բառարան»-ի քննությանը:

Ծուս-հայերեն դպրոցական բառարանը նորություն չեր-
մեր գրականության մեջ: Մեկ և կես դար առաջ կազմած կ. Սա-

բաֆյանի, հետագայում Պոպովի, Էմինի, Ն. Մառիկ և ուրիշների բառարանները հիմնականում ծառայում էին «վասն համբակաց» դպրոցականներին ուսւսերեն լեզուն սովորեցնելու գործին:

Մինչ «միուս-հայերեն» դպրոցական բառարանն-ի քննությանն անցնելը, մի քանի խոսքով կանգ առնենք նախորդ մի երկու ուրիշ, լիովին դպրոցական այլ բառարանների վրա:

1895 թ. Ալեքպոլում (Լենինական), Սանոյանի տպարանում, տպագրվում և հրատարակվում է Յ(ովհաննես) Ա(րապահյանի) «Ծոցի ոուսերենից-հայերեն բառարանը»: Այս բառարանի նպատակն է օժանդակել մեր դպրոցականներին՝ ոուսերեն լեզուն սովորելու:

Արագաճյանի բառարանը առանձին հաջողություն չունեցավ և լայն տարածում չդառավ: Որպես դպրոցական բառարան, մեր իրականության մեջ ավելի մեծ հաջողություն ունեցավ Հարություն Թումանյանի «միուս-հայերեն բառարանը»: Այս բառարանն այնպես է կազմված, որ նա կարող է ծառայել միանգամայն իբրև ձեռնարկ ոուսերեն սովորելու ամեն մի հասակի համար, որովհետեւ հարգելի աշխատավորը (Հ. Թումանյանը — Գ. Գ.) բացի շեշտերից ոուսերեն բառերի վրա, կցել է աշխատությանը և ամենահաճական քերականական կանոնները՝ բառերի հոլովման և բայերի խոնարհման վերաբերյալ: Այնպես որ ոուսերեն բոլորովին չիմացող մեկը՝ ոուսերեն այբբենարանը սովորելով՝ կարող է վերցնել այդ բառարանը և ինքն իրան ոուսերեն սովորել, իսկ քիչ իմացողը կարող է առաջանալ այդ լեզվի մեջ»:¹ Թումանյանի բառարանը հաջող է, երբ նկատի ենք առանում հոգեոր և ծխական դպրոցների պահանջը, որովհետեւ լեզուն էր „աղեց բոյակ, անգել, անտիդօր, ապօստոլ” և նման բառերով:

Հ. Թումանյանը զգալի վերամշակումներով իր «միուս-հայերեն բառարանը» վերահրատարակել է 1913 թ. ու միաժամանակ կաղմել «Հայերեն-ոուսերեն դպրոցական բառարան» (1910 թ.), որը միանգամայն նորություն էր մեր դրականության մեջ, եթե հաշվի չառնենք Սարաֆյանի և Էմինի նույնաբնույթ բառարանները, որոնք կազմված էին գրաբար լեզվի օգնությամբ:

Թումանյանի, իր ժամանակի համար հաջողված, բառարան-

¹ Ն. Յան իր ուսանողների համար կազմել և հրատարակել է «Հայ-ոուսերեն բառարան», որի մասին տես Գ. Դասպարյան, «Մառը բառարանագիր», Լեզվի ինստիտուտի Դիտ. աշխ. ժողովածու, Խ 1:

² Գ. Նիկողոսյան, «Հովիվ», № 44, 1907 թ.

ները չէին կարող օղտակար լինել սովետական երկրի դպրոցականների համար։

1933 թ. Բաքվում Ա. Ս. Լոդինովը հայկական դպրոցների 6-րդ, 7-րդ դասարանների համար հրատարակում է շատ նեղ սահմաններ հետազնդող «Ծովս-հայերեն դպրոցական բառարան»-ները¹

Բացը մնում էր էլի բաց։

Այս բացը լրացնելու համար Պետհրատը 1934 թ. հրատարակում է «Ծովս-հայերեն համառոտ բառարանը» շուրջ 10,000 բառով, իսկ ավելի ուշ, Հայրենական Պատերազմի օրերին «Ծովս-հայերեն դպրոցական բառարանը» 12,000 բառապաշարով «ոչ լրիվ միջնակարգ և միջնակարգ դպրոցի համար»։

Ողջունելի աշխատանք, սակայն տեսնենք բառարանագրական ինչ արժեք է ներկայացնում իրենից դպրոցական այս նոր բառարանը։ Նախ նշենք, որ «Ծովս-հայերեն դպրոցական բառարանի» ճակատին գրված է Մ. Կարաքեշիշյան և Ա. Մարտիրոսյան, իսկ հաջորդ էջում՝ «հայերեն մասի թարգմանիչ» Գ. Պարիս,² Խելբագիր՝ Բ. Անարտիրոսյան, կոնսուլտանտ՝ լեզվաբանական գիտությունների թեկնածու՝ Ա. Մելքոնյան։

Երկլեզվյան, տվյալ գեպօւմ ուսւերեն և այն էլ դպրոցական բառարան կազմելու հիմնական աշխատանքը թարգմանական բաժնին է, ուր նկատվելու է հեղինակի ստեղծագործական աշխատանքը, մինչդեռ առաջին՝ ուսւական բաժնինը մեծ մասմբ ժամանակակից նույնաբնույթ բառարաններից զգուշությամբ արտագրելու գործ է, այս իսկ պատճառով, ամենայն իրավունքով այս բառարանի հեղինակը պետք է համարվեր հայերեն մասի թարգմանիչը, քան սոսկ բառացանկ կազմողները։ Բառարանային գրականության մեջ առաջին անգամն ենք հանդիպում այսպիսի տարօրինակ երեսույթի։ Պարզվում է, որ մեզնից յուրաքանչյուրը հայերենի որևէ բառարանից կարող է արտագրել հայերենի բառաշարքը և չինարեն, յակուտերեն, ուղարկություններեն և այլ լեզուների տեղյակ անձնավորությունները։

¹ 6-րդ դասարանի համար կազմած «Ծովս-հայկական բառարանը» Լոդինովը կազմել է Հյուսեին Զաղեկի (Լեքեկ) հետ, իսկ 7-րդ դասարանի համար կազմածը՝ Ն. Ս. Գլեշչունովի հետ։

² Պետհրատի 1942 թվի № 8 աեղեկանքից պարզվում է, որ բառարանի հայերեն մասը կազմել է ընկ. Վարդան Փոթեյանը, իսկ Գ. Պարիսը թարգմանել է միայն ֆրազեսոլոգիան։

թարգմանել տալ ու հեղինակ դառնալ հայերեն-չինարեն, հայերեն-յակուտերեն, հայերեն-ուզմուրդերեն և այլ բառարանների: Բառարանագրի հեղինակություն շահելու յուրօրինակ միջոց է առ, թէ հրատարակիչների միամտության արդյունք:

Ամեն մի բառարան պետք է արտահայտի յուր ժամանակաշրջանը, պետք է ընդգրկի ժամանակի այն բառապաշտը, որին դպրոցականները կարող են հանդիպել դասազբքերում ու լրագրերում:

Վերջին երեսնամյակում լույս տեսած դպրոցական երեք բառարանների (Թումանյան 1913 թ., Կարաքեշիշյանի և մյուսների 1934 թ. և 1941 թ.) բառապաշտը եթե համեմատենք, հետեւյալ պատկերը կտացվի:—

Թումանյան բառարան	Գործէածութեալ										
	Երեք անդամ		Երկու անդամ				Մեկ անդամ				
	Առավել ծածկած բառերը	առավել բառերը	Բում. 1934	Բում. 1941	1934	1941	Բառ.	առկուս	Բառ.	առկուս	
Թումանյան	200	76	38,0	16	8,0	28	14,0	—	—	80	40,0
Կարաքեշիշյան 1934 թ.	194	76	39,2	16	8,3	—	—	47	24,2	55	28,3
Կարաքեշիշյան 1941 թ.	209	76	36,3	—	—	28	13,4	47	22,6	58	27,7
Հնկամենը	360	76	21,1	—	—	91	25,3	—	—	193	53,6

Այս համեմատական աղյուսակը ցույց է տալիս, որ գրեթե նույնարնույթ բառարանները միասին „Ա“ տառի տակ գործ են անել 360 սուսներն բառ, որից երեք անդամ՝ 76 բառ, որ կաղմում է բառաքանակի 21, 1 տոկոսը, երկուական անդամ՝ 91 բառ կամ 25,3 տոկոսը և մեկական անդամ՝ 193 բառ կամ՝ 53,6 տոկոսը:

Աղյուսակից պարզ կերպով երեսում է նաև, որ յուրաքանչյուր տասնամյակում բառարանների բառապաշտը 40—50 տոկոսով փոխվել է, որից 25—30 տոկոսը եղել է միանգամայն նո-

Շություն: Թումանյանի բառարանի ազартная игра, алтарь, амвон (պետ, ամբիոն), аминь (ամեն) антипасха (կրկնագատիկ), аэролит (օդաքար) բառերը իրենց տեղը գիշել են 1934 թ. բառարանի аренда, афиша, апельсин բառերին, իսկ վերջիններս էլ՝ 1942 թ. авиабаза, авианосец, авиационный, автобус, атеизм, атекист բառերին:

Նոր ռուս-հայերեն դպրոցական բառարանը նախորդ երկու բառարանների համեմատությամբ 58 բառ ավելի ունի, բայց այնուամենայնիվ պակասավոր է: Բառարանը լույս է տեսել Հայրենական Պատերազմի օրերին, ստորագրվել է տաղագրության համար 1942 թ. հուլիսի 4-ին, բայց երբեք չի արտացոլում այդ օրերի մարտական կյանքը, ընդհակառակը՝ բառարանը հետու է տանում պատերազմից, աշխատում է աշակերտությանը սովորեցնել «ձմերուկ», «գրաֆին», «բաղար», «առևտուր», «ասորատիմենտ» և նման բառերը: Բառացանկ կազմողները բարվոք են համարել աշակերտությանը սովորեցնել էգոիզմ, էգուստ, բայց խուսափել են ալտրուիզմ, ալտրուիստ բառերից, «գերադասել են ծանոթացնել բռակ—պմուսությանը, վինո, նույնիսկ վինոգрадное вино, քան բոմбоубежище, քрос, քрофей, բլինդաժ բառերին:

Աշխատության առաջարանում գրված է՝ «բառարանում ըերված են նպեկ ամենազործածական հապավված բարդ բառերը»: Ճիշտ նպատակագրում, բայց իրականում այդպես չէ: Բառարանում մոռացության են տրված ճզոտ, ճոտ, МОПР, МЮД հապավումները, մինչդեռ պահպանվել է ЗАГС-ը:

Բառացանկ կազմողները բառարանից դուրս են թողել Հայրենական Պատերազմի օրերին շատ գործածական նաև, ավտոմատիկ, մինոմետչիկ, բոերուպ, կոնտրակա, օքուպանտ, պոդարկություն, բառերը:

Уличный բառի տակ տրված է уличное движение, մինչդեռ անտեսված է ավելի այժմեականը՝ «уличный бой—փողոցամարտ, փողոցային կորիլլեր» կապակցությունը:

Клин—սեպ «բառի տակ տրված է загнать клин в бревно—սեպ խփել գերանի մեջ» կապակցությունը. նախ՝ այս օրինակը սխալ է, որովհետեւ դպրոցականին պետք է ուսուցել, որ սեպ հարկավոր է խփել վառելափայտի մեջ և ոչ գերանի, որը շինանյութ է, և երկբորդ՝ միթե չէր կարելի լրագրերից վերցնել «отрубили вражеский клин—կտրեցինք թշնամու առաջարած սեպը»:

ժամանակի ամենասովորական կապակցությունը, թե ըստ բառարանի դա «կուստարշչինա» կդառնար: Բառացանկ կազմողները ավելի գերազանցել են երկուական անգամ գրել մлечնայ ուժ, ուղարկած համար և ոչ մի անգամ այնպիսի հազարյան և քիչ գործածական կապակցություններ, ինչպես՝ օտեքառական համար և այլն:

Բառարանի բառացանկը շատ անսկզբունք կերպով է ընտրած բառացանկում կա գերազանք, չկա բիոլոգիա, կա Սիբիր չկա Ուրալ, Կուբան, Դոնբաս, Կուգրաս. բոլոր ժողկոմատների անունները գրված է լրիվ ձևով, որ բառարանում բանում է ենթայունակ, մինչդեռ ժողկոմխորհը արված է միայն հապավված ձևով: Բառացանկում գրված է Ազերբայջանական Սոցիալիստական Խետարրարության և Հայկականը՝ Արմենականը՝ Ադրբեյջանական Սովետական Սոցիալիստական Խետարրարության, Հայկականը՝ Արմենականը՝ Ադրբեյջանական Խետարրարության մեջ:

Տեղայի բացատրությունից առաջ փակագծում տըրոված է նախկին անունը (Տիֆլաց), իսկ նույնը չի կատարված Երևան բառի բացատրության մեջ:

Ռուս-հայերեն գվրոցական բառարան կազմողները եթե նպատակ էին դնում նպաստելու ուստաց լիզուն սովորեցնելու գործին, ապա դա չէր նշանակում, թե պետք է ազակաղեին հայերենը: Հայերեն գրական լեզուն պետք է հանդիսանար թարգմանական մասի առաջը և, եթե այս սկզբունքով մոտենային, երբեք ոռուսական վեծու, կաշետկա, բոկալ, սամար բառերի բացատրության մեջ առաջնությունը չէր արվի վեդրո, կուշետկա, բնիալ, սամակար և այլ հայատառ ոռուսական բառերին: Դպրոցական այս նոր բառարանի թարգմանական մասը թարգմանություն չէ, այլ հայերեն գրերով ոռուսերեն լիզվի տառադարձություն: Երեսի հեղինակները նպատակ են դրեւ բացատրության առաջին բառերով հայ աշակերտությանը վարժեցնել ուսերենի ուղղախոսությանը: Բառարանի հեղինակները երեսի գիտեն, որ ոռուսական գայն բառը հայերեն թեյաման բառով պետք է թարգմանել և ոչ թեյնիկ, որ թերես գործ են ածում միայն հայերեն գրական լիզվին անտեղյակ հայերը:

Այսօրինակ վիճակն ավելի ակնրախ է կապակցությունների թարգմանության ժամանակ: Դպրոցական բառարանի հեղինակները ճիշտ են վարովել, գրելով: «Կազմողներն աշխատել են ֆրազերովիա տալ այն գեպքում, երբ դա կօգնի բացահայտելու բա-

ոի նշանակությունը։ Այս շատ լավ է, բայց սխալ է, եթե զրում են. «Փրաղների հայերեն թարգմանության մեջ ըստ հնարավորին պահպանված է ոռուսերենի շարադասությունը»։ այդ արված է նրա համար, որ հեշտ լինի դանել ոռուսերենին համարժեք հայերեն բառը։ Այս տեսակետը շատ վտանդավոր է։ Բառարանից օգտվող դպրոցականը առաջաբանը չի կարդում և նա սովորելու է ցուցակագրել գույքը—описать имущество, փառատրել աշխատանքը—оплатить работу, շոշափելով Գրիգորին գուալ դանի բաները—ошупью Григорий нашёл дверную скобку (ШЛХ.) ոչ հայերեն արտահայտությունները։

Այս բառարանի նպատակն է օգնել միջնակարգ դպրոցի աշակերտությանը հասկանալու և թարգմանելու ոռուսական դեղարվեստական գրականությունը։ Այժմ՝ նայենք, թե որ չտփով է ծառայում իր նպատակին։ Վերցնենք մի նմուշ՝ Մաքսիմ Գորկու «Մայր»-ը՝ գրվածքից՝ «Однажды Власову остановил на улице трактирщик Бегунцов, благообразный старичок, всегда носивший черную шелковую косынку на красной дряблой шее, а на груди толстый плюшевый жилет лилового цвета».¹

Այս միաքը հնարավոր չէ թարգմանել, բառարանի մեջ չպահելով տրակտирщик, благообразный, старичок, косынка, жилет բառերը։

Հայրենական Պատերազմի օրերին լույս տեսած թե ուղարկան և թե դպրոցական ուսուհայերեն բառարանները չեն ընդոզիկել նույնիսկ այդ բառարանները կազմելիս արդեն քաղաքացիություն ստացած մեր օրերի նոր բառապաշարը, որը պահանջիվ չի կազմում հայերեն լեզվի մեջ։ Այսօր, երբ մենք ուշի ուշով հետեւում ենք մեր գրականությանը, դրիթե ամեն օր հանդիպում ենք նորանոր բառերի, սրոնցից մեծ մասը կազմվել է ոռուսական լեզվի ազգեցության տակ։

Հայրենական Պատերազմի ժամանակամիջոցում հակայական շրջադարձ կատարվեց մեր կյանքի, տնտեսության ու տնօրյա գործունեության մեջ։

Մեր երկրում ամեն ինչ ծառայեց սովետական ժողովրդի արդարացի պայքարին ու հաղթանակներին։

Հայերեն գրական լեզուն իր նախկին բառապաշարով չէր

¹ М. Горький, «Мать», 1935 г. часть I, стр. 53.

կաբող լիովին արտահայտել այդ օրերի պահանջները։ Հայրենական Պատերազմի օրերին առաջ եկան այնպիսի հարաբերություններ և իրադրություններ, որոնց արտահայտման համար անհրաժեշտ էին նոր բառեր, նոր կապակցություններ, և կամ հնուց հայտնի բառերից մի մասը պետք է ստանար նոր առում։

Հայերեն լեզվի բառապաշարը հարստացավ զուրջ 300 նոր բառերով, որոնք իրենց վրա կրում են Հայրենական Պատերազմի կնիքը։ Այդ բառերն առաջին հայացքից պարզում են իրենց գործածության բնագավառը։ Հայերենական Պատերազմի ժամանակաշրջանի հայերեն նոր բառերի մի մասը օտարազգի բառեր են, որոնք պատրաստի վիճակում փոխառնվել են մեր լեզվի մեջ ուստի լեզվի միջոցով, ինչպես՝ զանգատեր (անգլ. ավազակ), պնիւս (ֆր. ժամանակավոր կամուրջ), բլինդած (ֆր. ուղղմական ճակատային ամրության մի տեսակ) և այլն։ Օտար բառերի թվում կան բառեր, որոնք նորություն են լնդիանրապես, ինչպես՝ բլիցկրիդ (գերմ. կայծակնային պոտերազմ)։

Որոշ թվով բառերի հանդիպում ենք ուղղակի ուսւական վերջավորությամբ՝ ավտոմատչիկ, պոխիլի գրու (երբեմն նաև՝ հոնզեկան գրու), ուստուչնիկ (երբեմն նաև՝ ներհատիչ) և այլն։

Հայերեն նոր բառերի թվում ամենից շատ հանդիպում ենք բարդ բառերի՝ անցուղի, սազմու, զայլափու, գետան, ինձնարիւարիչ, դիտանցք, դահուկազոր, ծխածկոց, կրակամարտ, բառեր, որոնք վերաբերում են պատերազմին, և որոնց մի զգալի մասից կազմել ենք նոր բառեր՝ պնիւսային, գետապոյական և այլն։

Ժամանակակից սուսերեն լեզվի մեջ մի խումբ նոր բառեր ստացել են նոր իժամատ, այդ երեսությը նույնությամբ փոխանցվել է մեր լեզվին։ Հայերենական Պատերազմի ժամանակ լեզու բառը խոսք, լեզու ֆիզիկական նշանակությունից զուրս ստացել է, ուղղմական գաղտնիք կորզելու համար, մարտից զուրս վերցված գերի փոխաբերական իժամատը։ Սովորական երեսությը էր մեր սովետական բանակայինների և ճակատամերձ զոտու սովետական հայրենասերների համար գլնզու բռնելը։ Հայերենական Պատերազմի «արեխնուց մեզ ծանոթ ոտնամանից զուրս նշանակում էր՝ տանկի թրթուրներին կպած ցեխի հաստ շերտը։ Այսպես նաև՝ «բազե» նշանակում էր սավառնակ և ներոս սավառնորդ, իսկ թշնամու սավառնակը նույնպես ուներ իր պատկե-

բավոր «ուրուր» կոչումը։ Ավտոմատ բառը այլես չէր նշանակում ոսսկ ինքն իրեն շարժվող, ինքնաշարժ, այլ ավտոմատը հայրենական Պատերազմում գործածվող զենքի մի հատուկ տեսակն էր։ «Դժային» բառը իր ածական առումից ստացել էր նաև գոյականի իմաստ և նշանակում էր գծի—երկաթգծի վրա աշխատող, նման երկաթուղային, բանակային բառերի։

Մի շաբթ բառեր ապրեցին իրենց կազմակերպման ընթացքը։ Հայրենական Պատերազմի սկզբի օրերին Տրօֆեյ բառը հայերեն թարգմանում էին ռազմավար (ռազմ-ավար) բառով, հետագայում կառհելով, որ դա կարող է հասկացվել ռազմ դեկավարոց (ռազմ-ա-վար), նման գորավար, դեկավոր և այլ բառերի, մեր մամուլը վերջին շրջանում Տրօֆեյ բառի դիմաց սկսեց դորժածել ռազմական ավար ճիշտ ձեր։

Այստեղ, եթե ոռւսական բառը (պայմանական կերպով ոռւսական ևնք համարում նաև ոռւսերենի միջոցով կատարված փոխառությունները) հայերեն մի բառով՝ թարգմանելը չընդունվեց և գործածական չդառավ, մի ուրիշ շաբթ բառերի նկատմամբ ճիշտ հակառակ դրությանն ենք հանդիպում։ Ռուսական ՕԿԿՍ-ուրանի բառը սկզբնական շրջանում հայերեն թարգմանում էին օկուպացիայի ենթակալված կապակցությամբ, իսկ վերջերում օկուպացված բառով, այսպես նաև՝ ինֆորմայութեան և այլն։

Ի զեզ շեշտենք, որ հայերեն լեզվի մեջ վերջին և հատկապես Հայրենական Պատերազմի շրջանում ավելի պակաս են հապավված բառերը, եթե չհաշվենք զուտ ոռւսական դօտ, դզոտ և նման մի քանի հապավումները, որոնք մեր լեզվի մեջ մտել են զեռ սպիտակի գույնում մզված պատերազմի ժամանակից, մասյուն հապավված բառեր չեն կազմվել։ Մնայուն ասում ենք այն պատճառով, որ այդ բառերի մի մասը չեն կարող լեզվի մեջ երկար ապրել, նրանց գոյության արժեքը կապված է միայն իր ժամանակի ընթացիկ կյանքի հետ։

Նյութից շեզված չենք լինի, եթե նշենք, որ Հայրենական Պատերազմի ժամանակաշրջանի բառերի մեջ արժեքավոր տեղ են գրավում զեղարվեստական գրականության մեջ ստեղծված բառերը։ Հայերեն զեղարվեստական գրականությունը կազմել էր բազմաթիվ նոր բառեր, ինչպիս օրինակ՝ կազմերազուկ, քաջալանջ, լուսաշող, դյուցազնամայր, երկնառույզ, տաթջահար և այլն։

Հայուսական բառարանագրությունը ամբողջական դարձնելու համար մեղ մնում է խոսել Հայկական ՍՍՌ. Գիտությունների Ակադեմիայի Ն. Յա Մառի անվան Լեզվի Խոստառութիւն հրատարակած ուսուահայերեն և հայուսական բառարանների մասին:

Մեր աշխատության մեջ նշել ենք, որ նախատովետական շրջանի բառարանները կազմել են առանձին անհատներ, չափեապերում կտրված լինելով իրենց իսկ միջավայրից: Սովորական շրջանի բառարանները կազմվել են միանգամայն այլ պայմաններում:

Երկրորդ համաշխարհային պատերազմում ֆաշիստական Գերմանիայի և նրա հլուհնազանդ արբանյակների գեմ սովետական ռազմական և քաղաքական ուժի տարած փայլուն հաղթանակը, մեր երկրութիւնադարական աշխատանքային պայմաններում սոցիոլիտական շինարարության նոր վերելքի թափը, կուլտուրաշինարարական վերընթաց աճը, զրան զուգընթաց Հայկական ՍՍՌ. ում Դիտությունների Ակադեմիայի կտղմակերպումը մեր կուլտուրան տվելի բարձրացրին, մոտեցնելով սուստական կուլտուրայի մակարդակին: Խուօ ժողովրդի լիզուն, որպիս կոմունիզմի խոշոր տռաջնորդների լիզու, որպիս Հոկտեմբերյան Մեծ Խելլուցիայի լիզու, որպիս հաղթանակող և ազատաբեր ժողովրդի լիզու, ավելի մեծ գեր ստացավ պատմության մեջ և, ընական է, պետք է կտղմիլին նոր բառարանային աշխատություններ առնչված ուղարկեն լեզվին, որոնք արտահայտեին երկու լիզուների ժամանակակից կյանքը, ներկան, արտացոլեին սովետական շրջանի հաղթանակած մարդու տնտեսական, քաղաքական, կենցաղային, մտավոր, կուլտուրական կյանքը, ապրումներն ու զգացմունքներն արտահայտող բառերը, բառառաւմներն ու կտղակցությունները:

Հայուսական բառարանագրության նախորդ աշխատությունները ի վիճակի չէին բավարարելու նոր շրջանի ուսանողի, աշակերտի, մտավոր ու գիտական աշխատողի ուսահանչները: Այդ բառարանները զգում էին նորոգման, բառակաշարի և բացատրությունների թարմացման պահանջ: Մեր տնտեսական, քաղաքական, կուլտուրական կյանքի արագ փոփոխությունները արագորեն բազմաթիվ նորություններ էին մտցնում լեզվի մեջ, որն անհրաժեշտ էր ֆիքսացման ենթարկել: Եթե նախորդ շրջաններում բառերն ու նրանց առումները ունենում էին դարավոր կյանք, ապա սովետական պայմաններում ոչ միայն ամեն օր կազմ-

գումանվում էին նորանոր բազմաթիվ բառեր, այլև
էին բառերը սահնում էին նոր իմաստավորում, նոր առում,
իմաստային նոր երանգ:

Նոր բառարաններ կազմելու պարտավորությունը իր վրա
վերցրեց Գիտությունների Ակադեմիայի Ն. Յ. Մատի անվան
Լեզվի Ինստիտուտը: Ինստիտուտը առայժմ հրատարակել է
ուռաւնայերին և հայուսներեն փոքր բառարաններ (28.000-ական
բառվ), որ կազմել է խմբագրել են Հայկական ՍՍՌ Գիտու-
թյունների Ակադեմիայի թղթակից անդամ Ա. Ղարիբյանը, պրո-
ֆեսոր Ե. Տեր-Մինասյանը և Մ. Գևորգյանը:

Հրատարակված այդ բառարանները թե բառապաշտի և թե
թարգմանական բաժնում ունեն շատ նորություններ, որոնք մեծ
չափով կօժանդակեն այդ լեզուները սովորելու գործին, մեծ չա-
փով կօջնին մեր գլուխականներին, ուսանողներին և ուսւերեն
իմանալու նախանձախնդիր մարդկանց սովորելու այդ լեզուն
թառարանագրական այս պահանջը հաշվի առնելն է, որ հետու-
հայերն բառարանում կաղմողների կողմից գրված է. հետու-
հայերն այս բառաթանը կարող է օգտակար լինել նրանց հա-
մար, ովքեր նպատակ կունենան ուսումնական ուսուելաւայրելու ուսւերեն կամ
հայերն լեզուները, միաժամանակ կարող է ծառայել իրեն ո-
ժանգակ ձեռնարկ բանավոր խոսքին տիրապետելու համար, ինչ-
պես և հասարակական, քաղաքական, հանրամատչելի գիտական և
գեղարվեստական գրականություն կարդալիս ու թարգմանելիս:
Մենք կանգ չենք առնի այդ բառարանների մանրութների վրա:
Բնական է, 28.070 բառ պարունակող բառարանում ննարավոր չեք
ընդգրել լեզվական բոլոր հարստությունները: Ներելի չէ իհարկե,
որ բառարանից գուրս են մնացել երբեմն շատ կարեոր բառեր, ինչպես՝
սահմանամերձ, օղակավար, օղակավարուեի, սովորող և նման բառ-
հոգվածներ կամ մի շաբթ բառեր ստացել են պակասավոր կամ
սիսալ թարգմանություն, ինչպես՝ ԿՈՄԱՆԴԱ բառի համար չկա-
րին բացարականը, ուղարկութեալ գումանը լին, անահութիւնը՝
համար՝ ավիակիր բացարականները և կամ համշիքակը (պէտ-
համշիրականը, կաթնեղբայր, կաթնակից) շիռթված է համշարի (պրակ-
համշահեր համերկրացի) բառի հետ և այլն:

Նախասովետական շրջանի բառարանները կաղմվել են ան-
կախ, առանձնակի կերպով, այդ բառարանները նպատակադրում
են ունեցել հիմնականում թարգմանական խնդիրներ, իսկ սովո-
րական էտապի առաջին շրջանի բառարանները կաղմվել են այն-

պիսի ժամանակաշրջանում, երբ մեր լեզուն ապրում էր իր անցման փուլը և մեծ մասամբ որոնութերի մեջ էր, գրանով պետք է բացատրել նաև Պետհրատի 1933—1935 թ. թ. հրատարական ուսումնային նոր բառարանի նորակերտ բառերի տառառության տոկայությունը: Այդ բառարաններ կազմելու օրերին, մեր պետականություն ստացած լեզուն գեռ չէր կազմավորվել, դեռ չէր ստեղծել իր կայուն՝ մասնագիտական, քաղաքական և ընդհանուր բառապաշտարը: Սովետահայ լեզվի ներկա վիճակը հակառական տարբերություն ունի ուղղությայի առաջին շրջանի լեզվական վիճակից:

Երկրորդ խնդիրն այն է, որ եթե նախորդ բառարանները հեղինակություններ են համարվել առանձին անձերի, ապա այս նոր բառարանները կը ում են նաև Գիտությունների Ակադեմիայի անունը: Մինչև այժմ մենք չենք կարող սկզբունքային խընդիրներ առաջազրել, ապա այդ բանն անելու մենք հնարավորություն ունենք այժմ, որովհետեւ գործ ունենք ոչ թե անհատ բառարանագիրների, այլ պիտական հաստատություն, լեզվական օջախի հետ, միաժամանակ մենք ձգտում ենք այժմ մեր լեզվի նորմավորման կարենը գործին:

Ն. Յա. Մատի անվան լեզվի հնատիտուտը առաջին հերթին հրատարակեց «Խուս-հայերեն բառարան», և այդ հասկանալի է, քանի որ շատ ավելի զյուրին էր ուսումնային բառարան կազմելը, քան հայ-ուսումներեն, որովհետև ուսումներնը ունի ։ Աւագակովի բացատրական բառարանը և մի շարք ուսումնական տիպի մեծ ու փոքր բառարաններ: Բացի այդ, սովետական շրջանում ունենք հրատարակված թե ընդհանուր և թե մասնագիտական մի քանի ուսումնային բառարաններ, ուստի և պատրաստ էր ուսումնային բառացանկը (СЛОВНИК):

Մուռմ էր, որ բառարանագիրները ընտրություն կտարեն և տայրին լավագույնը:

Այլ էին հայ-ուսումներեն բառարան կազմելու պայմանները:

Սովետահայ լեզուն զեռ չունի իր հարստությունն ամփափող բառարանը: Ստ. Մալխասյանցի քառահատոր, շատ արժեագավոր բառարանը չի արտացոլում մեր այսօրը, նա միայն նախորդ մի շարք բառարանների բառ-հոգվածների ի մի ըերունն է: Սովետահայ լեզվի բառերի հայտնաբերման միջոցներից մեկը պետք է համարել երկւեղին բառարանների շրջան պըրակտիկան: Սովետական հասարակաբում բոլոր ժողովուրդները իրա-

վահավասար են, ապրում են տնտեսական, շինարարական և կուլ-
տուրական աճի պայմաններում, հետեապես նրանց մտածողու-
թյան մեջ կա ընդհանուրը և այդ ընդհանուրը յուրաքանչյուր
ժողովրդի մոտ զրոնորվում է իր ազգային ձևով, իր լեզվով։
Ռուսերին բառերի օգնությամբ հայոնաբերվում են այդ ընդ-
հանուրությունները, որ բավական մեծ թիվ կազմող բառեր են և
որպիսիք արդեն չափազանց գործածական են դարձել մեր լեզվի
մեջ։ Բայց այսուղ մի կարեւոր մոմենտ կա, այդ ան է, որ շըր-
ջումը չպետք է կտարել մեխանիկորեն, շրջած նյութը պետք
է ենթարկել բառարանադրական մշակման։ Այս տեսակիտից որոշ
պակասություններ ունի մեր լեզվի Խնամիտութիւնը հրատարակած
հայ-ռուսերեն բառարանը։ Այսպես օրինակ՝ եթե կոմպանյոնուիկ
(КОМПАНИЙОНКА), մոտով (МИМО), անանտառություն (безлесье),
անտառապարհուրյուն (бездорожье), ժամբշխան (временщик),
խասիաք (НОРОВ) բառերը կարող են արդարացվել «Խուս-հայե-
րեն բառարանում», ապա դրանց գոյությունը «Հայ-ռուսերեն»
բառարանում» միանգամայն ավելորդ է դառնում։ Ժամանակա-
կից հայերեն լեզվին խորթ են այս ու նման բառերը։ Սո-
վուտահայ լեզուն իր նախորդ հայերեն գրական լեզվից
տարրերվում է թե իր որակով և թե իր ստանձնած դերով։ Զմո-
ւանանք ընդգծել որ բավականին մեծ պահանջ էր զգացվում
հայ-ռուսերեն բառարանի։ Խուս-հայերեն բառարաններ բավա-
կանին տպագրվել են, իսկ հայ-ռուսերեն ընդհանուր բնույթ
կրող բառարան Խազբաշյանի բառարանից հետո լույս չէր
տեսեր Հայ-ռուսերեն բառարանի դերը ավելի մեծանում է, երբ հարվի ենք առնում, որ բազմաթիվ հայերենադարձ հայեր՝
լեզվերվ մեր տնտեսական և կուլտուրաշինարարական կյան-
քին, պահանջ են զգում ոռւսերեն սովորելու։ «Հայ-ռուսերեն»
բառարանը առաջնահերթ կերպով պետք է ընդգրկեր վերջին
30-ամյակի լեզվական նորությունները, պետք է արտահյուեր
այդ ժամանակաշրջանի կյանքը։ Գաղտնիք չէ, որ լավագույն
բառարանների միջոցով ուսումնասիրում ենք տվյալ լեզվի այս
կամ այն ժամանակաշրջանը։ Զէ՞ որ բառարանի միջոցով շատերը
լեզու են սովորում։ Այսպես, օրինակ, մեզ մոտ «Նոր հայկադյան
բառարանը» իր մեջ է ամփոփում գրաբարյան հարստությունը։
Հայկական ԱՍՏ Գիտությունների Ակադեմիայի իսկական ան-
դամ Հ. Աճառյանի «Հայերենի արժատական բառարանը» հայա-
գիտության պատմությունն է։ Սովետական բառարանագրու-

թյունը այս տեսակետից մեծ հաջողությունների է հասել Նույնիսկ Զիկագոյի համալսարանի „Library Quarterly“ ժուռնալը 1912—1942 թ. լրւյա տեսած սովորական բառարանների մտսին եր գովիստն է արտահայտում, նա գտնում է, որ այդ բառարանների միջոցով ազատ կարելի է ուսումնասիրել Սովորական Միություն բազմազգ ժողովուրդների լեզուն:

Այժմ տեսնենք լեզվի ինստիտուտի «Հայ-ուսւերին բառարանը» և շափով է արտացոլել սովորակայ շրջանի լեզուն, որը քանի է նետել մեր պետական լեզվի նորմավորման խնդրին:

Այս նոր բառարանում մենք հանդիպում ենք բառերի, որոնք առաջին անգամ են տեղ գրավում հայ-ուսւերին բառարանի մեջ. այդպիսի բառերի թիվը ընդհանուր բառապաշտի կեսից ավելին է: Այդ բառերի մի մասը միջազգային իրավունք առացած բառեր են, որ մեր լեզվի մեջ գոյություն ունեն ուսմերենի չնորհիվ, ինչպիս արոմելենտ, արսուտ, ազրելու, ալմիրալ, եխիուրսիա և այլն, մի մասը այսպէս կոչված կիսուտար՝ սպրեզատային, ադմիրալական, ազրեսիվարյուն, բարիկադային և նորակերտ բառեր՝ ազարակարնեկ, ազարակառան, հակազդ, պալարախտային և այլն: Մեր քննություրը 200 բառի մեջ մենք հանդիպեցինք միայն մի առևերին բառի, այդ էլ առցիալիստական տնտեսության ու հասարակարգին խորթ լորի (լոձար) բառն է, որից և իսոսակցական լեզվի մեջ կազմվել է լոգրարյուն բառը: Դրան զուղընթաց «Մուս-հայերին բառարան»-ում և հատկապես «Հայ-ուսւերին բառարան»-ում հանդիպում ենք բարականին մեծ թիվ կազմող նեղ բարբառային և թուրքերին, միայն տեղայնական բնույթ կրող բառերի, որպիսիք ոչնչով չեն կապվում մեր ժամանակակից լեզվի հետ:

Հայերեն լեզուն իր զարգացման ընթացքում միշտ էլ փոխառություններ է կատարել հարեան լեզուներից, հարստացրել իր բառապաշտը, բայց միևնույն ժամանակ միշտ էլ պահել յուր առանձնահատկությունը, յուր ձևաբանական ու շարադրուական ինքնությունը:

Սովորակայ լեզուն նույնպես իր զարգացման ընթացքում փախառնում է թե միջազգային գործածություն ստացած բառեր, որոնք մեր լեզվին են փոխանցվում մեծ մասամբ ուսւերենի միջոցով, թե ժողովրդական խոսվածքի այն լավագույն բառերն ու դարձվածքները, որոնց հոմանիշը չունի պրական լեզուն, թե

գրաբարյան և թե. նախորդ շրջանի արևելյան ու արևմտյան գրական հայերենի բառապաշտարը:

Բայց այս չի նշանակում, թե մեր բառարանագիրները պետք է ընկնեն ծայրահեղությունների մեջ:

Մեր բառարանագիրները պետք է ժողովրդական խոսվածքից վերցնեն այն ամեն լավագույնը, որ կա այնտեղ, և խուսափեն նեղ բարբառային բառերը գրական լեզվի սեփականություն զարձնելու միտումից: Նույնը նաև պետք է ասել թուրքերեն բառերի մասին: Եթե մեր գրական լեզվի սեփականությունը չի եղեք առավել ևս, չի կարող լինել՝ որպակ, շեմանջ, մոռիք, քրել, պաշ, շոռ (աղի իմաստով), տուտուց, գարզառ, գալմաղալ, բուրգ-բռու, գուբան, դուքանչի, դուքանդոր, բազար, յարախտ, յոբու և նման բառերը: Այս բառերի մի մասը նեղ բարբառային լինելով հանդերձ, իրենց նշանակությամբ էլ հնացած են և ոչ մի կազմ չունեն մեր այսօրվա կյանքի հետ: Դժբախտաբար պետք է նշել, որ լեզվի Խստիտուտը որոշ տուրք է տվել այդ ուղղության և թե բարբառային, թե թուրքերեն բառերը որոշ տեղ են գրավում «Թուր-հայերեն» և «Հայ-ուռուսերեն» բառարաններում:

Բնականաբար հարց կարող է առաջանալ, միթե այդ բառերը, որոնցից շատերը մեր ժողովուրդը գործ է ածում, չպետք է անդ գրավեն բառարանում: Այս հարցի առաջին պատճիւխանը բացասական է, քանի որ մեր ունեցած երկլեզվության բառարանները գրական լեզվի բառարաններ են, իսկ գրական լեզուն երբ-թք չի ընդունել այդ բառերը, բազարը, գուբանը, դուքանչին, դուքանդորը իրենց խափառնված խորթ են մեր պայմաններին ու մեր լեզվին, հետևագես չպետք է տեղ գրավեն մեր լեզվի բառառանում: Բայց մի ուրիշ խնդիր ես. կարելի էր այդ և նման ուր թերեն, շատ ավելի խըթին բարբառային բառերի առկայությունը հանդուրժել, եթե բառարաններում ցույց տրվեր որոշ նշանով (պոմետ) այդ բառերի գործածության շրջանակները, որպիսի աշխատանքը լեզվի նորմավորման կարևոր պայմաններից մեկն է հանդիսանում: Այդպես են վարվել մեր նախորդ բառառանագիրները, այդպես է վարվել նաև պրոֆ. Ա. Ղարիբյանը իր «Հայերենի ուղղագրական նոր բառարան»-ը կաշմելիս, ուր առաջանիշով ցույց են տրված գործածության համար ոչ հանձնաբարելի լինելը:

Նորմավորման, ավելի ճիշտ՝ որևէ լեզվի հատակ գրւելուման համար անհրաժեշտ է, թեկուղ որքան էլ փոքր բառարան լինի, քե-

բականական որոշ նրբություններ տալ, օրինակ, վերցնենք ուստի սերենի սեռի խնդիրը. «Մուս-հայերեն» բառարանում գրված է ՕՀ—ՆԱ, ՕԱ—ՆԱ, ՕԽ—ՆԱ, ՕԴԻՒ—ՄԵԿ, ՕԴԻՆ—ՄԵԼ, ՕԴԻԾ—ՄԵԿ, պետք է նշվեր սեռը, որպեսզի բառարանի օգնությամբ կարդացողը գգար այդ բանը: Ճիշտ է, վերջում տրված է ոռւսերեն լեզվի համառոտ քերականություն, այդ լավ է, ինարկե, բայց պետք է խոստովանել, որ բառարաններում եղած թե առաջարանները և թե քերականությունները համարյա թե չեն կարդացվում: Մուս բառարանագիր Օֆեզովը քննության առնելով մի շարք բառարաններ, շոշափում է նաև այդ խնդիրը, նա դրում է. «Սերբերեն լեզվի մեջ չորս տեսակ շեշտադրություն կա, սակայն սերբերեն-ոռւսերեն բառարանում գիտական պարզցցման հետեւնքով չի նշված այդ, որից և ստացվում են անհեթեթություններ...»

Այս բոլորի հետեւթյունն այն է, որ մեր սովորակայ բառարանագրության առաջնահերթ խնդիրն է հրաժարվել նեղ բարբառային տեղայնական բնույթ կրող բառերից, սիայն ժաղովրդական սահմանափակ խոսվածքի մեջ գործածվող թուրքերեն բառերից ու ձեերից, հրաժարվել այն օտար բառերից, որոնց համազորն ունենք հայերենում և, հիմք ունենալով մեր լեզվի զարգացման բոլոր ազրյուրները: ճշտել բառերի գործածության նրբին առումներն ու սահմանները, միաժամանակ օգտագործելով սովորական և հայ բառարանագրության հարուստ փորձն ու նվաճումները, կազմել ոռու և հայ ժողովուրդների ինվական կույրան արտահայտող երկեղվյան ընդարձակ բառարաններ:

ԼԵԶՎԱԿԱՆ ԱՂԵՐՍԸ ՀԱՅ. ՌՈՒՍԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆԱՆՐՈՒԹՅԱՆ ՄԵջ

Նախորդ հատվածներում մենք խոսեցինք ոռւս-հայերեն և հայ-ոռւսերեն տպագիր գրեթե բոլոր բառարանների մտածել կանգ չտանք միայն շատ նեղ մտանագիտական նպատակներ հետապնդող աշխատությունների վրա, ինչպես՝ Վ. Պ. Անտոն Սարաтовսկի, „Ռусско-արմանական բառարան” հայության համար արտահայտող երկեղվյան ընդարձակ բառարանները:

Հայ-ոռւսական բառարանագրության մեջ բառարանագիրները ամեն կերպ աշխատել են օգտագործել հայերեն լեզվի հարստությունները: Բայց որքան էլ «մաքուր» և գրական հայերենի կողմանակից լիներեն, այնուամենայնիվ չէին կարող խռովագիր ոռւսական լեզվի ազգեցությունից: Այդ ազգեցությունը

ավելի ցայտուն կերպով երեսում է Հոկտեմբերյան Մեծ Ռեզու-
ցիայից հետո նախառեղուցիոն շրջանում ռուսերեն լեզուն մի
շարք հայերենագետների կողմից դիտվում էր որպես «միծ վտանգ»:
Բառարանագիրներն ամեն կերպ աշխատում էին սարքել, գտնել
որևէ հայերեն բառ: Երբեմն ռուսերենից, որպես օտար լեզվից,
խուսափելով ընկնում էին թուրքերեն, պարսկերեն լեզուների և
երբեմն էլ նեղ բարբառային բառերի գիրկը: Միանգամացն այլ
զատկեր է ներկայացնում սովետական շրջանի հայերեն գրա-
կան լեզուն: Մեր օրերում ռուսերենը դիտվում է որպես Մեծ
Հոկտեմբերի լեզու: Խուսերեն լեզվի բառապաշարն այժմ հարց-
տացնում է մեր լեզուն հաղարավոր նորանոր բառերով: Խուս-
հայերեն բառարաններ կազմելու ժամանակ, ընտանաբար, շատ
ու շատ բառեր չեին կարող իրենց համազորը գտնել հայերեն
լեզվի մեջ և դրա համար բառարանագիրները մեծ մասամբ ռու-
սական կամ ռուսերեն լեզվի մեջ դորձածական օտար բառերը
նույնությամբ տառադարձել են հայերենի և հետագայում այդ
բառերից կազմել ածական, ժակարտական, բայական բառաձեր,
ինչպես՝ սովետ-սովետական, բատրակ-բատրակունի, կուլակ-կու-
լակային, կուլակուրյուն, կոլխոզ-կոլխոզային, սնայպեր-սնայպե-
րական, մորիլիքացիա-մորիլիքացնել, եվակուացիա-եվակուացնել,
և այլն: Երկրորդ միջոցը՝ զվարապես բարդ բառերի մեջ,
թարգմանվող բառի մի ժամանք նույնությամբ թողել են, մյուս
մասը հայացրել և կազմել այսպես կոչված, կիսաօտար բառեր,
ինչպես՝ ֆերմերատոնեսուրյուն, խուսորագիտուրյուն և այլն:
Վերջապես հայերեն հոմանիշը չունեցող բառերի թարգմանու-
թյան երրորդ միջոցը ռուսական կամ օտար բառի ըստ իմաստի
բառացի փոխադրությունն է հայերեն լեզվի, ինչպես՝ պօնդուկ—
օրումօտկ, օրաբանվոր, сливкомер—սերաչափ, խեցորուկ—
հացամբերք, պոդկլաս—ենթապատկորք, պոդկլինիտ—ընդսեպել,
չլեբօրեզ—հացակորիչ, պրոտիօգազ—հակագազ, պարօզ—շոք-
չարշ և այլն:

Այսպես երբ մենք համեմատում ենք ռուս-հայերեն բառա-
րանները, նկատելի է զառնում ռուսերենի մեծ դերը հայերեն
լեզվի դարձացման մեջ, արտահայտված բառարանային գրա-
կանության միջոցով:

Հայերեն դրական լեզվի մեջ ռուսերենի խաղացած բարե-
բար գերի մասին լավ գաղափար կազմելու համար վերցնենք
մերջին 50-ամյակում կազմված ընդհանուր բնույթ կրող հայ-

ոռուսերեն երեք բառարան և կաղմանք համեմատական աղյուսակ, որ կներկայացնի հետեւյալ պատկերը.

Հայ ռուսերեն բառարան	Լ. Ռ. Ա. Ա. Ա. Ա. Ա. Ա. Ա.	Գրալար Հայերեն		Նորակերտ		<i>n</i>	<i>e</i>
		Բառ.	%	Բառ.	%		
		Առաջնային	Վերաբերյալ				
Յաղուրչանի (1891)		105	72	68,6	22	20,9	
Դաղբաշյանի (1911)		215	108	50,2	38	17,7	
Դարիբյանի (1947)		177	78	44,1	35	19,7	

Աղյուսակային այս ավյալներից նկատում է, որ Դաղբաշյանի հայ-ռուսերեն բառարանում հայերեն և հայերենակերտ բառերը կազմում են 68,4 %, իսկ Լեզվի հնատիտուտի հրատարակած բառարանում այդ %-ը բարձրանում է 70,5 %-ի¹ և ընդհակառակը, Դաղբաշյանի բառարանի բարբառային և թուրքերեն բառերի 24,8 %-ի փոխարեն նոր բառարանը ունի ընդգամենը 2,8 %². Վերջինիս հաշվին նոր բառարանում աճել է միջազգային գործածություն ունեցող բառերը, որ անցել են մեր լեզվին ռուսերենի միջոցով, ինչպես ազնաւոր, ազիտագիտա, անայպես, սամուրայ, կոլխոզ, սալիտ և այլն:

Թուսերենից և ռուսերենի միջոցով կատարված գրական բառափոխառությունները կրում են ավելի գիտական, կուլտուրական, քաղաքական բնույթ, մինչդեռ ժողովրդական փոխառությունները կենցազային բառեր են: Վերև բերված աղյուսակից պարզ երեսում է, որ մեր լեզուն աղատվում է թուրքերեն բառերից, ինչպես և նեղ բարբառայնությունից և հարստանում է հայերեն նորակերտ և միջազգային բառերով: Թուսաց լեզվի ծառայությունն այստեղ այն է, որ հայ լեզուն աստիճանաբար զուրս է բերում նեղ, ծխական սահմաններից, ազատում արևելյան շաղբայից և դաւրս բերելով միջազգային ասպարեզ, հաղորդակից գարձնում ռուսական բարձր կուլտուրային:

Այս տվյալներին զուգընթաց չափազանց կարեոր խնդիր է պարզել, այսպես կոչված, բառի կյանքը, բառի գործածության

¹ Կիսուատը բառերը ևս հաղվում ենք նորակերտ բառերի մեջ:

² Ա. Դարիբյանի բառարանը նախորդների հետ համեմատած իբրև համառական է:

ժամանակաշրջանը և նրա արտահայտությունը հայուսներին բոլորաններում։ Այդ ցույց տալու համար դարձյալ դիմենք

Բ Ե Ց

Կիսուառար		Միջաղղային բառեր		Բուսերեն		Բարբառային		Բուլղրերեն	
Բառ	%	Բառ	%	Բառ	%	Բառ	%	Բառ	%
—	—	—	—	—	—	10	9,6	1	0,9
1	0,5	16	7,4	—	—	47	21,9	5	2,9
12	6,7	46	26,0	1	0,5	4	2,3	1	0,5

վիճակագրական տվյալների։ Նոր Հայկապյան բառարանը և Խուզարաշյանի, Յաղուրյանի, Դաղբաշյանի ու Դարիբյանի հայուսներեն բառարանները Առաջ և Գլախ, տառերի միջև ընկած հատվածում միասին գործ են ածել 205 բառ-հոդված, որից մեկական անդամ 123 բառ, այսինքն ընդհանուր բառապաշտը 60 % -ը, երկուական անդամ՝ 45 բառ կամ 22 %, 3-ական անդամ՝ 14 բառ կամ 6,8 %, 4-ական անդամ՝ 10 բառ կամ 4,9 % և 5-ական անդամ՝ 13 բառ կամ 6,3 %։ Ասորեն տալիս ենք ըստ բառարանների համեմատական աղյուսակ։

Բառարան	Առաջնային գործառնություն	Բ Ե Ց									
		մեկական անդամ		երկուական անդամ		երեքական անդամ		չորսական անդամ			
		Բառ	%	Բառ	%	Բառ	%	Բառ	%		
Հայկապյան դրաբար.	88	29	38,0	28	31,8	10	11,4	8	9,1	13	14,7
Խուզարաշ- յան	62	8	12,9	22	35,5	10	16,1	9	14,5	13	21,0
Յաղուրյան	35	3	8,6	5	14,3	6	17,1	8	22,9	13	37,1
Դաղբաշյան	88	29	33,0	23	26,2	13	14,7	10	11,4	13	14,7
Դարիբյան	87	54	62,1	12	13,8	3	3,4	5	5,7	13	15,0
Ընդամենը	360	123	60,0	45	22,0	14	6,8	10	4,9	13	6,3

Այս աղյուսակից պարզ երևում է սովետահայ լեզվի կատարած թռիչքը: Վերջին բառարանում մեկական անգամ գործածված, այլ կերպ ասած՝ նոր, ժամանակի տնտեսական, քաղաքական, կուլտուրական կյանքն արտացոլող նորագանությունները կազմում են ընդհանուր բառապաշտարի 62,1 % -ը:

Հայութուսերեն բառարաններում բառ-հոդվածի «կյանքի» ընթացքը ավելի դիտողական դարձնելու համար որպես նըմուշ վերցնենք մի բառախուժը և տեսնենք, թե ինչպիսի բառեր են ժամանակի ընթացքում դուրս մնացել բառարաններից և ինչ նոր բառեր են ավելացել:

Բառ-հոդված	Հայկակ-յան	Խուզա-բաշյան	Յաղուբ-յան	Դաղբաշ-յան	Դարիկ-յան
Պագ	-	-	+	-	+
Պազմել	+	+	-	+	-
Պազլուս	+	+	+	+	+
Պազոսել	-	+	-	-	-
Պազոսություն	-	+	-	-	+
Պազուք	-	-	-	+	-
Պազուք	+	-	-	-	-
Պազրհան	-	-	-	+	-
Պաթեմիկ	-	-	-	+	-
Պաթոս	-	-	-	-	+
Պալան	-	-	-	-	-
Պալապան	-	-	-	-	-
Պալասան	-	+	+	+	-
Պալատ	-	+	+	+	+
Պալարախություն	-	-	-	-	-
Պալարակապ	-	+	+	-	-
Պալարային	-	-	-	-	-
Պալարանալ	-	+	-	-	-
Պալարափուր	-	-	-	-	-
Պալարախություն	-	-	-	-	-
Պալարակապ	-	+	+	-	-
Պալարային	-	-	-	-	-
Պալարանալ	-	+	-	-	-
Պալարափուր	-	-	-	-	-
Պալիտախիչ	-	+	+	-	-
Պալիում	-	-	-	-	-
Պալադիս	-	-	-	-	-
Պալադիս	-	-	-	-	-
Պալատ	-	-	-	-	-
Պալլամաժ	-	-	-	-	-

Բառարանները իրենց ժամանակի արտահայտությունը լինելով՝ իրենց հերթին ուղի են հարթում լեզվի զարգացման, թարգմանական աշխատանքներ կատարելու համար:

«Ավետական հայաստան» օրաթերթի լեզվի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ մեր լեզվի ժամանակակից բառարանները հիմնականում ճիշտ են արտահայտում ժամանակակից հայերեն լեզուն:

Միւս-հայերեն և հայ-ուսուերեն բառարանների ուսումնասիրությունը ցույց տվեց, որ ոչ ճիշտ կազմության նորակերտ բառերի մի մասը կարճակյաց են և բառարանային սահմաններից գույք չեն դալիս:

Միաժամանակ նկատելի է, որ այսօր մեր լեզվի գործնական բառապաշարում նվազագույնի է հասել թուրքերեն և բարբառային բառերը ու աճել է հայերեն և միջազգային գործածություն ունեցող բառերի քանակը:

Հայ-ուսուական բառարանագրության ուսումնասիրությունը պարզում է, որ ուսաց լեզուն դարեր շարունակ լինելով երբեմն հարեան, երբեմն պետական լեզու, իր զգալի ազդեցությունն է թագել հայերեն լեզվի վրա, որպիսի երեսյթն իր արտացոլումն է դաել բառարանային գրականության մեջ։ Միաժամանակ՝ ուսաց լեզուն է եղել այն հիմնական օդակը, այն լուսավոր պողոտան, որի միջոցով ընթացել ու հաղորդակից ենք դարձել ուսուական և միջազգային առաջավոր կուլտուրային։

հայ-ռուսերեն և լուս-հայերեն բառարանների

Տեղական հայ	Հայերեն	Տարբերակ	Տարբերակ	Տարբերակ	Տարբերակ
1 Կ. Սարգսյան	Գիրք որ կոչի բանալի պիտութեան—Հայ-ռուսերեն և ռուս-հայերեն բառարան	Պետեր-բուրգ	1788	285	
2 Գ. Խոլետյան	Գիրք որ կոչի շամիդ լեզուադրտութեան—Հայ-ռուսերեն բառարան	Պետեր-բուրգ	1788	156	
3 Հ. Ալամզարյան	Համառոտ բառարան ի ռուսաց լեզուէ ի հայ	Մոսկվա	1821	287	
4 Ա. Թուղարացյան	Բառարան ի հայկական լեզուէ ի ռուսաց				
	Ա. հատոր Բ. հատոր	Մոսկվա	1838	618	
5 Կ. Պողոս	Համառոտ բառարան ռուսաց և հայոց	Մոսկվա	1841	128	
6 Մ. Էմին	Բառարբը ի հայկականէ ի ռուսաց բարբոռ	Մոսկվա	1849	149	
7 Գ. Երեցփոխյան	Բառարան ի ռուսաց լեզուէ ի հայ				
	Ա. հրատարակություն Բ. հրատարակություն	Թիֆլիս	1854	584	
8 Մ. Հախողատյան	Առձեռն բառովքքաւյիլ ի ռուսաց լեզուէ ի հայ.	Թիֆլիս	1879	672	
9 Ա. Հովհաննիսյան	Բառփիրք ռուսերենից հայերեն				
	Ա. Հատոր Բ. Հատոր	Թիֆլիս	1888	591	
		Թիֆլիս	1898	667	
10 Ս. Զелинский	Объяснительный словарь татарских, грузинских и армянских слов	Թիֆլիս	1889	165	
11 Կ. Յաղուբյան	Հայերեն-ռուսերեն բառարան	Թիֆլիս	1891	464	

№	Հեղինակ	Գրքի անունը	Տպագր.	Տպագր.	Քայլ
			վայրէ	վայրէ	էջ
12	Խ. Հովհաննիսյան	Հայ-ռուսերեն բառդիրք (հավիրմած եղիշելի պատմության)	Մոսկվա	1893	55
13	Ե. Մառ	Բառարան հայ-ռուսերեն	Գետերբ-բուրգ	1893	110
14	Հ. Արտապահյան	Ծոցի ռուսերենից հայերեն բառարան	Ալեքպու	1895	410
15	Հ. Տեր-Աբրհամյան	Նոր բառդիրք հայերեն գրաբարէ աշխարհաբար ինդուի, ռուսերեն թարգմանությամբ	Թուստով	1898	1150
16	Հ. Դաղրաշյան	Լիակատար ռուս-հայերեն բառարան Ա. հրատարակություն Բ. հրատարակ. (թերատիպ) մինչև դաստիարակություն	Թիֆլիս	1906	1221
			Թիֆլիս	1927	262
17	Հ. Դաղրաշյան	Լիակատար հայ-ռուսերեն բառարան	Թիֆլիս	1911	728
18	Հ. Թումանյան	Բուռս-հայերեն բառարան Ա. հրատարակություն Բ. հրատարակություն	Թիֆլիս	1907	403
			Թիֆլիս	1913	662
19	Հ. Թումանյան	Հայ-ռուսերեն բառարան	Թիֆլիս	1910	440
20	Տ. Հովհաննիսյան Ս. Մալիխասյան Մ. Աբեղյան և այլք	Բուռս-հայերեն իրավաբանական առձեռն բառարան	Թիֆլիս	1919	100
21	—	Բուռս-հայ իրավաբանական բառարան	Երևան	1924	173
22	Վ. Արծրունի	Բուռս-լատին-հայ բժշկագիտական բառարան	Երևան	1924	262
23	Մ. Աբեղյան	Բուռս-հայերեն ռազմական բառարան	Երևան	1924	720
24	Մ. Մալիխասյան Ե. Մամիկոնյան Ե. Տեր-Միքայելյան և այլք	Բուռս-հայերեն բառարան Կրկաթուղային տերմինների	Թիֆլիս	1925	170

Հայ	Հեղինակ	Դրբեն անունը	Տպագրութ. վայրէլ	Տպագրութ. թիւլ	Քանակ
25	Ա. Մալխասյան Ն. Մամիկոնյան Ն. Տեր-Միքայելյան և այլք	Հայ-ռուսերեն բառարան երկաթուղային տերմինների	Թիֆլիս	1925	149
26	Մ. Տեր-Հովհակիմյան	Համառոտ ռուս-հայերեն բառարան առևտրա-հաշվա- պահական տերմինների	Երևան	1927	88
27	Հ. Աճառյան Հ. Զարդարյան Հ. Հակոբջանյան և այլք	Ռուս-հայերեն բառարան շինարարական կառուց- վածքների	Երևան	1928	302
28	Վ. Փոթեյան	Ռուս-հայերեն աշխատան- ցային բառարան Ա. հրատարակություն	Երևան	1931	122
		Բ. հրատարակություն	Երևան	1934	236
29	Ա. Լոգինով Հյուսեին Զագի	Ռուս-հայկական բառարան	Բագու	1933	28
30	Ա. Լոգինով Պլեշչունով	Ռուս-հայկական բառարան	Բագու	1933	32
31	Պ. Սոտնիկյան Ե. Տեր-Մինասյան Վ. Փոթեյան և այլք	Ռուս-հայերեն նոր բառա- րան Ա. հատոր Բ. հատոր	Երևան	1933	1166
			Երևան	1935	1724
32	Մ. Աբեղյան Լ. Հովհաննիսյան Ա. Ղազարյան Ա. Տեր-Պողոսյան	Անատոմիական տերմինա- բանական բառարան (ապա- կետիլ)	Երևան	1934	112
33	Մ. Կարաքեշիջյան Ա. Մարտիկյան Մ. Միկթարյան	Ռուս-հայերեն համառոտ բառարան	Երևան	1934	504
34	—	Նեվրաբանական տերմին- ներ, սուս-հայ բառարան	Երևան	1936	84
35	Ա. Արարատյան Բ. Շատուրյան Բ. Քոչարյան	Ռուս-հայերեն բուսաբանա- կան տերմինների բառարան	Երևան	1941	179

ՀԱՅ	Հեղինակ	Դրբի անունը	Տպադրություն	Տպադրություն	Քանակ
36	Ա. Դարիքյան և ուրիշներ	Խուս-հայերեն համառոտ ուղղական բառարան	Երևան	1941	312
37	Մ. Կարաքելչյան Ա. Սարատիլյան	Խուս-հայերեն դպրոցական բառարան	Երևան	1941	524
38	Ա. Դարիքյան Ե. Տիր-Մինասյան Մ. Գևորգյան	Խուս-հայերեն բառարան	Երևան	1945	528
39	Ա. Դարիքյան Ե. Տիր-Մինասյան Մ. Գևորգյան	Հայ-ռուսերեն բառարան	Երևան	1947	379

ՑՈՒՑԱԿ

ռուսերեն լեզվով միջնորդված բառարանների

1	Տ. Գրիգորյան	Բառեր և խոսակցություններ Յլեզվե—առճկերեն-հայ- երեն-հունարեն-ռուսերեն- գաղղիերեն-իտալերեն-գեր- մաներեն-անգլերեն	Կ. Պոլիս	1870	47
2	Ի. Պատկանյան	Ժողովածույթ օտարադպի բառերի նոր-նախիջևանցոց լեզվի մեջ մտած	Պետեր- բուրգ	1870	32
3	Լ. Տիգրանյան	Բառարան բժշկական բույ- սերի, լատիներենից հայե- րեն-ռուսերեն	Երևան	1883	16
4	Ե. Սահակյան	Անգլո-ռուս-հայկական բա- ռարան	Բագու	1919	159

ՑՈՒՑԱԿ

ռաւս-հայերեն թերատիպ բառարանների

1	Ի. Պատկանյան	Ռուս-հայ բառարան (մինչև բեզմինչեած բառը)	Մոսկվա	1860	16
2	Մ. Բերոյան	Ռուս-հայերեն-գաղղիերեն բա- ռարան (մինչև գաձի բառը)	Պետեր- բուրգ	1861?	244

